Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9. Unterprimaner

Pläger

1901

891.99
V-94

891.542-2
Ս-379

19 NOV

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ

ՊԷՊՕ

ԿՕՄԵԴԻԱ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ուղղած

ԹԻՖԼԻԶ
Արագատիպ Մն. Մարտիրոսեանցի.
Միքայէլեան փողոց, № 81.
1901

ՊԷՊՕ

ԿՕՄԵԴԻԱ

Առաջին անգամ ներկայացրած է Թիֆլիզի քաղաքային Թատրոնում՝ 1871 Թուի Ապրիլի 30-ին։

Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ—СССР
им. А. Мясникяна

0 7 AUG 2013
56.308
891.99
U-94
Ար
Հ-ՀԱՅ.ԼԵՌ
ԸՍ-Ս
138355

ՊԷՊՕ

ԿՕՄԵԴԻԱ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ուղղած

ԹԻՖԼԻԶ
Արագատիպ Մն. Մարտիրոսեանցի.
Միքայէլեան փողոց, № 81.
1901

Дозволено цензурою. Тифлисъ, 7 Января 1901 г.

ՄԵԾԱՐԳՈՅ

ՊԱՐՈՆ ԳԷՈՐԳ ՀՄՀԿԵԱՆԻՆ

ՆՈՒԷՐ

ՀԵՂԻՆԱԿԻՑ

ՍԻՐԵԼԻ ԳԷՈՐԳ.

Դու վաղուց խնդրում էիր ինձ՝ «մէկ բան գրել թատրոնի համար մեր Թիֆլիզի պաժարնիների կեանքից»։

Երկար ժամանակ ես չէի կարողանում գտնել նիւթի առարկայ, թէեւ քո պատուէրը երբէք մտքիցս չէր հեռանում։

Բայց պատահմունքը վճռեց գործը։

Մէկ օր թատրոնում ներկայացնում էին հանգուցեալ Փուղինեանցի Մ՚օլիէրից փոխադրած «ՎՈՒՐ ՏՐԱՔՎԻՍ, ՊԻՏԻ ՊՍԱԿՎԻՍ» կատակերգութիւնը, որի մէջ դու կատարում էիր Շամիրի դերը։

Քո հագուստը, դէմքը, շարժուածքը, խաղը, ձայնը այն դերի մէջ, յանկարծ մտքումս ծագեցրին հարց թէ՝ ինչպէս կը վարուէր Շամիրի նման մարդն այնպիսի դէպքում, երբ մեր հարստահարողներից մէկը փող պարտ լինէր նրան եւ չկամենար ճանաչել իր պարտքը։

Պէպօի հիմը գցուեց, մնացածն ինքն ըստ ինքեան եկաւ. նամանաւանդ այնպիսի մէկ դիպուած, որ այն ժամանակներում ես անձամբ փորձել էի (մէկ հարուստ ինձ տուած խօսքն

ուրացել էր), արդէն նախապատրաստել էր իմ գլխում Պէպօի հակառակորդի պատկերը։

Կազմելով հետզհետէ երեւակայութեանս մէջ պիէսի կապը եւ նրա հերոսների տիպերը, ես ի նկատի ունեցայ, որ այն դասի մէջ, որի զանազան ներկայացուցիչներին այստեղ արհամարհանքով անուանում՝ են *պաժարնի, լոթի, կիլնոս*, կան մարդիկ, որոնք իրանց բարոյականութեամբ, մեծահոգութեամբ եւ վեհանձնութեամբ կարող են օրինակ լինել շատ եւ շատ բարձր դասին պատկանող մարդկանց։ Այս պատճառով Շամիրի բնաւորութիւնը պիէսումս մարմնացաւ Կակուլու մէջ. իսկ նրանից բարձր տիպը՝ միեւնոյն դասի, ես իմ կարողութեան չափ աշխատեցի ցոյց տալ Պէպօի մէջ։

Երբ ես մեծաւորապէս պատմեցի քեզ Պէպօի բովանդակութեան գլխաւոր միտքը, այն օրից սկսած՝ դու էլ ձեռք չվեր առար ինձանից. ստուերի պէս հետեւում էիր ինձ՝ աշխատելով շուտով եւ շուտով հանել իմ գլխից քո սիրեկան Պէպօին եւ գրչի տալ իմ խօսքերը։

Եւ ահա 1870 թուի սկզբում, դու, ըստ սովորականին, վեր առար թուղթ ու գրիչ, եւ ես սկսեցի թելադրել քեզ Պէպօն, որը թէեւ շուտով ընդմիջուեց, բայց յիշեալ թուի յուլիս ամսին միեւնոյն ձեւով շարունակուեց եւ վերջացաւ Կրծանիսում։

Թերթելով այժմ Պէպօի սկզբնական օրինակը, ես գտնում եմ, որ համարեա ամբողջ պիէսը քո ձեռքով է գրուած, բացի մի քանի տեսիլներից, ուր քո բացակայութեան ժամանակ օգնել են ինձ Պ. Զաքարիա Բաբանասեանցը եւ մեր թատրոնի տաղանդաւոր աշխատակից Պ. Յովհաննէս Ամերիկեանը։

Շնորհակալութիւն յայտնելով յիշեալ անձանց, նամանաւանդ Պ. Ամերիկեանին, որ ուրիշ շատ անգամ եւս օգնել է ինձ իմ թատրոնական ասպարիզում, ես չեմ կարող մոռանալ այն աշխատանքն ու անձնանուիրութիւնը, որ դու կրել ես՝ թէ ներկայ հեղինակութեանս եւ թէ այլ գրուածներիս մեծ մասի մէջ։ Բայց առայժմ խօսքս միայն Պէպօի մասին է։

Քանի՛ եւ քանի անգամ գործդ թողած ամարային շոգ պապանաքին, ոտով եկել ես եւ գնացել Կրծանիս. քանի՛ եւ քանի անգամ

հետդ խորհրդակցել եմ, օգուտներ քաղել քո խորհուրդներից եւ ճանաչացրել քեզ իմ ծանր ու բարակ մասլահաթներով. քանի՞ եւ քանի անգամ ամբողջ ժամերով, գրիչը ձեռքիդ, անշարժ նստած ես եղել սեղանիս առաջ՝ ձեւացնելով քեզ մէկ գրող մեքենայ, երբ ես հեղինակելով՝ բոլոր իմ շարժուածքների ազատութիւնն եմ վայելել. քանի՞ եւ քանի անգամ երբեմն արագութեամբ թերթեր ես լցրել իմ խօսքերով եւ ստէպ-ստէպ հաճութիւնդ ցոյց տալով, ոյժ ես տուել ինձ շարունակելու, երբեմն էլ յօնքերդ տօթելով՝ կամ տասն անգամ կրկնել ես միեւնոյն վերջին խօսքերս կամ լուռ ու մունջ մնացել, առանց մէկ բառ արտասանելու՝ կամենալով արգելք չդնել մտքիս ընթացքին։ Ո՞վ իմանայ՝ ինչ մտքեր են ծագել քո մէջ այն ժամանակ, ինչ մտքեր ես կլանել, ինչ մտքեր զոհել, երբ ես, ուղեղս փորելով, աշխատելիս եմ եղել իմ միտքն ընդարձակել, իմ միտքը գեղեցկացնել։ Մ՚իով քանի՞՝ քո կամքը ենթարկել ես իմ կամքին, քո սովորութիւններն իմ սովորութիւններին, քո ժամանակն իմ ժամանակին, քո աշխատանքն իմ աշխատանքին. եւ այս բոլորը, բոլորը միայն նրա համար, որ Պէպօն շուտով լոյս տեսնի, դու քո սիրեկան թատրոնի համար մէկ նոր պիէս ճարես։

Մ՚տաքերելով անցեալը, մտաքերելով այն ժամերը, երբ Պէպօն գրվում էր, երբ մեր մտերիմ խօսակցութեան մէջ Պէպօից մենք անդադար անցնում էինք դէպի նրա եղբայրակիցները, նրանցից դէպի ժողովուրդը, ժողովրդից—ազգը, ես խոստովանում եմ որ այն ժամերը միշտ կը մնան իմ կեանքիս ամենաերջանիկ ժամեր։

Յիշո՞ւմ ես, սիրելի Գէորգ, այն առաւօտները, երբ արեգակը, գլուխը դուրս բերելով հեռու հորիզոնում, մէկ սոանձին լոյս էր թափում ծառերի տերեւների ու դիմացի սարի վրայ, մինչդեռ հազարսւոր թռչունների կանուխ երգը, շատ անգամ՝ խօսքս բերանիս կիսակտուր թողնելով, տանում էր մեզ կարծես ուրիշ աշխարհ։ Յիշո՞ւմ ես բարեկամների այն փոքրիկ խումբը, որ շարունակ հաւաքվում էր իմ ընտանիքում, այն հնաքները, ծիծաղը, ուրախութիւնը, Նագօրի հրեւակայական «սա-

ոի օմքնիրը», Եօվանէի ճիանուրը, խեղճ Եավանգուլի բայաթիները, ծկնորս Լօփիանի պարը, քո արհեստալի բարբարոսական եղանակով՝ «ինձ ոռ իմ սիրնկան ետրին», Ամերիկեանի երգերը, նրան ընծայած սարսափելի փունջը, եւ այլն եւ այլն... Բոլորն ունէր իր գեղեցկութիւնը, իր հիացքը, մինչեւ անգամ այն անտանելի սեւ միջատների անթիւ զօրքը, որ մոմի առաջ հաւաքուելով մեր գլխին, մանաւանդ քո գլխին, շատ անգամ առիթ էին լինում Պէպօի թերթերը ցիր ու ցան անելու։

Ցիշում ես դու Թէլէլի այն բազմաթիւ ուխտաւորներին, որոնք փիւրակի առաւօտները ժամը չորսից սկսած, ներկայացնելով իրանցից մէկ գեղեցիկ գունաւոր ժապաւէն, անցնում էին մեր բնակարանի առաջից եւ բարձրաձայն պատմում միմեանց իրանց վշտերը։ Քանի՞ իսկական Շուշան եւ Կէկէլ, քանի՞ յատուկ Պէպօ եւ Կակուլի ենք տեսել նրանց թւում։ Ես երբէք չեմ մոռանալ այն խօսքերը, որ մէկ կին, նայելով մեր սատշգամբին, ասաց իր ընկերուհուն. «Է՞ստի ֆոիկ, սրանք բաղումն էլ դիւաններով ին, 'ես լի տանս մէ կոտրած սկամի էլ չունիմ», եւ այս դառը խօսքերը նա կընքեց ուրախ ծիծաղով, կարծես թէ խեղճի ուրախութեան աղբիւրը նրա խեղճութիւնը լինի։ Քանի՞ այսպիսի դատողութիւններ են արտայայտել նրանք, քանի՞ մտքեր են զարթեցրել նրանց գանգատները։ Ճշմարիտն ասած, տեսնելով այդ մարդկանց, լսելով եւ համակրելով դրանց, հարկաւոր էր ինձանից շատ եւ շատ վարպետ նկարիչ, որ կարողանար արժանաւոր գոյներով նկարել դրանց։ Բայց երբ մարդ ապրելով ժողովրդի մէջ, նրա ուրախութեան հետ ուրախանում է, նրա տրտմութեամբ տրրտմում, եւ այս զգացմունքները նա կարողանում է փոքր ի շատէ պատկերացնել, այդ էլ, արդարեւ, մեծ բաւականութիւն է։

Ինչ եւ իցէ, ժամանակը հասաւ. Պէպօն ներկայացրիք Թատրոնում առաջին անգամ 1871 թուի Ապրիլի 30-ին։ Պէպօի դերը դու ինքդ կատարեցիր եւ կատարում ես ցարդ՝ քեմի վրայ։ Դու տուիր նրան շունչ եւ կենդանութիւն, քո խաղը գերազանցեց գրուածքից. իսկ Պ. Ամերիկեանը, որ ներկայացնում էր Պէպօի հակառակորդի պատկերը, եւ միւս մասնակցող

անձինք իրանց հանճարաւոր խաղով օգնեցին մեզ աւելի պարզ ցոյց տալու հարստահարուած Պէպօի համակրական ոգին։

Այն ծափահարութիւնը, այն ընդունելութիւնը, որ առաջին ներկայացման օրը ստացայ հանդիսականներից թատրոնում, ես արդէն բաժանել եմ քեզ եւ քո ընկերների հետ։ Այժմ թոյլ տուր ինձ, սիրելի Գէորգ, խնդրել քեզ՝ ընդունել եւ այս նուազ նուէրս իբրեւ յիշատակ քո չափազանց աշխատութեան եւ հարկ՝ քո անսահման սիրոյն դէպի մեր թատրոնը։

Քո Գաբրիէլ Սունդուկեանց։

ԹԻՖԼԻԶ
6 նոյեմբերի 1876 թ.

ՊԷՊՕ

ԿՕՄԵԴԻԱ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

Թիֆլիզի Թատրոն, 30 Ապրիլի 1871 թ.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱՐՈՒԹԻՆ, հարուստ վաճառական . Պ. ԱՄԵՐԻԿԵԱՆ †
ԷՖԷՄԻԱՅ, Արութինի երկրորդ կինը . Տ. ԱՆԱՀՏ
ՊԷՊՕ, ձկնորս. . . . . Պ. ՉՄՇԿԵԱՆ
ՁՈՒԶԱՆ, Պէպօի մայրը, այրի կին . Տ. ԱՐԱՄԵԱՆՑ †
ԿԷԿԷԼ, Պէպօի քոյրը . . . . . Օր. ԹԱԳՈՒՀԻ †
ԳԻՔՕ, Պէպօի ազգական . . . . Պ. ՄԻՐԱՂԵԱՆՑ †
ԿԱԿՈՒԼԻ, Պէպօի բարեկամ . . . Պ. ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆՑ
ԳԻԳՕԼԻ, Արութինի դուքնի աշկերտ . Պ. ՄԱՆԴԱԿՈՒՆԻ †
ՍԱՄՍՕՆ, Արութինի տանու ծառան . Պ. ՏԻՐ-ԱՍԱՏՈՒՐԵԱՆ†

Երկու այլ ծառայ Արութինի տանը։

Առաջին եւ երրորդ արարուածները կատարվում են Պէպօի տանը, իսկ երկրորդը՝ Արութինի տանը։

Անցքը պատահում է Թիֆլիզում 1870-ին։

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՑ

ԱՐՈՒԹԻՆ. 60 տարեկան, միջին հասակով և կազմուածքով. երեսը կարմիր, լիքը և ածելած: Սև ներկած կարճ մազեր, հաստ յօնքեր և խուզած բեխեր: Եւրոպական հագուստ. սպիտակ շապիկ, գունաւոր՝ փողպատ, ժիլէտ և պանտալօն: Սև սերթուկ և գլխարկ-ցիլինդր: Ոսկէ ժամացոյց ոսկէ շղթայով: Գործ է ածում գունաւոր մետաքսեայ թաշկինակ, փոքրիկ դեղին սաթէ համրիչ և ծոցի մէջ պօրտմոնէ: Շարժուածքը, ման գալն ու խօսուածքը ծանր: Ըստ երևոյթին պատուաւոր անձն:

ԷՓԷՄԻԱՑ. 30 տարեկան, գեղեցիկ և վայելչակազմ կին շէկ մազերով: Եւրոպական մօդայի ամենաշքեղ բաց-կապոյտ հագուստ, վրացնակ գլխով (չիքիլայ, ոսկեկար ճակատի աղուխ և այլն): Զարդարուած է ոսկէ ժամացոյցով, երկար շղթայով և զանազան ակնեղէններով: Պարանոցին ունի կարմիր բանտ: Խօսակցութիւնը, շարժուածքը և ման գալը արագ ու կրակոտ: Շատ է քրքրվում:

ՊԷՊՕ. 35 տարեկան, թուխ և գեղեցիկ դէմքով, բարձր հասակով, ամուր կազմուածքով և լայն կրծքով: Սև կարճ մազեր, ճակատի վրայ բերած. բարակ

յօնքեր և բեխեր. երեսն ածելած։ Ունի երկու ձեռք Թիֆլիզի բուն լօթու հագուստ՝ մինը հասարակ, միւսը զարդի։ Առաջինն է՝ չթէ կամ սպիտակ շապիկ, մուգ-կապոյտ դօշլուղ, սև զայթանով բոլորած. սև նաշուրի արխալուխ։ Լէգղու սև շալից չօխայ առանց զարդարանքի. միևնոյն շալից լայն շալուար, ծայրերի ներսի կողմը զանգեալի մէջ շարշուրաղով ամրացրած. սև զափազաւոր լափչիքներ, արծաթէ նեղ քամար, կարմիր մորթէ երկար գդակ, ծայրը փոքր ինչ ներս ծալած. կարմիր բամբակէ թաշկինակ։ Զարդի հագուստն է՝ մետաքսեայ կարմիր դօշլուղ և սև արխալուխ, երկուսն էլ բարակ ոսկեթելով բոլորած։ Դաւայիւնի դեղին չօխայ, սև լայն շափարիշով զարդարած. նոյն կտորից լայն շալուար, ծայրերը վերոյիշեալ ձևով ամրացրած. սպիտակ զափազաւոր լափչիքներ կանանչ զայթաններով. Բուխարու սև գդակ, ծայրը կտրած. մետաքսեայ Իմերէթու գօտիկ, կապոյտ բամբակէ թաշկինակ։ Քայլը հաստատ, ձայնը քաղցր և ազդու, շարժուածքն ու խօսակցութեան ձևերը բուն ժողովրդական։

ՁՈՒՁԱՆ. այրի կին 50 տարեկան, միջին հասակով և հաճելի դէմքով։ Վրաց հասարակ հագուստ, մէ տակ (ցածը կապած) գլուխ (ճակատի սև աղլուխ, սպիտակ հաստ լաչաք, սև փաթաթելու)։ Սև հասարակ տերնոյից կամ ալպակայից դէրիայ, կուրծքը ծածկած։ Հասարակ սև շալ։ Տանից դուրս գնալու ժամանակ գործ է ածում սպիտակ դաթիրայ։

ԿԷԿԷԼ. 18 տարեկան, միջին հասակով, թարմ, գրաւիչ դէմքով, սև երկար մազերով։ Վրացնակ հասարակ հագուստ (ճակատի աղլուխ, չիքիլայ, չթէ դէրիայ և այլն)։ Ձայնը քաղցր, շարժուածքը համեստ։

ԳԻՔՕ. 65 տարեկան, միջին հասակով, փոքր ինչ մէջքը ծռած։ Սպիտակ մազեր և բեխեր, երեսն ածելած։ Վրաց հագուստ՝ սպիտակ շապիկ, կուրծքը սև զայթանով բոլորած, սպիտակ զալամքարէ կամ մուգ-կապոյտ նաշուրի արխալուխ, սև մահուդէ կարայ և լայն շալուար։ Խարազի սև լափչիքներ ցածը կրնկներով, Բուխարու սև գդակ, ծայրը ներս ծալած. հասարակ շալէ կամ կապոյտ զանաւուղէ գօտիկ։ Գործ է ածում ձեռնափայտ, քթախոտ և կապոյտ չթէ թաշկինակ։ Ման գալը, շարժուածքն ու խօսակցութիւնը չափից դուրս դանդաղ։

ԿԱԿՈՒԼԻ. 25 տարեկան, հասակով փոքր ինչ ցածը Պէպօից։ Երեսը կարմիր և գեղեցիկ. սև մազեր, ճակատի վրայ բերած. բարակ յօնքեր, բարակ բեխեր և նօսր կարճ մօրուք։ Թիֆլիզի բուն պաժառնու կամ կինտոյի չքեղ հագուստ՝ մաւի մորթէ մեծ գդակ Բագուի ձևի, կարմիր մետաքսեայ շապիկ և դօշլուղ. կապոյտ կամ սև զանաւուղէ արխալուխ։ Քօրաչու սև շալից կարճ և չաքերով չօխայ. միևնոյն շալից լայն շալուար, ծայրերը զանգեալում կամ պաճիճում բոլորովին ամրացրած։ Դօշլուղը, արխալուխը և չօխան ամենաշքեղ ձևով զարդարուած են կլապիտոնէ լայն բաֆթաններով։ Լէգղու երկար ճտերաւոր չուստիներ, բարակ ոսկեթելով բոլորած. արծաթէ լայն քամար, Բաղդադի թաշկինակ։ Ձայնը, շարժուածքն ու խօսակցութեան ձևերը կոշտ։

ԳԻԳՕԼԻ. 25 տարեկան։ Վրաց հասարակ հա-

գուսա՝ սպիտակ չթէ արխալուխ, կրծքի կոճակները մէջ գցած, սև մահուդից կաբայ. նոյն մահուդից կամ սպիտակ պարուսինից շալուար. արծաթէ նեղ քամար. ձեռքին գլխարկ-ֆուրաշկայ։

ՍԱՄՍՕՆ. 18 տարեկան. սև երկար մազեր, եւրոպական ձևով սանդրած։ Եւրոպական սպիտակ շապիկ, հասարակ չթէ արխալուխ, կրծքի կոճակները բաց, նեղ քամար և գունաւոր նեղ շալուար։ Ցեռոյ Զերքէզի շքեղ հագուստ՝ սօսանի ատլասէ արխալուխ, բոլոր կոճակները մէջ գցած. սպիտակ մահուդէ շերքէզկայ արծաթէ մասրաներով. նոյն մահուդից նեղ շալուար, ծայրերը կարմիր մահուդով։ Բոլոր հագուստը զարդարուած է կլապիտոնէ բաֆթաներով։ Եւրոպական փայլուն կօշիկներ, արծաթէ շքեղ քամար, արծաթապատ դաշոյնով։ Վառօդամանի կլապիտոնէ լայն բաֆթայ։ Բոլոր ժամանակ առանց գլխարկի։

ԵՐԿՈՒ ԱՅԼ ԾԱՌԱՅ՝ ֆրակով, սպիտակ ձեռնոցներով և առանց գլխարկի։

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Բեմը ներկայացնում է հին ձևի աղքատիկ սենեակ թարեքներով, դօլարներով, լուսամտով և երեք դռնով՝ աջ, ձախ և մէջ տեղը։ Ձախ *) կողմը դրած է գորգով ծածկած տախտ նահալիով և մութաքայով, իսկ աջ կողմը՝ հասարակ սեղան։ Սենեակի այս անկիւնում մի թոկ կայ կապած։ Դօլարներում և թարեքների վրայ դարսած են հինօրեայ պղնձէ, կաւէ ու փայտէ ամաններ։ Մի քանի հասարակ աթոռներ լրացնում են սենեակի զարդը։ Կէսօր է։

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՇՈՒՇԱՆ, տախտի վրայ նստած, զուլպայ է գործում,
ԿԷԿԷԼ, սեղանի մօտ աթոռի վրայ նստած, շտապով կար է անում։

ՇՈՒՇԱՆ

Ձիս իմանում, քա՛։

ԿԷԿԷԼ

Ա՛յ, էս էլ պրծնիմ, դէղի։

ՇՈՒՇԱՆ

Թո՛ղ, մէ քիչ դնջացի, ի՛ժում պրծի։

---

*) Աջ, ձախ՝ բոլոր գրուածում պէտք է ընդունել հանդիսականների դիրքից նայելով։

ԿԷԿԷԼ

Չի ըլի դէդի, Է՜, յօրէս տէրը գու քայ։

ՁՈՒՁԱՆ

Նրա աճկն էլ կարիմ. խիստ շատ է տալի։

ԿԷԿԷԼ

Բանն էլ էտ է, Է՜, դէդի. ինչրու նրա գալը դիփ հաղիը վուր չըլի, էլ թամամ գինը չի տա։ Խօ գիդիս ինչ անաստուձն է։

ՁՈՒՁԱՆ

Ախար աճկիտ լուսը խօ չիս կանա հանի. սաղ գիշիր, հէնց բռնէ, չիս քնի ու Ջեր*) վուրդի էր ծէքը, վուր էլի բանի նստեցար։

ԿԷԿԷԼ

Ի՞նչ անինք, դէդի, խղճի հացը էժան չէ ճարվում։

ՁՈՒՁԱՆ

Հէրիք արա, հէրիք, վուրթի։ Ջանդամը միր գըլուխը, վունցոր ըլի կու ապրինք։

ԿԷԿԷԼ

Էս սահաթիս, դէդի Ջան, ա՛յ. Աստուձ գիդենայ, քիչ է մնացի։

ՁՈՒՁԱՆ

Սաղ գիշիր Ջում-Ջումի բերիք ինձ՝ դուն մէ կուռը, քու ախպուր փիքրը մէկէլը։ (Լռութիւն։) Նա էլ ինչ էլաւ. իմքին բան չըլի էկի գլուխը։

ԿԷԿԷԼ, վախեցած։

Ի՞նչս ասում, դէդի. դանա էս անց էլ չէ մնացի դուսը գիշիրո՞վ։

---

*) Ջեր—դեռ. Ջէր—անգամ։

ՁՈՒՁԱՆ

Էս օր խիստ ուշացաւ, Կէկէլ. առանց էն առուտնիրը տուն է էկի ու հիմի յօրէս կէսօրի վուխտն է։

ԿԷԿԷԼ

Ի՞նչ հաջաթ, դէդի Ջան, էգէբա փողոցումը բան լուս ննգաւ։

ՁՈՒՁԱՆ, ոգոց հանելով։

Աստուձ անէ էտէնց ըլի, վուրթի. սիրաս գնում ու գալիս է... Ո՛վ գիդէ Ջուրը մինձացաւ, ո՛վ գիդէ իմքնի էդնէն ննգաւ ու ինքն էլ հիդը գնաց։

ԿԷԿԷԼ

Է՜, ինչի՞ը իս ասում, դէդի։

ՁՈՒՁԱՆ

Նրա գլխին էլ վուր մէ բան գայ, Ջուրն ածելու կու դառնանք։

ԿԷԿԷԼ

Աստուձ գիդենայ, անմիղ իս նիղանում, դէդի Ջան. էրեխայ խօ չէ, սիրաս էլ անմիղ չուռ ու մուռ իս բերում։

ՁՈՒՁԱՆ

Էսէնց էլ ապրիլ կուլի՞... Հախմիան Տէրն անէ քու դադաստանը, Ա՛րութին։

Դրսից ոտի ձայն է լսվում։

ԿԷԿԷԼ, ուրախ։

Ա՛յ, դէդի, յօրէն։

ՁՈՒՁԱՆ, ականջ դնելով։

Նա է՞։ (Դլուխը շարժում է։) Հէ՞։

ՏԵՍԻԼ Բ

ՆՐԱՆՔ, ԳԻՔՈ

ԳԻՔՈ, ներս մտնելով միջի դռնից, գլխարկը ծածկած եւ ձեռքին փայտ։

Բարի լուս ձիզ։

ՁՈՒՉԱՆ, տխուր։

ԱստՃու բարին, Գիքո... Համեցէք։

ԿԷԿԷԼ, վեր կենալով, Գիքոին գլուխ է տալիս, յետոյ առանձին։

Ամկս քիզ էր մնում։

Նստում է իր գործին։

ԳԻՔՈ, նստելով աթոռի վրայ Շուշանի մօտ։

Վունց իք, ինչ բարին հարցնինք։

ՁՈՒՉԱՆ

Փառք ԱստՃու, կանք։

ԳԻՔՈ

Է՜, փառք ԱստՃու։ Էս ուր է Պէպօն. ջեր չէ տուն էկի՞։

ՁՈՒՉԱՆ, վախեցած։

Հըա՛, իմքին խաբար կա՞յ։

ԳԻՔՈ

Հա՛, բան ունիմ ասելու։

ՁՈՒՉԱՆ, ծնգանը խփելով։

Վա՜յ, քոռանամ 'ես,*) ինչ խաբար է։

*) Ե տառը մակակէտով նշանակած ('ե) պէտք է արտասանել իսկ և իսկ այնպէս, ինչպէս արտասանվում է յի վանկը՝ բառի միջում կամ վերջում, ձայնաւորից յետոյ. օրինակ՝ Մա յիս, Գա յի անէ, երկնա յին, նսա յի, և այլն։

ԳԻՔՈ, ուղղուելով։

Ինչ խաբարը...

ՁՈՒՉԱՆ

Հա՛։

ԳԻՔՈ

Լաւ խաբար չէ, ՃուշանՃ։

ՁՈՒՉԱՆ, աւելի վախեցած։

Ի՞նչ է, խիխավիլ է։

Կէկէլը, կարը ՃողնելովՃ, վախեցած նայում է։

ԳԻՔՈ, զարմացած։

Ո՞վ է խիխավի, ինչ իք ասում։

ՁՈՒՉԱՆ

Պէպօն. բաս չէ խիխավի՞։

ԳԻՔՈ, երեսը խաչակնքելով։

Տէ՜ր օղորմած ԱստուՃ. էտ 'ես չիմ իմանում, ինչ իք ասում։

ՁՈՒՉԱՆ

Ախար իրիգուն կէս գիշիրին դամբը վիկալաւ, գնաց ու ջեր չէ տուն էկի։

ԳԻՔՈ

Վա՜, օխնած հոքի, վախեցայ. նա ինչ խիխավելու ահ ունէ։ Էն ինչ Քուռը պիտի ըլի, վուր նրան ախտէ։

ՁՈՒՉԱՆ

Բաս ինչ խաբար էիր ասում։

ԳԻՔՕ

Ինչ խաբար...

ՁՈՒՉԱՆ

Հա, մէ չուստ ասա, թէ Աստուձ կու սիրիս։

ԳԻՔՕ

Մուլափ, Է. մէ քիչ համփիրութին ունեցի, հէր օխնած։ Աստուձ շատ բանիր է գրի մարթու ճակատին՝ վախտ կայ ուրախութին, վախտ կայ տխրութին։

Գրպանից հանում է քթախոտի տուփը։

ԿԷԿԷԼ, առանձին։

Ինչկլի կօսէ, իմն ինձ կու հասնի։

ՁՈՒՉԱՆ

Միզ համա խօ զարթնի տխրութինը Աստուձ ուրիշ բան չէ տվի։

ԳԻՔՕ

Ի՞նչ անիս, Ձուշան, Աստձու ձեռին է ուրախութինն էլ, (Ցօրանջում է։) տխրութինն էլ... (Կրկին յօրանջում է եւ քթախոտ քաշում։) Հը՞մ... էէ՞, վունցոր Աստուձ գուզէ, էնէնց կուլի մարթու բանը։

ՁՈՒՉԱՆ

Նրա կամքն ըլի, ինչ անինք։

ԳԻՔՕ

Է՛տէնց է, էտէնց, Ձուշան... Ախար, էսօր առուտեհան լաւ բան չիմացայ. էլ չդնջացայ, ինչրու չըգնացի ու ձիր փեսի հիդ դէմուդէմը չխօսեցայ։ (Կէկէլին։) Ձատ հարց ու բարով արաւ քիզ, ա՛յ, Կէկէլ։ (Կէկէլը թեթեւ զլուխ է տալիս, առանձին աչքերը սրբում է եւ կարը շարունակում։) Խիստ իմ կարօտի, կօսէ... (Քթախոտ քաշելով։) Հը՞մ... էէ՞։

ՁՈՒՉԱՆ

Հալեցիր ու մաշեցիր խօմ, Գիքօ. մէ ասա՛ ու պրծի, էլի։

ԳԻՔՕ

Է՛ս սհաթիս, էս սհաթիս, Ձուշան... (Քթախոտ քաշելով։) Հը՞մ... հը՞մ... վօխա՛կ... Աստուձ, վուր մարթուն ստիղծիլ է, համփիրութինն էլ հիդն է տվի։

ՁՈՒՉԱՆ, առանձին։

Քու աճկն էլ։

ԳԻՔՕ, կրկին քթախոտ քաշելով։

Հը՞մ... էն էի ասում, վուր, (Կամենալով փռշտալ։) վուր, վուր, վուր (Փռշտում է։) ըա հրա՛։ (Կրկին կամենալով փռշտալ։) Ըա՛ ըա՛ ըա՛... (Փռշտում է։) ըա հրա՛։ Օ՛, հօ, հօ, հօ, հօ, ինչ բուռնութի է. խէր էկաւ, ա՛յ։

ՁՈՒՉԱՆ

Առուխչ ըլիս։

ԳԻՔՕ

Վուրթիքդ (Կամենալով փռշտալ։) ա ա ա ապրին, (Փռշտում է։) ըա, հրա՛...

ՁՈՒՉԱՆ, առանձին։

Ա՛յ, չօռ ու ցաւ, թէ խօսիս։

ԳԻՔՕ

Էս խէր ու կէս... (Կամենալով փռշտալ։) Էս էլ, էլ, (Կրկին փռշտում է։) ըա հրա՛... Էս էլ ջուխտ խէր... Կուլի վիրչը խէր ըլի։

ՁՈՒՉԱՆ

Քունը վունց խէրն իմացայ ջեր ու վունց շառը։

ԳԻՔՕ

Խէրն էլ ու շառն էլ Աստձու ձեռին է, Ձուշան։

(Քթախոտի տուփը գրպանը դնելով։) Օ՛հ, խիստ թէժ բուռնութի է էլի անիծածը։ Հազրէնը մէ ջէր չի պատահի, վուր բուռնութու վրայ փռշտամ. սմա էրևում է իմ սովոր բուռնութին չին տվի... 'Ղալբացու *) աշխարքը, Զուշան, ինչ անիս։ (Տուփը կրկին հանելով գրպանից եւ բաց անելով։) Իմքին խօ չկայ մէչը խառը։ (Տնդղելով։) Չէ, վունչիչ չէ էրևում։ Սրա, Զուշան, քու աճկը կուլի ուփրօ լաւ ըլի կարում։

ՁՈՒՇԱՆ, առանձին։

Քու աճկի պիպիկն էլ կարիմ։

ԿԷԿԷԼ, առանձին։

Պատիժ է։

ԳԻՔՕ

Մէ տիս, է, թէ Աստուձ կու սիրիս։

ՁՈՒՇԱՆ, առանձին։

'Ղաղաբ է... (Առնելով տուփը եւ տնդղելով։) Լաւ բուռնութի է էրևում. սմա, մէ ասա, թէ Սաիղծողը կու սիրիս, ինչ խաբար իս բերի... (Տուփը Գիքօի մօտ դնելով։) Հոքէներուս խօ հանեցիր։

ԳԻՔՕ

Տօ, ինչ խիստ իս շտապում։ Մուլափ տանք, էգէբա Պէպօն էլ վրայ հասնի, նրա բանն ուփրօ է։

Քիթը շարունակ սրբում է Թաշկինակով։

ԿԷԿԷԼ, առանձին։

Ճաշն էլ էստի է ուզում անուշ անի. մինք խօ խիստ շատ ունինք ուտելու, մնացիլ էր սա։

---

*) Ղ տառը մակակէտով նշանակած ('ղ) պէտք է արտասանել որպէս Պարսից կամ Թուրքաց ق կամ Վրացոց ღ։

ՁՈՒՇԱՆ, առանձին։

Բարիբան ննդնի քնթումդ։ (Գիքօին։) Ախար մէ խօսկ էլ է մայինց ասա։

ԳԻՔՕ

Գիդիս ինչ է, Զուշան. (Զայնը ցածրացնելով։) մէ ախչկատ դուս ղրդէ ախար, է։

ՁՈՒՇԱՆ, ցածր։

Նա իր բանին է, ինչ կու իմանայ, ցածը ասա։

ԳԻՔՕ

Վուր իմանայ լաւ չէ, Զուշան, է. չիս գիդի թէ Խիկարն ինչիր է ասում էստու վրայ։

ՁՈՒՇԱՆ

Խիկարն ով է, քա. նա էլ խառն է էստումը՞։

ԳԻՔՕ, ծիծաղելով։

Հը՞, հը՞, հը՞, հը՞... (Ծիծաղը դառնում է հազ։) Հո՜ւ, հո՜ւ, հո՜ւ, հո՜ւ...

ՁՈՒՇԱՆ, առանձին։

Ա՜յ, Աստուձու կրակ, թէ ասիս ու պրծնիս։

ԳԻՔՕ, հազը շարունակելով։

Խիկարը, հո՜ւ, հո՜ւ, հո՜ւ, հո՜ւ, փիլիսոփայ... հո՜ւ, հո՜ւ, հո՜ւ... (ՊԷՊՕՆ, կուլիսի ետեւից երգում է՝

«Զարա՜բը Զամ շուդա ասթ,
Զուրհի նադարադ,») *)

ԿԷԿԷԼ, առաջ վազելով եւ ուրախ։

Ա՛յ, Պէպօն։

---

*) Պարսկերեն է։ — Դինին Դամասկոսի է եղել,
Կասկածանք չկայ,

ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ, ՊԷՊՕ

ՊԷՊՕ, երգը շարունակելով, ներս է մտնում միջի դռնից՝ գլխարկով, հասարակ սեւ հագուստով, թեւքերը յետ ծալած, դամբը (ուռկան) ուսին եւ առջեւը գօտկից կապած կարմիր թաշկինակում կենդանի ձկներ։

«Արա՛զի քիշմիշ ասթ,
Բարդաը փիալա,
Գեալ այլաշ»։ *)

ԿԷԿԷԼ

Ամկէնեբուս խօ ջուր կտրեցիր, Պէպօ։

ՀՈՒՀԱՆ

Ինչի՞ գիդիս, տօ, կեհաս ու կու կորչիս։

ՊԷՊՕ, ուրախ։

Վա՛, էսէնց վուր չանիմ, Աստուա՛ մանանայ խօ չէ դէվէր դրգում միզ համա։ Օ՜, Գիքօ, լաւ վուխտն իս էկի։ Մէ մուրծէք ուտեցնիմ քիզ էս սհաթիս, վուր քէփդ գայ. ամա թէ քնթէտ բուռնուլթի իս կաթեցրի վրէն, էլ մէ թիքայ չիմ տուր տա, հա՜... (Հանելով մի մեծ ծուկ։) Արա՛... (Զկան պոչով Գիքօյի թշերին խփելով։) Օ՛, չէնի կի ճիրի մէ... Մէ թամաշա արա, է՜։

---

*) Պարսկերեն է։—Հիւթը քիշմիշի է,
Վեր առ, փիալա,
Թուրքերեն է։—Ե՛կ նստիր։

ԳԻՔՕ

Զանէս, չանէս, տօ։

Կէկէլը ծիծաղում է։

ՀՈՒՀԱՆ, ժպտալով։

Մէ մուլափ, տօ, ըմ դրօս հանաք է. բան էր խօսում։

ՊԷՊՕ, թաշկինակը հաւաքելով եւ ծիծաղելով։

Բա՜ն էր խօսում. աւտաս խօսկը խօսկին կարկտի պէս վրայ տայ։ (Գիքօի ձախ կուռը բռնելով եւ ամուր շարժելով։) Վո՞ւնց իս, վո՞ւնց, Գիքօ։

ԳԻՔՕ

Կուռս, կուռս, տօ, էրկաթ է մաջէտ։

ՊԷՊՕ, ծիծաղելով։

Բաս չէ ու քի պէս փափա կուլի։ (Թաշկինակը ձկներով գօտկից հանելով, Կէկէլին։) Արա՛, Կէկէլ, էս տար մէ էնդի ջուրն ածա ու մէ կրակ էլ չաղ արա... (Ցածր ձայնով։) Փէտ խօ ունինք։

ԿԷԿԷԼ, ուրախ եւ ցածր։

Մէ էրկու վառելու էլի կայ։ (Առնում է կապոցը։) Մորթոտիմ էլ։

ՊԷՊՕ

Չէ՛, չէ՛, չէ՛, չէ՛, Կակուլին աղանչաք արաւ, վուր նրան մուլափ տանք. խիստ է սիրում ձգան մորթիլը։ (Տնդելով ծուկը Կէկէլի ձեռքին, թաշկինակի մէջ։) Մէ մտիկ էս բէձաթին՝ վուրդի է կուչ էկի, է՜... Տար, տար, 'ես սրանց հոգուն մեռնիմ։ Էս էլ վուր առանց փուղ չըլի ճարվում, ով արժանի կօնէր միզ։ (Իր ծոցին խփելով եւ Կէկէլին ցածր։) Փուղ էլ ունիմ, Կէկէլ, այ. մի՛ վախենա, հինգ մանէթի ծախեցի։

ԿԷԿԷԼ

Էնդուր էլ ուշացար։

ՊԷՊՕ

Վա՛յ... բա՛ս... Մէ էս գիշիր էլ գնամ. Աստուած ամկը քաղցրացրիլ է ինձ վրայ։

ԿԷԿԷԼ

Ա՛խ, Պէպօ Ջան, եարաբ քանի չարչրվիս միզ համա։

Դուրս է գնում ձախ դռնից, տանելով հետը կարը եւ թաշկինակով ծուկը։

ՏԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ, առանց ԿԷԿԷԼԻ

ՊԷՊՕ

Ուրիշ, Գիքօ, ասա՛, Է. փուղը լաւ է թէ Ջանը։

ԳԻՔՕ

Էրկուսը մէտի լաւ է, Պէպան, թէ Աստուած կու տայ։

ՊԷՊՕ

Տօ, էտ՝ղադա տարի է ապրում իս աշխրքումն ու չիս գիդի, վուր փուղը Աստուած չէ բաժնում։ Թող Աստուած մենակ Ջան տայ մարթու, փուղ է ու փուղ։ (Դամբը բաց անելով։) Փուղով իմ առի էս... (Իր կրծքին խփելով։) Ա՛յ, սաղ ըլի։ (Կռացած, դամբը տնդղելով։) Օ՛, հօ, հօ, հօ, հօ, ինչ դամբ է. էն՝ղադա գցեցի, էլի սաղ սալամաթ է մնացի։ Պետրէ-Մօրէվի պէս տիղ չի ըլի. փռում էի թէ չէ, ղըմ-ղը՞մ, դուս էին գալի լօթիքը խլպլտալի։ Խալիը վուր խիլք ունենայ, էսանց էլ բան ու գուրձ չի ունենայ։ Էն վուր գցում իս...

ու ինչրու դուս քաշիլը, սիրտդ ղընգ-ղընգ, կօսիս թէ մահ ու կինքդ պիտի բաժնին։ Թէ մութ գիշիր էլ է, հէնց գիդենաս աստղիրը հիդդ մասլահաթ ըլին անում, ու թէ լուս է խօմ, կօսիս լուսնիակը գլխիտ փարվնի պէս կանգնած է լօթին... Էշխումն էլ վուր տուն իս գնում ու վուտնիրտ էլ թաց է ըլում, ու մէ բաշ փռում իս... Օ՛հ, չէ՞նի կի ճիրի մէ... (Գցում է դամբը Գիքօի գլխին, Գիքօն մնում է մէջը։) Օ՛հ, օհ, օհ, Գիքօ, ի՞նչ ձուգն իս. ար՛դի պղինձ պիտի քիզ։

Ծիծաղում է։

ՁՈՒՉԱՆ, ծիծաղելով։

Տօ, բա՛ դրօս էտունք է։

ԳԻՔՕ, ազատուելով։

Տօ, վախեցայ, Է՛յ. էս ի՞նչ հանգի հանաք է։

ՊԷՊՕ, դամբը հաւաքելով։

Բաս դիվ մէ գլուխ խօմ չիմ լաց ըլի։ Սիրտս վուր դարդին տուր տամ, լուրի պէս կու տրաքի։

ԳԻՔՕ

Չէ՛, մայինց, մէ քիչ անդնջում իս։

ՊԷՊՕ, դամբը Թոկի վրայ փռելով։

Բաս չէ ու քի պէս հում-հում խաշլամա կուլիմ. բուռնուլթին քնթէմէս ծլծլալի դէվէր ըլի գալի ու ինչրու մէ բան ասիմ, ուխտի լօխմի պէս խօսկիրը բերնումս ծամում ըլիմ... (Ծիծաղում է։) Հա՛, հա՛, հա՛, հա՛...

ԳԻՔՕ

Հէ՛յ գիդի, Պէպան։

ՁՈՒՉԱՆ

Տօ, բա՛ դրօս էտունք է, մէ ա՛նգամ դի ախար, Է.

սիրտս շուռ էկաւ... Ինչոր փիս խաբար է իմացի մեր փեսի դէմը։

ՊԷՊՕ, վախենալով։

Ի՞նչ փիս խաբար։

ԳԻՔՕ

Մէ նստի, Պէպան, հէնց ապրիս։

ՊԷՊՕ

Էսէնց էլ լաւ իմ, ասա։

ԳԻՔՕ

Հէ, վուր նստիս, ուփրօ լաւ կուլի։

ՊԷՊՕ, նեղանալով։

Տէր օղորմած Աստուած։ (Մօտ է քաշում մէկ աթոռ եւ նստում է Գիքօի ծախ կողմը։) Հը՞, էս էլ նստեցայ։

ԳԻՔՕ

Մուլափ, է՛. տաքնալով բան չի դառնա ախար։ Պիտի փիքը անինք, թէ վունց օտկինք բանին։ (Որոնում է քթախոտի տուփը։) Ի՞նչ էլաւ, տօ, էստի էր։

ՊԷՊՕ, զտնելով եւ տալով նրան։

Հը՞, բռնէ. ինչրու չքաշիս, խօ չիս կանա խօսի։

ԳԻՔՕ, վերցնելով քթախոտ։

Ա՛յ, ախպէր, էսօր առուտեհան մէ փիս հուտ իմացայ... (Քաշում է քթախոտը։) Ը՞մ... Միթամ ձիր փեսի համա ուրիշ ախչիկ ին լուս գցի։

ՁՈՒՉԱՆ

Վա՜յ, քուռանամ 'ես։

ՊԷՊՕ, վախեցած եւ ձայնը երկարացնելով։

Է՞յ...

ԳԻՔՕ

Բա՛ս, միթամ խիստ լաւ ախչիկ է, կօսէ, ու փուղ

ու բաժինքն էլ ձիր խոստացածի վրայ ուփրօ շատ։ (Կրկին քաշում է։) Ը՞մ...

ՊԷՊՕ, բարկացած։

Ը՞մ, ը՞մ, տօ, քա՛շէ ու պրծի, էլի։ (Տուփը դատարկում է Գիքօի ձեռքի մէջ եւ մօտեցնում նրա քթին։) Հը՛, կշտացի։

ԳԻՔՕ

Վա՜, վա՜, բուռնուլթիս։ Ի՞նչ գիժ մօղին իս, տո՜։

Քթախոտը կրկին տուփն է ածում։

ՊԷՊՕ

Ամիւրս գիդենայ, Գիքօ, էլ սաղ չիս պրծնի, թէ գիվ մէտի էս սհաթիս չիս յիդ ասի։

ԳԻՔՕ

Տօ, ախար վուր դաթար չիս տալի՞։

ՁՈՒՉԱՆ

Դուն ուփրօ չչկլեցրիր, քա՜։

ՊԷՊՕ

Դէ, չուստ։

ԳԻՔՕ

Հա՛, էն էի ասում... Ի՞նչ էլ ասում, մտէս ննգաւ...

ՊԷՊՕ, կիսածայն, առանձին։

Ա՛յ, զահրումար։

ԳԻՔՕ, շարունակելով։

Հա՛, վուր առուտեհան, էն հանգի բան իմացայ։

ՊԷՊՕ

Ը՛հ, քու մարթ ասողին ինչ ասիմ. տօ, էտ խօմ ասիր, իժում։

ԳԻՔՕ

Ա՛յ, իժում... Գնացի դէմուդէմը ձիր փեսի մօդ,

տեսայ տանը չէր. էն'զանց գնացի դուքանը, տեսնիմ էն ալդի'զաշտի Նաթէլը հիդը քշփչում է: Էն սհաթին ճկակիս կծեցի. (Ճկոյթը բերանն է դնում:) ասի բանը բանի նման է: Մէ քիչ մնացի. էն սատանի կնիկը վուր քաշվեցաւ, մոդ գնամ մէ լաւ ծանդը ու բարակ հիդը խօսիմ էս միր պարնի հիդ:

ՊԷՊՕ, անհամբերութեամբ:

Իժում ինչ ասաւ:

ԳԻՔՕ

Ա՜յ, էս սահաթիս, կարքով գալիս իմ, էլի՜:

ՊԷՊՕ, բռունցքը բարձրացնելով:

Ը՜հ, Գիքօ, էկաւ Աստուձ գիդենայ:

ԳԻՔՕ, յետ քաշուելով:

ՏՕ, մի խառնի, Է՜:

ՁՈՒՁԱՆ, բոլոր խօսակցութեան ժամանակ անհամբերութեամբ ծնգները տրորում է:

Վա՛, ըմ դագէմարթա, Պէպօ:

ԳԻՔՕ

Ջեր անգաճը բաղմնչու արաւ, ամա վիրչը կոտրվեցաւ ու իմացածս զուրթ դուս էկաւ: Կինաղամ լիզուս փուրը ննդաւ, էսօրվայ անմահ պատարաքը գիդենայ:

ՁՈՒՁԱՆ

Վո՜յ, գեղինը պատռէ ու նրան դէվէր տանէ, վուչ:

ՊԷՊՕ, բարկանալով:

Վա՛, գժվիլ ես, թէ հանաք ես անում:

ԳԻՔՕ

Իմ հոքին գիդենայ:

ՊԷՊՕ

ՏՕ, իժում նա ինչ ասաւ:

ԳԻՔՕ

Նա էլ էն ասաւ, վուր 'ես ձիր Կէկէլին խիստ իմ ուզում, կօսէ, ամա բանը վուր գլուխ չէ գալի, կօսէ, 'ես ինչ անիմ, կօսէ:

ՁՈՒՁԱՆ, երկու ձեռքը ծնգներին խփելով:

Մարիկ էն աննամուսին, Է՜:

ՊԷՊՕ, բարկանալով:

Վռնց թէ գլուխ չէ գալի:

ԳԻՔՕ

Էնէնց, էլի. ասում է՝ ինչի՞ ինչ խոստացիլ իք, չիք տալի, կօսէ: (Առանձին ոդոց է հանում:) Է՛հ, Աստուձ:

ՊԷՊՕ

Վռնց թէ չինք տալի... ՏՕ, գանա ինքը չի գիդի բանի զօրութինը՞:

ԳԻՔՕ

'Ես ինչրու վռւր մէ օրը մնամ, կօսէ:

ՁՈՒՁԱՆ

Ո՞ւր է մնում, ո՞վ է ասում նրան վուր մնայ: Թող ուզէ, խոստացածն էնդի չէ՞: 'Եփոր դուս գու քայ, իրն է ու իրը... Աստուձ անէ քու դիւանն, Ա'ղութին:

ԳԻՔՕ

Նա էլ էտ է ասում, Ձուշան, Է՜. 'ես, ասում է, ախչիկ իմ ուզի, կօսէ, դաւի դառաբա խօմ չիմ առնում, կօսէ:

ՊԷՊՕ շարժում է:

ՊԵՏ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ — СССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

138355-57

ՊԷՊՕ

Տօ, էտունք դիվ մէտի խօ հարուր ջէր խօսիլ ինք, հիմի նուր չաբ, նուր բարի։

ԳԻՔՕ

Բանն էլ էն է, Պէպօ Ջան, վուր նա ասում է՝ էտ բանն, ասում է, տարիք կու քաշէ, կօսէ, ու 'ես էլ չիմ կանա համփիրի, կօսէ. կնիկ ուղիլը խիստ իմ ուզում սրտով, կօսէ։ (Աղաղակում է։) Միղայ Քիզ, Աստուձ, միղայ... էս իմ միխկի պատիժն է դիվ...

ՁՈՒՁԱՆ

Մէ խօսկով՝ ասա, Դիքօ, վուր Կէկէլին թողնում է, էլի՞...

ՊԷՊՕ

Ու բանը մօշլա է ըլում։

ԳԻՔՕ

Թէ էս սահաթիս փուղը չճարեցինք, մօշլա ա-բած է ու մօշլա արած։

ՊԷՊՕ

Իստակ։

ԳԻՔՕ

Իստակ, իստակ։

ՊԷՊՕ, չարացած վեր կենալով եւ ծեռքը ծեռքին խփելով։

Վա՜յ, քու տղիս տղայ։ (Դառնում է դէպի Գիքօն եւ ծեռները առաջ տանում։) Տօ, իժում ի՞նչ ասիր։

ԳԻՔՕ, յետ քաշուելով, վեր է կենում տեղից։

Դուն ի՞նձ ասա, էլ ի՞նչ պիտէի ասի։

ՊԷՊՕ, առաջ գնալով։

Տօ, ախար չհասկացրիր իրան, վուր չինք խա-փում։

ԳԻՔՕ, յետ քաշուելով։

Վա՜, բաս չհասկացրի՞։

ՊԷՊՕ, առաջ գնալով։

Իժում։

ԳԻՔՕ, յետ քաշուելով։

Իժում էլի էն ասաւ, էլի, վա՜։

ՊԷՊՕ, առաջ գնալով։

Ու դուն էլ 'ղաբուլ արիր։

ԳԻՔՕ, յետ քաշուելով։

Վա՜։

ՊԷՊՕ, առաջ գնալով։

Չէ, մէ ի՞նչ խիլք բանեցրիր, ի՞նչ...

ԳԻՔՕ, հանելով բեմի աջ կողմը եւ ծանապարհ չգտնելով։

Վա՜, հէր օխնած, 'ես ի՞նչ անիմ, թէ կի էն մարթն էնէնց է ասում։

ՊԷՊՕ

Տօ, դուն ի՞նչ ասիր, դո՞ւն։

ՁՈՒՁԱՆ

Պէպան, գժվիլ ի՞ս, թէ ինչ խաբար է։ Ախար, էտ հանգի խօսիլ կուլի՞։

ԳԻՔՕ

Տօ, 'ես էլ էն ասի, ինչոր գիդիս, էլի՞։ Ասի՝ եա մնա ինչրու աղա Արութինի փուղը դուս գայ, էն չաին ուղէ, ասի, եա թէ չէ, ասի, հիմիսկ էվէտ ուղէ ու Արութինիմէն փուղը դո՞ւն առ, ասի։

ՊԷՊՕ

Իժում։

ԳԻՔՕ

Իժում էն, վուր նա կարական ասաւ, թէ 'ես

դաւի դառաբի գլուխ չունիմ, կոսէ։ Գուզիք փուղը էս օր բերէք, 'ես էս գիշիր էվէտ պսակվիմ, կոսէ։ 'Ես իմ խոսկէմէն յիդ չիմ կանգնում, կոսէ։

ՊԷՊՕ

Տօ, բաս էտ էիր քօվլանում, թէ խելօք մարթիմ, կոսէ. էտ էիր ասում, թէ Խիկար իմաստունը գլխէմէն ինչրու վուռքը դիփ կարթացիլ իմ, կոսէ։ Էտ է Էլի քու շնուքը։

ԳԻՔՕ

Ախար... (Հազում է։) Հո՜ւ, հո՜ւ... 'ես ի՞նչ միզ ունիմ։ (Հազը սաստկանում է։) Հո՜ւ, հո՜ւ, հո՜ւ...

ՊԷՊՕ

Ա՛յ, զահրումար ու չօռ ու ցաւ։

ՁՈՒՁԱՆ

Պէպօ, Պէպօ, գժվիլ ի՞ս։

ՊԷՊՕ, հեռանալով Գիքօից։

Չէ, 'ես գնամ մէ էս սհաթիս հիդը խօսիմ, տեսնիմ թէ վո՞ւնց է թողնում։

ՁՈՒՁԱՆ, վեր կենալով տեղից։

Չէ, դուն կա՛ց ջեր, Պէպօ, 'ես գնամ մէ էն կապկտրած Նաթէլին տեսնիմ։ (Շտապով դաթիքան հանում է նահալու տակից եւ գնալով։) Գի՛քօ, մէ հիդս արի, թէ քու Աստուձ կու սիրիս, էս քուչէն ա՛նց կացրու։

Դուրս է գնում միջի դռնից։

ԳԻՔՕ, գնալով եւ հազից խեղդուելով։

Քի մօդ բան բռնիլը դաւի դառաբա է դրուսա։

Դուրս է գնում Շուշանի ետեւից։

ՊԷՊՕ, ետեւից։

Քու մարթ ասողին էլ ի՞նչ ասիմ։

ՏԵՍԻԼ Ե

ՊԷՊՕ, մենակ, մի փոքր լռութիւնից յետոյ։

Ուրիշ ախչիկ գուզի՞ս. բաս Պէպօն մեռաւ, Էլի... Տեսնիմ վո՞ւնց իս ուզում։ (Նորից լռութիւն։) Չէ, Պէպօ, դուն հալալ տղայ իս, հալալութինը սիրում իս, քո բանումն էլ հալալ կաց։ Ինչո՞վ է սուտ քի մօդ քու փեսէն. խոստացիլ իս, պիտիս կատարի քու խօսկը... Թէ գլխիտ գդակ ունիս, պիտիս տա, թէգուզ կաշիտ պլոկվի, թէգուզ հոքիտ դուս գայ, պիտիս տա... Ամա վո՞ւրդի ճարիմ էն զահրումար փուղը... Ո՞վ կու տայ ինձ էն'զադա։ (Նայում է պատերին։) Ո՞վ ինչ կու տայ էստուրը. դիփ մէտի վուր գրաւ դնիմ, դիփ մէտի վուր ծախիմ՝ տուն, տիզ, շուր... ի՞նչ կու տան... կիսի կէսն էլ չի դուս գա... Է՛ս էր վիրշն, Էլի, էս էիր ուզում, Էլի, Արութին. էստու համա էիր չարչրում, Էլի, ինչրու հիմի... Աշխրքումը պիտի խայտառակ ըլիմ, Էլի... Էլ իմ ննգրտերանց էրեսին վո՞ւնց մտիկ անիմ, ի՞նչ կոսին։ (Գլխարկը յատակին է խփում։) Փո՛ւ, քու նամուսին...

ՏԵՍԻԼ Զ

ՆԱ, ԿԷԿԷԼ

ԿԷԿԷԼ, շփոթուած ներս մտնելով ծախ դռնից։

Էս ի՞նչ խաբար է, Պէպօ։

ՊԷՊՕ, գլխարկը վերցնելով։

Վունչիչ, ինչ խարար պիտի ըլի։

ԿԷԿԷԼ

Ի՞նչ իս ինձմէն թախկացնում։ (Կակիծով։) 'Ես իմացայ, դիփ իմացայ, Պէպօ։

ՊԷՊՕ

Ի՞նչ իմացար, Կէկէլ, ի՞նչ իս լաց ըլում։

ԿԷԿԷԼ, նոյնպէս։

Իմացայ, Պէպօ Ջան, իմացայ... էս սհաթիս դէդէն ու Գիքօն վուր գնացին... Նրանց խօսիլն իմացայ... ինձ թողնում ին։

ՊԷՊՕ

Մուլափ, մուլափ, Կէկէլ, ջեր էլի Աստուած օղորմած է...

ԿԷԿԷԼ

Աստուած շատ վուխտ է խռով է կացի իմ գլխին, էլ ի՞նչ օղորմած է... Խալխումն ինձ պաչ անէ, դիփունքը չնահաւուրին, իժում ինձ թողնէ ու գնայ ուրիշին ուղէ... Է՛ստու համա ստիղծից ինձ Աստուած... Միթամ անմիղ փալաս էի, քուչէն գցեցին... միթամ քուչի ցիխ իմ, թող վուտի տակը կոխշրտին։ Վա՜յ իմ նամուսին...

Լաց է լինում։

ՊԷՊՕ

Ախար, ջեր անմիղ իս լաց ըլում, Կէկէլ, է՞։

ԿԷԿԷԼ, շարունակելով լացը։

Ինչի՞ գեղինը չիմ մտնում էս սհաթիս։ Էլ իմ տօլ ախչկերանց էրեսին վո՞ւնց պիտի մտիկ անիմ. դիփունանց խօսելու պիտի դառնամ, դիփունքը մասխարա պիտի գցին ինձ, դիփունքը պիտի վրէս ծիծաղին...

Լաց է լինում։

ՊԷՊՕ, փաթաթուելով։

Կէկէլ Ջան, Կէ՞կէլ։

ԿԷԿԷԼ

Կէկէլի շինքին քար կապէ, Պէպօ Ջան, ու տար Քուռը շպռտէ... Էլ 'ես վո՞ւնց պիտի ապրիմ աշխարքումը։

ՊԷՊՕ

Մէ սիրտդ յի՞դ բի, Կէկէլ, է՞... Փուղի բան չէ՞, վուրդիոր կուլի կու ճարինք... Թէ Արութինը չի տա, դիփ մէտի կու ծախծխիմ, կէհամ ախկտութին կօնիմ, գլուխս գրաւ կու դնիմ ու քիզ էտէնց չիմ թողնի։

ԿԷԿԷԼ

Չէ՞, չէ՞, Պէպօ Ջան. 'Ես իմացայ, վուր էտ փուղը էսօր էվէտ է հարկաւուր ու մէ օրումը միղ-ո՞վ ինչ կու տայ, ո՞վ ինչ կու սիւցնէ։ Գլուխտ առանց էն էլ միղ համա գրաւ իս դրի ու գրաւ։ Վուչ էր էլի էն փուղի անումը, էս բէդնամութինն էլ չէր գա գլուխը... (Լաց է լինում. կուլիսից լսվում է ԿԱԿՈՒԼՈՒ ձայնը՝ Պէպօ։) Գեղինը պատռէ ու ինձ դէվէր տանէ։

Դուրս է վազում ծախ դռնով։

ՊԷՊՕ, ծնգանը խփելով։

Վա՜յ քու Պէպօին։

Վշտացած նստում է տախտի վրայ։

ՏԵՍԻԼ Է

ՊԷՊՕ, ԿԱԿՈՒԼԻ

ԿԱԿՈՒԼԻ, ներս գալով միջի դռնից, մէկ ձեռքին Թաշկինակում կապած պաշարեղէններ, իսկ միւս ձեռքին կէս-Թունդանոց:

Մէ գինի իմ բերի, Պէպօ, մէ գինի՜, վուր է՜, դաւի չունիմ:

ՊԷՊՕ, զարնացած:

Քէպի կօնինք, էլի:

ԿԱԿՈՒԼԻ

Վա՛, ինչ է պատահի:

ՊԷՊՕ

Վունչիչ:

ԿԱԿՈՒԼԻ

Վա՛, չիմ տեսնում, էփած էլ կու ճանչնամ քիզ:

ՊԷՊՕ

Է՛հ, մամլաս, կու խօսինք, էլի, իժում:

ԿԱԿՈՒԼԻ

Հը՛, էլի տեսիլ իս նրանցը՞: Հիւռու կացի, Թէ ախպէր իս:

ՊԷՊՕ

Թողնում ին վուր հիւռու կենամ:

ԿԱԿՈՒԼԻ

Արի, մէ-մէ ստաքան գցինք ջեր հալա, Թէ անդիկօրը չին կորչի ու կու տեսնիս... Վաղ ու վաղ ինձ մօդ էլ խիստ շուստ-շուստ էին գալի, ամա

(Խփում է կէս-Թունդանոցին:) դիղը գԹայ... Հանց պուզիրը տեսնում իմ Թէ չէ, շարա՜շ... (Վրայ է քաշում կէս-Թունդանոցը, յետոյ երգում է բայաԹի:)

«Աղիզմ, նաշար, աղլամա,
Գիւն դըը գէշար, աղլամա,
Բու 'ղալի Թարս բաղլիան»

ՊԷՊՕ, գլուխը շարժելով, կիսածայն եւ Թիւ:

Բիր գիւն աշար, աղլամա:

ԿԱԿՈՒԼԻ, շարունակելով երգը, վերջացնում է բայաԹին:

Բիր գիւն աշար, աղլամա:» *)

Աբա՛, (Կէս-Թունդանոցը առաջարկելով Պէպօին:) տիս, Թէ Թրի պէս չկարէ:

ՊԷՊՕ

Է՛հ:

ԿԱԿՈՒԼԻ

Զիկում. տեսնում իմ խիստ մինձիրնին էկի, է՞: Հը՞, վունց ին... (Թաշկինակը եւ գինու ամանը դնում է սեղանի վրայ եւ ձեռքերով պողեր ներկայացնում:) Էս-էս-'ղաղա պուզիրը... հը՞... Ջեր արԹուրմէքը սարքիլ ին Թէ չէ: Ախար կու ճանչնամ ինչ պտուղ էլ իս, է՞:

ՊԷՊՕ

Հանաքի վուխտը չէ, Կակուլի, Թէ Աստուած կու սիրիս, բօղաղներուս դուս է կտրվում:

Վեր է կենում տեղիցը:

---

*) Թուրքերեն է:—Սիրելիս, անճար, մի լար,
Օր է, կանցնի, մի լար.
Այս դուռը Թարս կողպողը
Մէկ օր բաց կանի, մի լար:

ԿԱԿՈՒԼԻ

Վահ, ինչ խաբար է։

ՊԷՊՕ

Էլ ինչ խաբար պիտի ըլի, բէդնամ ինք ըլում. քվիրս թողնում ին։

ԿԱԿՈՒԼԻ

Փեսէն։

ՊԷՊՕ

Բաս ուրիշ ով կուլի։

ԿԱԿՈՒԼԻ

Է՞յ։

ՊԷՊՕ

Աստուձ գիդենայ։

ԿԱԿՈՒԼԻ

Վայ, 'ես նրա... Արի գնանք ծեծինք, Պէպօ. մէ ալի'ղուլի ծեփիմ էս սհաթիս, որ սապօկի կընդի վրայ 'երիք ջէր վրայ ու վրայ պատուտ գայ։ Աբա, 'ես քիզ ասում էի, Պէպօ, է՞, վուր կուպէծը միր բան չէ։

ՊԷՊՕ

Բանը բանէմէն անց է կացի, Կակուլի, էլ էտուրը ինչ փայիդա։ Բանն էն է, վուր թէ ինչ խոստացիլ ինք, էս սհաթիս չտվինք, էս գիշիր ուրիշի վրայ է նշնվում։

ԿԱԿՈՒԼԻ

Դէ, քուլթահ արէք ու պրծէք, էլի՞։ (Քամարը յետ է անում։) Թէ իմքին պակսի, էս էլ վրէն աւելցու, մէ հինգ թուման կու տան։ (Ձախ ծեռքով քամարը բարձրացնում է։) Ձարթնի էս, Պէպօ Ջան, (Աջ

քռունցքը ցոյց տալով։) ու մէկ էլ՝ էս, էլ ուրիշ վունչիչ չկայ իմ մէջն, ախպէր։

ՊԷՊՕ

Էտընցութենով բան չի դառնա, Կակուլի Ջան. դուն լաւ գիդիս, վուր հարուր թուման փուղ ինք խոստացի, ու էն անիծած Արութինը էսօր էքուցն է գցում։

ԿԱԿՈՒԼԻ

Օ՛հ, նա ապրանք. 'ես քիզ ասում իմ, ինչրու նրա փուրի վրայ էլ մէ դհօլ չածինք, վունչիչ չի դուս գա։

ՊԷՊՕ

Է՛հ, Կակուլի, դուն էլ հէնց գիդիս ամեն բանը մենակ մուշտէ կռվով է չինած։

ԿԱԿՈՒԼԻ

Բաս ինչի՞ չէ տալի, թէ դուրթ պարտ է։

ՊԷՊՕ

Վունց թէ դուրթ պարտ է, բաս սուտ իմ խոսում քի մոդ. ամա էն անիծած բարաթը վուր չէ գթնվում, ինչ անիմ։

ԿԱԿՈՒԼԻ

Ի՞նչ բարաթ, էտ չիմ իմացի։

ՊԷՊՕ

Վա, բաս չիմ ասի քի՞զ։

ԿԱԿՈՒԼԻ

Չէ։

ՊԷՊՕ

Վուր բարաթ ունէինք նրանն ու էն բարաթը կորաւ։

ԿԱԿՈՒԼԻ

Չէ, Պէպօ, չէ. էն կի իմացիլ իմ, վուր էն բայ-ղուշը փուղ է պարտեցի քու հօրը, ամա բարաթը առչի իմանալս է... Իժում էտ վոնց կորաւ, տօ:

ՊԷՊՕ

Ասուած վուչ գիդէ միր գլուխը:

ԿԱԿՈՒԼԻ

Թէ ախպէր իս:

ՊԷՊՕ

Ասիմ, չասիմ, Կակուլի Ջան, էլ ինչ կու օտկրվի:

ԿԱԿՈՒԼԻ

Թէ լօթի իս, տօ՞:

ՊԷՊՕ

Ա՛յ, վունց էր, ախպէր... Իմ հէրը փուղ է ունե-նում, տալիս է նրան շահով. լաւ շահվեցանք. բա-րաթն առնում է ու պահում է... Քանի սաղ էր իմ հէրը, թէգուղ քսան ջէր իմ տեսի էն անիծած բա-րաթը. հէնց մեռնելու մէ շաբաթ առաչ էլ ձեռին ունէր խիղճը... Մահի էդնէն 'ղուլթին բաց անինք, էլ չկայ, չկայ, չկայ ու չկա՛յ:

ԿԱԿՈՒԼԻ

Էէէ... ա՛յ, թուրմէ ինչ բան է էլի... Տօ, Պէպօ, ինքն Արուլթինը չըլի գողցի էն բարաթը:

ՊԷՊՕ

Է՜հ, ինչ իս սարսաղ-սարսաղ դուս տալի, տօ. միր 'ղուլթումը նա ինչ դաւի ունէր:

ԿԱԿՈՒԼԻ

Բաս ո՞վ կու գողնէր, Պէպօ:

ՊԷՊՕ

Վուր գիդենամ խօ միզ համա էլ լաւ կուլի:

ԿԱԿՈՒԼԻ

Կուլի քու հէրը հիդը տարաւ, տօ:

ՊԷՊՕ

Մինք էլ էտէնց ինք ասում. կուլի շուր հաքցնե-լիս հիդը գնաց:

ԿԱԿՈՒԼԻ

Մտիկ, է՜... Ասա էն կինքումը թամաշա արա, Պէպօ, թէ ինչ կօնին սդա Արուլթինին: Զուրս-չուրս սատանէն վուր բարաթն առչիւը կու ձքին, վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ, դէդի ծծիր, դուն բարեխօս: Նէտայի մէ թամաշա անիլ տան, Պէպօ Ջան, թէգուղ հէնց էտու խաթիր կէհամ դժուխքը: (Ծիծաղում են:) Տօ, հա-նաքը դէնը, էլի լաւ պտուտեցէք, կուլի գթնվի:

ՊԷՊՕ

Տակն ու վրայ ինք արի տուն ու տիղը, ինչս ասում:

ԿԱԿՈՒԼԻ

Իժում էն գոմշի գլուխն էլ գիդէ, վուր բարաթը կորիլ է:

ՊԷՊՕ

Գիդէ, վուր չէ տալի, է՜:

ԿԱԿՈՒԼԻ

Տօ, խօ գիդէ վուր պարտ է:

ՊԷՊՕ

Բաս չի գիդի՜:

ԿԱԿՈՒԼԻ

Դէ, տայ, է՜:

ՊԷՊՕ

Անկճիտ բամբակը հանէ, տօ. էն մարթն ասում է թէ՝ միտս չէ, կօսէ, դավթընեբումս չիմ գըթնում, կօսէ, բարաթը բի, ասում է, ու փուղը տար, կօսէ:

ԿԱԿՈՒԼԻ

Աստուձ գիդենայ, Պէպօ, զարթնի դնքսիլը ուրիշ ճար չկայ: Դուն ինձ թող, էն Օրթաճալէմէն վուր յիդ է գալի, ձեռնիրը էհէնց դարսած, (Ձեռքերը յետեւն է դարսում եւ մի քանի քայլ անցնում Արուեթինի նման:) հէստիկ չինիմ, հէստիկ չինիմ, վուր սէփիլի բայաթի կանչիլ տամ 'ես նրան:

ՊԷՊՕ

Էրանի՜ քիզ, Կակուլի, վուր քուր չունիս մարթու տալու:

ԿԱԿՈՒԼԻ

Էտու համա էլ դարդ չէի անի. ձիզ պէս կուպէծներու էդնէն չէի ննդնի: Վիրչի կինտօին կու փոխիմ նրանց հիդ: Միզ վուր ստիդծիլ է Աստուձ, թուչունքի հանգն է ստիդծի՝ օր դաղինք, օր ուտինք, էլ մեռնելիս անդէրձի գլուխ ով ունէ, տո՜:

ՊԷՊՕ

Լաւ է, լաւ, խիլքիտ մի զօռ տա, հէրիք է. գնա էն մուրծէքը մորթոտէ, նստինք մէ-մէ թիքայ չօռլամիշ ըլինք, իժում տեսնինք Աստուձ ինչ է տալի:

ԿԱԿՈՒԼԻ

Հա՜, էտ իմ խիլքի բան է. մէ սուփրէն վուրդի է, (Վերցնելով կապոցը:) էստունք յիդ դարսինք:

ՊԷՊՕ, Թարեքից վայր բերելով հին ձեւի կապոյտ նախշուն սփռոց, փայտէ դեղին գդալներ եւ մի քանի ափսէ:

Ա՛յ, բի՛:

Սփռոցը բաց է անում տախտի վրայ:

ԿԱԿՈՒԼԻ, Թաշկինակից յետ դարսելով սփռոցի վրայ մի կտոր դօշ, կանանչի, լօշ եւ մօթալ:

Մտիկ էս ալաբալուխին, Է՜. էս էլ կանանչի, էս էլ լօշ, էս էլ մօթալ:

ՊԷՊՕ, մօթալը տնդղելով եւ տխուր:

Լաւն է էրևում:

ԿԱԿՈՒԼԻ

Իժում էս կանանչուն ինչս ասում... (Վեր առնելով եւ Թափ տալով:) Մտիկ, Է՜. կօսիս կանանչ մախմուր ըլի:

ՊԷՊՕ, մուԹաքանները մի կողմը դնելով եւ տխուր:

'Ղօչաղ իս, Կակուլի, մէ ստաքնիր էլ բերիմ:

ԿԱԿՈՒԼԻ

Վա՛, միխկ չէ՜. էս հանգի գինին ստաքնով կու խմի՞ն, հոքուտ ինչ իս ասում... (Կէս-Թունդանոցը տանում դնում է տախտի վրայ:) Տօ՛, էն քիղանը բի՛, վուր խմելիս էրեսաբքը մէչն էրևայ քրիստոնի պէս, Է՜:

ՊԷՊՕ, գնալով:

Գիդիմ, գիդիմ: (Թարեքից վայր է բերում մէկ հատ քրեղան, մի քանի գինու բաժակ եւ արծաԹաղարդ մէկ փայտէ կուլա:) Հը՜, էս էլ քու քիղանը. էս էլ վրէն աւել, թէ գուղիս...

Սփռոցը կարգի է բերում:

ԿԱԿՈՒԼԻ, վերցնելով կուլան:

Օ՛հ, քու հոքուն մեռնիմ, Պէպօ ջան... Ի՛նչ լո-

թին իս էլի, տո՜... (Բարձրացնելով դատարկ կուլան բերանից փոքր ինչ հեռու, իբր թէ խմում է։) Կը՛լ կը՛լ կը՛լ կը՛լ կը՛լ կը՛լ կը՛լ կը՛լ... Ջա՜ն... Հոքիս չիմ խնայի էտ քու բլբուլի ճրկճրկուցին... Ը՜հ... (Համբուրում է կուլան։) Զարդ տանիմ 'ես...

ՊԷՊՕ

Ա՛խ, Կակուլի Ջան, պիտի դարդ չունենամ, վուր լաւ ըլի։

ԿԱԿՈՒԼԻ

Տո՛, մարթ էս հանգի հոքէվուրթի ունենայ, էլ դարդը ի՞նչ վուտնիրս է։

Կուլան վայր է դնում տախտի վրայ։

ՊԷՊՕ

Լաւ է, լաւ... Դէ՛, գնա՛, էլ մի՛ ուշացնի, էստունք 'ես կարքի կու բերիմ։

ԿԱԿՈՒԼԻ

Մէ ձուգն էփիմ, մէ ձուգն էփիմ, Պէպօ Ջան, (Գնալով։) քէփդ բաց ըլի։

Մտնում են միջի դռնից՝ Շուշանը դաթիքայով եւ Գիքօն գլխարկով եւ ձեռնափայտով։

ՏԵՍԻԼ Ը

ՆՐԱՆՔ, ՇՈՒՇԱՆ, ԳԻՔՕ

ԿԱԿՈՒԼԻ

Բարով, դէդի Ջան։

Պէպօն անշարժ եւ հետաքրքրութեամբ նայում է Շուշանին։

ՇՈՒՇԱՆ, Կակուլուն։

Ապրիս, վուրթի։

ԿԱԿՈՒԼԻ

Օ՜, աղա Գիքօ, բարով 'ես ու դուն։ (Առաջ գալով եւ ցածր Պէպօին։) Սրա վրայ լաւ 'ղօնաղ չդթա՞ր, տո՛։

ՊԷՊՕ

Մուլափ... (Շուշանին։) Ի՞նչ իմացաք։

Կակուլին Գիքօի ետեւից նրա նման իբր թէ քթախոտ է քաշում։

ՇՈՒՇԱՆ

Էլ ի՞նչ իմացայ. գեղինը պատռէ ու ինձ դէվէը տանէ։ Թէ էսօր չճարեցինք, Պէպան Ջան, էս գիշեր դիպ մէտի մօշլա է ըլում։ Ա՛յ, 'Երգնքէն առնիս մագիէրն, Ա՛րութին։ (Դաթիքան վեր առնելով։) Նա իսօ էսօր չի տա ու ուրիշ տիղ ո՞վ ինչ կու աւտայ միզ։ Էլի հոքուն վրայ հատայ էն կապ կտրած Նաթէլին, թէ չէ էն է վիրչի խօսքն էր տանում նուր ախչկայ տիրուչմէն էն միր սիւէրես փեսի մօդ։ Սատանէն անէ նրա դիվանը, հրա։

ՊԷՊՕ

Տո՛, փեսիմէն ի՞նչ իս ուզում. ինչ խոստացիլ ինք պիտի տա՞նք թէ չէ։ Նա էլ մարթ է, գլխին գդակ ունէ ծածկած, միզմէն էլ վո՞ւրդի խափվի. աշխարքն ալան թալան իսօ չէ։ Էն'ղաղա ասի, վուր մուլափ, դէդի, ջեր փուղը դուս գայ, իժում էինք նշնի. ամա ձիր օխտէմէն ո՞վ գու գայ... Ի՞նչ հաջաթ ու, ուր կու կորչի ու, Արութինը միր միխկն ինչ կօնէ ու, հա՛չա խօմ չի ուտի ու. դէ՛, գնա՛ առ, տեսնիմ վո՞ւնց իս առնում։

ԳԻՔՕ, նստելով սեղանի մօտ եւ երկար ոգոց հանելով։

Ա՛խ, իմ գօղալ բարա՞թ... եարաբ վո՞ւնց կորաբ։

ՊԷՊՕ

Զէ՞նդ, Գիքօ, թէ չէ, մասաբս գիդենայ, ինչ ջիգ-բըն ունիմ, դիփ քիզ վրայ կու հանիմ էս սահաթիս։ Դուն վուբ չէիր խառնբվի էս բանումը, էս խայտառակութինն էլ չէր գա միր գլուխը. ջհանդամը փուղի գլուխը, նրա մօգօնողին էլ ինչ ասիմ։

ԿԱԿՈՒԼԻ

Մուլափ, մէ բան ասիմ 'ես, Պէպօ. օքմին վկայ չկա՞յ, վուբ վրահասու ըլի էտ պարտքին։

ՊԷՊՕ

Միթա՞մ դուն էլ խիլքիդ զօռ տվիր. էտով վուբ բան էր դառի, խօ էս խաթաբալէն էլ չէր ըլի։

ԳԻՔՕ

Ա՛յ, վկայ չմ, բաս ինչ զահրումար իմ... ամա վուբ չէ ըլում։

ԿԱԿՈՒԼԻ

Վա՜հ, ինչի՞։

ՊԷՊՕ, Կակուլուն։

Էս բանումը վկայ մկայ չի ըլի, կօսէ, չիս իմանում։

ԿԱԿՈՒԼԻ, առանձին գլուխը շարժելով։

Զէ, 'ես Նրան պիտի հարիմ։

ՁՈՒՉԱՆ

Ախար էն օրը, էն սիւ սրտովն ինչ ջուղար էրիտ կտրական։

ՊԷՊՕ

Միթամ ջեր չիս իմացի... Ասա՛ 'ես միտս չու-

նիմ, կօսէ, դավթներումս չէ էրևում, կօսէ, թէ բարաթ իմ տվի ձիզ, բերէք ու փուղը տարէք, կօսէ։

ՁՈՒՉԱՆ

Բաս միթամ հաշա է ուղում ուտի։ Էտ վունց կօնէ, Պէպան. արա քիմէն չիմ արմնում։ Էնէնց հարուստ մարթը լայիղ պիտի անի էտ հանգի բան։ Նրա համա հարուր թումանն ինչ—մէ գրօշ, վուբ ուզենայ բախշելով էլ կու բախշէ։

ՊԷՊՕ

Վունց չէ, դէմ է բերում։

ՁՈՒՉԱՆ

Ա՛յ, կու տեսնիս թէ չէ... (Լացի ծայնով։) Կէհամ, առչիւը կու չոքիմ, լաց կուլիմ, իր վուրթկերանց արիւ սադաղա գուղիմ. օրթում կուտիմ, վուբ թէ միր մէչը բարաթ լուս ննդնի, թիքայ-թիքայ անէ միզ, բաթըլնամա կուտամ, տասը վկի ձեռք կու քաշիլ տամ. մէ օր հոքի ունէ տալու, իր հոքէմէն ձեռը վունց կու վիկալնէ։

ՊԷՊՕ

Մուլափ, մուլափ, դէգի, 'ես կեհամ, էս սհաթիս յիդ գու քամ, ինչրու դուք նստեցէք։

ՁՈՒՉԱՆ

Ջեր մէ թիքայ հաց կի. մէ սահաթ առաջ ըլի, յիդ ըլի, դիփ մէկ է։

ՊԷՊՕ

Զէ, ինչրու չտեսնիմ, բօղազումս հաց չի դէվէր գնա. շուրիրս վուրթէնն է։

ՁՈՒՉԱՆ

Էրէգ զանդուկը դրի։

ԿԱԿՈՒԼԻ

'Ես էլ գամ, Պէպո:

ՊԷՊՕ

Չէ, դուն գնա, բանդ տիս, էս սհաթիս գալիս իմ:

Դուրս է գնում աջ դռնից:

ԿԱԿՈՒԼԻ

Դուն գիդիս... (Խփելով իր կրծքին:) Ա'խ, Արութիւն, 'ես թէ քու օխտէմէն չէկայ ու կու տեսնիս...

Դուրս է գնում միջի դռնից:

ՏԵՍԻԼ Թ

ՇՈՒՇԱՆ, ԳԻՔՕ

ԳԻՔՕ, նստած, սեղանի մօտ, քթախոտ քաշելով:

Է'հ, Աստուած, օրհնվի Քու դադաստանը:

ՉՈՒՉԱՆ, նստում է տախտի վրայ եւ ծայնը երկարացնելով:

«Ա'խ, Աստուած, վախ Աստուած, վուրին կու տաս սէլով փէտ, վուրին չիս տա ցախ, Աստուած:»

ԳԻՔՕ

Հա՜, հա՜, Զուչան:

ՉՈՒՉԱՆ

Է'հ, օրհնվի Նրա դարգահը. վուրին էն'զադա դօվլաթ է տալի, վուր իր դօվլաթը չէ կանացի մարսի, ու վուրիմէն օրուան թիքէն խլում է ու էն էլ դօվլթավուրին է տալի. փառք Իրան, Իր կամքն է. հալրաթ միր ճակատին էս էր գրած:

ԳԻՔՕ, մօտենալով սփռոցին:

Էլի Աստուած օղորմած է, Զուչան... (Վերցնելով դօշը եւ գլուխը շարժելով:) Ի՞նչ 'զիամաթ իմքին է:

Դօշը կրկին իր տեղն է դնում:

ՉՈՒՉԱՆ, առանձին:

Քու աչկն էլ... (Գիքօին:) էլ ինչ օղորմած է, ջուրն էկիլ է ու միզ տարիլ է: էն անաստուածը վուր էլի մէ բան մօգօնէ ու փուղը չտայ էսօր, եարաբ ինչ կուլի միր չարէն. ճլէրք կու ննգնի խիղճ ախչիկս: Թավաթ օրն օրվան վրայ հալվում է, էլ ինչը կու ապրեցնէ նրան: (Լացով:) Խի՛ղճ իմ Կէկէլ, նօրչի արիւրդ պիտի փչանայ, էլի՜, թագի մագիէր սիւ գերեզմանը պիտի մտնիս...

Լաց է լինում:

ԳԻՔՕ, լացի ծայնով:

Օ'հ, օհ, օհ...

Դուրս է գնում ծախ դռնից աչքերը սրբելով. իսկ աջ դռնից մտնում է Պէպօն զարդի հագուստով, գլխարկը ծածկած, արխալուխի մի քանի կոճակը բաց, քամարը կապած եւ նրա վրայ գոտիկ կապելով:

ՏԵՍԻԼ Ժ

ՇՈՒՇԱՆ, ՊԷՊՕ

ՉՈՒՉԱՆ

Տօ, ախար ջեր մէ թիքայ հաց կուտէիր:

ՊԷՊՕ

Հաց չէ, զահրումար ուտիմ... Ի՞նչ կօնիմ հաց. գանա հացի արժանի ըմ... (Գօտիկը կապելով։) Հացը վուր ստիղծած է, գանա ինձ համա է ստեղծած. հացը վուր 'ես ուտիմ, Արուքինը ի՞նչ ուտէ։ Նա էլ հաց ուտէ, 'ես էլ հաց ուտիմ...: (Դառը ծիծաղով։) Հրա՜, հրա՜, հրա՜...

ԶՈՒԶԱՆ

Սիւցիլ էր իմ օրը, ահրա՜։

Աչքերը սրբելով դուրս է գնում ծախ դռնից։

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՊԷՊՕ, մենակ, արխալուխի կոճակները մէր գցելով։

Գնա, Պէպօ, գեղին լզէ, խալխի վուտներուն պա՛չ արա, նրանց վուտի ցիխը լկէ... Ո՞վ իս դուն, ի՞նչ իս դուն, ի՞նչ մարդահէսարումն իս դուն, ի՞նչ անում ունիս դուն... 'Եփոր գուզին, վուտի տակը կու գցին քիզ, վրէտ կու ման գան, գեղնի հիդ կու հաւսրին... ի՞նչ հաջաթ, ջիանճվէլի վրայ ինչմվ իս աւել... Դուն իսօ մարթ չիս, մարթկերանց համա կերակուր է ստիղծի քիզ Աստուձ... Գիշիր չարչրվի, ցերեկ չարչրվի, 'երգնքի տակը լուսացրու, անձրըվի ու քամու հիդ կռիւ տու, ձմեռը ցրտէմէն կօնկօռնա, ամառը արեգակի շուքումն էրվի ու խորվվի... գնա, էնէնց մէ թիքայ հաց ճարէ ու էն թիքայ հացով դէդիտ ու քվիրդ պահէ... Էս ի՞նչ, ի՞նչ մարթուքին... էսէնց շունն էլ է ճարում մէ թիքայ, վուր տունը պահում է... Միթամ դուն էլ շուն իս... քանի

աշխրքիս էրեսին ման իս գալի, դուն էլ շան պէս կերակրվի... Էս ի՞նչ մարթուքին է... (Դադար։) Մարթէր ուզում դառնա. կէհէիր մարթիք կու թալնէիր, գուզուքին կօնէիր, իմ նման խոզերուն կու զընէիր, քսանուհինգ հազար տիղ արէն արտսունք կու թափիլ տէիր, էն արտսունքնիրը փուղ կու շինէիր ու էն փուղով օսկէ տնիր... Մէչը փառաւուր ման գուքէիր... դրօշկա, կալասկա, ձիանիր կու սարքէիր, քսանուհինգ ինձպէսին գլխիտ 'դարավաշ կու կանգնեցնէիր... Ա՜յ, էն շախը կօսէի քիզ՝ մարթ իս, Պէպօ, ի՞նչ մարթուն պիտի... ի՞նչ քէփդ գուզէր, էն սահաթին կու ճարէիր... Էն շախը դիփունքը քիզ գլուխ կու տէին, կու մեձրէին, պատիւ կու տէին ու մէկս մէկու գլո՞ւխ կու կոտրէին, վուր քու աչկը նրանց վրայ քաղցր ըլի։

Դուրս է գնում միջի դռնից։

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾԻ

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Հարուստ դահլիճ Արութինի տանը: Ա՛ջ, ձախ և մէջ տեղը դռներ, ամենաշքեղ դրապրիներով զարդարած: Ձախ կողմը մեծ հայելի, յետոյ դիւան, որի կողքին ամենաթանկագին սփռոցով ծածկած սեղան եւ նրա վրայ հանդած լապտեր: Ա՛ջ կողմը կուշէտկա. իսկ մնացած տեղերը, ուր հարկն է, բազկաթոռներ եւ աթոռներ: Դահլիճի մէջ տեղում առաստաղից կախած է ոսկեզօծ ջահ, հանդած մոմերով: Բեմի խորքում դէպի ձախ, վառարանի վրայ դրած ժամացոյցի սլաքները ցոյց են տալիս ժամը ճիշդ երկուսից քառորդ պակաս: Ժամացոյցը բանում է: Սկզբումը բեմը փոքր ժամանակ դատարկ է: Ցերեկ է:

ՏԵՍԻԼ Ա.

ԳԻԳՕԼԻ, յետոյ ՍԱՄՍՕՆ

ԳԻԳՕԼԻ, երեւում է միջի դռան շեմքում մէկ մշակի հետ, որի ձեռքին մէկ մեծ զամբիւղ զանազան իրեղէններով: Զամբիւղում կայ՝ շամպանիայի գինի, կասիս, սարդինկայ, զուրգիէլ, Թունուքայի արկղիկով խաւեար, վարունկ, մէկ Թղթով ընտիր կեռաս, մի ուրիշ Թղթում շաքարէ հաց:

Լաւ, Թող: (Մշակի ձեռքից առնում է զամբիւղը

մշակը գնում է, իսկ ինքը ներս է բերում զամբիւղը եւ դնելով գետնին, ցածր ձայնով կանչում է:) Սամսօն, Սամսօն, (Մօտենալով աջ դռանը, նորից կանչում է:) Սամսօն: (Սամսօնը դուրս է գալիս նոյն դռնից արխալուխի կրծքի կոճակները բաց, ձեռքին շամպանիայի գաւաթ, երկար սպիտակ թաշկինակով սրբելիս:) Աբա, գէթա՛ղվա, Սամսօն Ջան, գնա, չուստ ախչիկ պարնին իմաց արա:

ՍԱՄՍՕՆ

Էկա՞ր. ինչի՞ ուշացար. կրակ է վէր ածում ախչիկ պարունը:

ԳԻԳՕԼԻ

Վա՛, 'ես ի՞նչ անիմ, հէստի բան ասաւ, վուր սաղ աշխարքը ման էկայ, չճարեցի:

ՍԱՄՍՕՆ

Վա՜:

ԳԻԳՕԼԻ

Ումը հարցրի, վրէս ծիծաղեցան. կակլի տոլ էլ, ասում է, կլուբնիկ կուլի՜, կօսէ:

ՍԱՄՍՕՆ

Հալբաթ կուլի, վուր ասաւ... (Տնդղելով զամբիւղը:) Մնացածը դիփ բերի՞ր:

ԳԻԳՕԼԻ

Դիփ, դիփ. ամա էն մունդռէկ կլուբնիկը չճարեցի: ԷքուցուԹին կի մէ տիղ խոստացան, կուլի ճարինք, կօսէ:

ՍԱՄՍՕՆ

Հոքուն կու վրայ հասնի. 'ղօնաղլուղուԹինը էսօր է, էքուց խօ չէ:

ԳԻԳՕԼԻ

Բաս ինչ անիմ, Սամսոն Ջան։ Չի ըլի, վուր առանց էն եօլա գնայ բանը։ Հէստի բալիք իմ բերի, վուր ամեն մէկը կօսիս գոմշի աճկն ըլի։

ՍԱՄՍՕՆ

Թէ ինձ կու հարցնիս, Գիգօլի, առանց էտ բալին էլ փուրը լաւ կու կշտանայ, ամա ախչիկ պարնի խասիաթը գիդիմ, վուրդիոր ըլի, պիտի ճարիս. Կալօնիումը, նէմէցներու բաղերումը, էնդի հարցրու։

ԳԻԳՕԼԻ

Հոքիս դուս էկաւ, ինչս ասում։

ՏԵՍԻԼ Բ

ՆՐԱՆՔ, ԷՓԷՄԻԱՑ

ԷՓԷՄԻԱՑ, դուրս գալով ծախ դռնից, ամենաշքեղ հագուստով եւ ակնեղէններով զարդարուած։

Օ՛հ, չարա էլաւ. էսէնց ուշանալն էլ ինչ է։ Ցօրէս 'ղօնաղնիրը մոդ կուլին. 'Եփը պիտի վրայ բերիմ, էլի աշխրքի բան կայ։

ԳԻԳՕԼԻ

Հէն'զադա ման իմ էկի, ախչիկ պարուն, Ասուած գիդենայ, էլ ծնգներումս Ջան չկայ։

ԷՓԷՄԻԱՑ

Ջանդ դուս գայ, ման արի, բաս 'ես ման գամ։ Աբա, յիդ դարսէ, տեսնիմ ինչ իս առի։

ԳԻԳՕԼԻ, զամբիւղի իրեղէնները ցոյց տալով։

Ա՛յ, ախչիկ պարուն՝ էս շանփանսկիքը, տասնուվթ

արասէն պակաս չտվին բուվթիլկէն. էս էն կարմիր լիկօրը, ֆրանցուզիմէն առայ, շուրս ու տաս շահի առաւ անիծածը. էս սարդինկէքը, էս Դօնու զուրգիէլ, էս կարօբկերումը ժիտկա, օրվթում հաւատ արաւ, վուր էստու վրայ լաւը չի ըլի, կօսէ. էս նէմէնցու բալին, երկու ռանգն է, ա՛յ. ամեն մէկը մէ գրվանքայ դու քայ. էս խիար, ինչ շուշէքն է՞, տէս, ախչիկ պարուն. էս պիրօժնի, կանդիտրի չինածէմէն վէր չի գա. բուլկիքն էլ յօրէս կու բերին։

ԷՓԷՄԻԱՑ

Վռնց թէ վէր չի գա, արա էստի չանց տու. բաս վուրդի առար։

ԳԻԳՕԼԻ

Միչի փողոցումը։

ԷՓԷՄԻԱՑ, իր Թշին ծեռք դնելով։

Աբա էտ արարմունք է՞, Գիգօլի. 'ես քիզ չասի թէ ֆրանցուզի մոդ առ։

ԳԻԳՕԼԻ

Դիփ մէկ է, ախչիկ պարուն, Ասուած գիդենայ. գրվանքումը մէ արասի անմիղ աւելի ուր էի տվի։ Տէս, ինչ լաւն է։

ԷՓԷՄԻԱՑ, տնտղելով։

Աբա վէ՞ս էկաղրէբա, նրանց հատն ու կտուրն է. էսէնց բէդասլուվթինն էլ ինչ է։ Տար, տար, էս սահաթիս յիդ տու։ Ինչ ասում իմ քիզ լսէ, դուն քու գլխէմէն բանիր մի՛ մօգնի։ Ուրիշ... (Մտածելով։) Ուրիշ ինչ ասի, միտս չէ գալի։

ԳԻԳՕԼԻ, կակազելով։

Կլուբ... նի... կա։

ԷՓԷՄԻԱՑ

Հա, ղուրթ. վուրդի է։

ԳԻԳՕԼԻ

Շճարեցի, ախչիկ պարուն։

ԷՓԷՄԻԱՑ, Ծուշը վեր քերելով։

Վո՞յ, քոռանամ 'ես։

ԳԻԳՕԼԻ

Վուր չկայ, ի՞նչ անիմ։

ԷՓԷՄԻԱՑ

Գժվիլ ես, թէ ինչս ասում։ Երէգ իմ աչկով տեսայ ու իմ բերնով կերայ Դանդումանինց տանը։ Ի՞նչ կօսէ խալխը. նրանց տանն ըլի ու իմ տանը չէ։ Գնա, գնա, էս սահաթիս բաղէ բաղ ննգի, դրօշկա բռնէ ու վուրդիոը ըլի էս սահաթիս ճարէ, թէ չէ էլ հոքով ու մարմնով ինձմէն չիս պրծնի... Ի՞նչ իս կանգնի, չիս իմանում, քիզ իմ ասում։

ԳԻԳՕԼԻ

Գնում իմ, գնում իմ, ախչիկ պարուն։

Շաքարէ հացը վայր է գնում զամբիւղում եւ կամենում է գնալ։

ԷՓԷՄԻԱՑ

Գժվիլ ես, թէ ինչ Աստուած է խռովի. էտ պիրօժնին էլ տար, է՞։

ԳԻԳՕԼԻ, շաքարէ հացը վերցնելով։

Տանում իմ, տանում, ախչիկ պարուն... (Փնթփնթալով։) 'Ես էլ չիմ իմանում, ինչ իմ անում։

Շտապով դուրս է գնում միջի դռնից։

ՏԵՍԻԼ Գ

ԷՓԷՄԻԱՑ, ՍԱՄՍՕՆ

ՍԱՄՍՕՆ

Խստակ չչկլեցրիր, ախչիկ պարուն։

ԷՓԷՄԻԱՑ, յօնքերը կիտած, այս ամբողջ տեսիլում։

Քիզ ո՞վ է հարցնում, էրնէկ գիդենամ. դուն տար էստունք կարքի բի ու չալիշ արի ինձ չամանչեցնիս էսօր, Սամսօն, թէ չէ էլ ինձմէն չիս պրծնի։

ՍԱՄՍՕՆ

Դիվի լաւ կուլի, ախչիկ պարուն։

ԷՓԷՄԻԱՑ

Ինչ ասիլ իմ, լաւ միտդ պահէ. դիվի լաղաթով ըլի, ամեն բանը իր վուխտը մօդ գայ. մէ խօսկով՝ մաղը մաղէմէն չանց կացնիս։

ՍԱՄՍՕՆ

Դիվի, դիվի, ախչիկ պարուն։

ԷՓԷՄԻԱՑ

Ու դուն էլ էնէնց հաքի, վուր դիվունանց աճկիրը քոռանայ. սօսանի ատլաս ախալուխը, սիպտա չերքէզկէն, մաջէքը կարքով յիդ կու ծալիս...

ՍԱՄՍՕՆ, խօսքը կտրելով։

Խանջալն էլ կապիմ, ախչիկ պարուն...

ԷՓԷՄԻԱՑ, շարունակելով։

Բաս, քա, էնդուր խօ չբախչեցի վուր դանդկումդ պահիս. խանջալն էլ կապէ ու (Ձախ ձեռքը աջ ուսից կրծքի վրայ տանելով մինչեւ ձախ կողքը։) սապիրիս

ծամլէն էլ չինէ։ Մէ խօսկով՝ դիփունի մօդ լաղաթի էրևա, վուր դիփունքն ասին, վուր մարթ իս ու մարթու տանն իս 'ղուլուղ անում։

ՍԱՄՍՕՆ

Վո՞ւր օրը լաղաթով չիմ էլի, ախչիկ պարուն։

ԷՓԷՄԻԱՑ

Քու գլխի պատուվիլը գիդենայ, մէկ էլ հիմի իս լաղաթով. աբա էտ ի՞նչ կարք է, լէվրէլէլօ ման իս գալի։ Քանի ջէր իմ քիզ ասի, վուր էտէնց ինձ մօդ մի՞ տուն գա. օքմին տեսնէ, ի՞նչ կօսէ։ Չէիր կանա դօշիտ կոճկնիրը կապի։ Լաքիէն պիտի լաքիա ըլի։ Ամկիրդ բաց արա, էլի՛. տեսնում իս խալխի լաքիէքը վունց ին ժաժ գալի, գուն էլ էնէնց ժաժ արի, էլի՛. նրանցմէն պակաս մարթու վուրթու մօդ իս, թէ ի՞նչ է։

ՍԱՄՍՕՆ

Ձեռիս բան ունիմ, ախչիկ պարուն, խօ տեսնում իս։

ԷՓԷՄԻԱՑ

Տուտուց-տուտուց մի՞ խօսի. 'ես քիզ ինչ ասում իմ, գուն ի՞մը լսէ։ Մէ խօսկով՝ իստակ, կարքի, քաղաքավարի տուն ու դուս կօնիս. թող տեսնին ու ճըխկըվին։ Մէկէլ լաքիէրու աբով չթողնիս, փարվընի պէս ման գու քաս սուփրի բոլորքը. մէ տիղ իքմին մաշուր արիր թէ չէ, էն սհաթին դրստէ... Բլուդնիրն էլ առչի գամն ինձ մօդ կու բերիլ տաս։

ՍԱՄՍՕՆ

Ի՞նչ կօսին 'ղօնաղնիրն, ախչիկ պարուն։

ԷՓԷՄԻԱՑ

Է՛լի... մօդէն գո՞ւն լաւ գիդիս թէ 'ես. թող

տեսնին ու սրվին։ (Մտածելով։) Էլի ի՞նչ էի ուզում ասի... (Մտաբերում է։) Հա՛... (Գնալով։) Դո՞ւն տար էտունք տիղաւուրէ ու տի՞ս՝ մտէդ չգցիս ինչ ասի...

Շտապով դուրս է գնում ծախ կողմից։

ՏԵՍԻԼ Դ

ՍԱՄՍՕՆ, մենակ։

Էս հանգի էլ ախչիկ պարո՞ւն. դաղդըղանի իմ էկի, էլի՛... Էս կոճակդ կապէ, էս էսէնց հաքի, էս էնէնց ման արի. չիմ գիդի, թէ ի՞նչ է ուզում ինձմէն... Փիէ՛, գաւի է դրուստ, էլի՛... Ցօ, քիզ ի՞նչ, 'ես խօ իմ բանը չինում իմ։ (Լռութիւն։) Օ՛հ, հօ, հօ, շատ ախչիկ պարնիր իմ տեսի, շատ նրանց բույիւրմիշնիր իմ լսի, ամա սա չափէմէն անց կացաւ։ Մէ տէր հարցնող ըլի, թէ ո՞վ է, ո՞ւմ վուրթի է. իր հօրանց տանն, ասում ին, շապիք չունէր հաքնելու... ու հիմի փառասիրուրթենէմէն տրաքվում է։

Ձեռքը ծեռքին է խփում։

ՏԵՍԻԼ Ե

ԱՐՈՒԹԻՆ, ՍԱՄՍՕՆ

ԱՐՈՒԹԻՆ, ներս մտնելով միջի դռնից, գլխարկը ծածկած։

Ի՞նչ խարար էր, ի՞նչ ձէն էկաւ։

ՍԱՄՍՕՆ

Վունչիչ, աղա։

ԱՐՈՒԹԻՆ

Վռնց թէ վունչիչ, իմ անգճովս իմացայ. ով էր էստի։

ՍԱՄՍՕՆ

Օչով, աղա, ախչիկ պարունն էր։

ԱՐՈՒԹԻՆ

Ախչիկ պարունը՞... Ի՞նչ էր ասում։

ՍԱՄՍՕՆ

Ա՛յ, աղա, Գիգօլին էստունք էրի էս սահաթիս, էլի ինչի համա էլ ղրգից նրան ախչիկ պարունն ու ինձ հրամառում էր, վուր էստունք տիղաւուրիմ։

ԱՐՈՒԹԻՆ

Հա՜... Դէ, տիղաւուրէ, էլի՞, էլ ինչ իս չինում։ Ինչիր է էտի։

ՍԱՄՍՕՆ

Խմիչկ է, մրքեղէն է, զակուսկէք է։

ԱՐՈՒԹԻՆ, զամբիւղում տնտղելով։

Օ՛հ, օհ, օհ, օհ, կօսիս շահ զադի վուրթիք ունենանք մեձրած։ Դէ, տար... (Սամսօնը վերցնում է զամբիւղը եւ կամենում է տանել։) Ինչ իմ ասում. քանի պրիբօր իս պատրաստում։

ՍԱՄՍՕՆ

Ախչիկ պարունը հրամայից, վուր դրուստ քսան ու չուրս պրիբօր ըլի դարսած, կօսէ։

ԱՐՈՒԹԻՆ

Ախչկաս մօդ խօ չղրգից քիզ։

ՍԱՄՍՕՆ

Չէ, աղա, վունչիչ չէ ասի։

ԱՐՈՒԹԻՆ

Բաս էրկու պրիբօր էլ աւելցու ու էս սահաթիս գնա ախչկաս էլ ու փեսիս էլ խնդրէ, վուր շնուրհ բերին, ու իմ մագիէր կօսիս՝ թէ չին գա, խիստ բէդամաղ կուլիմ, ասա... Դէ, գնա չուստ, բանդ տիս, մի ուշանա։

ՍԱՄՍՕՆ

Է՛ս սահաթիս, աղա։

Դուրս է գնում աջ դռնից զամբիւղը ձեռքին։

ՏԵՍԻԼ Զ

ԱՐՈՒԹԻՆ, մենակ, գլխարկը վեր առնելով եւ դնելով սեղանի վրայ։

Սհաթի 'երիքին էլ ճաշ կուլի։ Է՛հ, մախլաս։ (Հայելումը տնտղվում է։) Չէ, ջեր էլի լաւն իմ... Ի՞նչս է պակաս. բօյիս չիմշատ է հէնց գիդենաս, էրեսիս ռանգը, կօսիս, կարմիր վարթ ըլի, մազիրս էլ սիւ սաթ, ինչ անիմ թէ ներկած է. ով ինչ գիդէ՝ ինչ խաբար է։ (Նստելով կուշէտկայի վրայ։) Ջէհէլ կնգայ պէս մարթու, ջէհէլացնող վունչիչ չի ըլի աշխրքումս. մարթու տարին էլ, քէփն էլ դիփ կնգամէն է։ Օղորմած հոքի իմ առչի կնիկն էլ լաւ աթմորթի էր, ամա բանի լազաթը չէր գիդի։ Ի՞նչի նման էի էն չախը. հիմի մարթ իմ էրևում, ինչ մարթուն պիտի։ Ճամ ջէհէլ ֆրանտ տղայ էրնէկ կուլի տալի ինձ... (Շապկի թեւնոցները տնտղելով։) Փըշահ, սիպտա ձուն է՛, վուրդի էր էստունք... (Ոգոց հանելով։) Ամա էս մէ բանը կի լաւ չէ ըլում, վուր էս՛ղադա վուղիր

է մխսիլ տալի ինձ... ի՞նձ, վուր մէ գրօշի համար հոգիս տալիս իմ 'ես... Փառք քիզ, Աստուձ, փառք... էս էլ հալբաթ Քու դիրք է... Քէփ արա, քէփ արա, Փէփէլ, ու դուշմնի ա՞ճկը հանէ։

ՏԵՍԻԼ Է

ՆԱ, ԷՓԷՄԻԱՑ

ԷՓԷՄԻԱՑ, տուն գալով ծախ դռնից։

Ա՛բա, էս օրէնք է։

ԱՐՈՒԹԻՆ

Ի՞նչ է։

ԷՓԷՄԻԱՑ

Միթամ չիս գիդի. ուզում իս մէբաշ թուլանամ, խայտառակ ըլիմ խալխումը՞։

ԱՐՈՒԹԻՆ

Ի՞նչ է, վա՛։

ԷՓԷՄԻԱՑ, շարունակելով։

Դիվունքը վրէս ծիծաղի՞ն, մէ մատը միղը դառնամ աչխրքումը՞։

ԱՐՈՒԹԻՆ

Տօ, ախար ի՞նչ է, մէ ասա՛, է՞։

ԷՓԷՄԻԱՑ, սուտ լաց լինելով։

Էս է քու օրթում հաւատը, վուր ինձ սիրում ի՞ս։

Աչքերը սրբում է։

ԱՐՈՒԹԻՆ, ծայնը քաղցրացնելով եւ վեր կենալով տեղից։

Ախար սատանայ խօ չիմ, մէ խօսի, է։

ԷՓԷՄԻԱՑ

Էլ ի՞նչ խօսիմ, մէ բանը մէ ջէր կօսին, հազար ջէր խօմ չին ասի։

ԱՐՈՒԹԻՆ

Տէ՛ր օղորմած Աստուձ։

ԷՓԷՄԻԱՑ

Ախար փեսիտ ու ախչկատ վուր կանչում իս էսաի, արա ըլելու բան է։

ԱՐՈՒԹԻՆ

Է՜, լաւ է քու հօրն օղորմի, Փէփէլ. ախար քինթն էրեսէմէն վէր գու քա՛յ։

ԷՓԷՄԻԱՑ

'Ես ի՞նչ միղ ունիմ։

ԱՐՈՒԹԻՆ

Է՜հ, հակառակ իս։

ԷՓԷՄԻԱՑ

'Ես իմ հակառա՛կ. ի՞նչ ասիս էրեսիս ասում է քու ախչիկը, վրէս քինթը վիր է քաշում, մասխարա է գցում, ու հակառակը 'ես ի՞մ... Մէ խօսկին տասը ջուղար է տալի, ինչ շառիր ասիս վրէս է մօգօնում, խուղի հիդ հաւսրիլ է ինձ, ու հակառակը 'ես ի՞մ... Իմ մամէն, ասում է, էլ խիլք չունէ, կօսէ։

ԱՐՈՒԹԻՆ

Վա՛։

ԷՓԷՄԻԱՑ, շարունակելով։

Միթամ դիղիլ իմ քիզ, խիլքէտ արիլ իմ, բուրթու պէս վուրթէնն ուզում իմ, էնթէնն իմ գցում քիզ... վուղչ կայինքդ ուզում իմ զավթի 'ես, ու հա-

կառակը 'ես իմ... էլ կանամ 'ես նրանց էրեսը տեսնի. ալիմորթին կու համփիրէ էստունք:

ԱՐՈՒԹԻՆ

Էլի դուն պիտի համփիր իս, հէր օխնած. էս սհաթիս ծնող իս յիշվում նրանցը:

ԷՓԷՄԻԱՅ

'Ես իմ ծնող յիշվում. նրանց համա 'ես ծնող կի չիմ, դուշման իմ, գէլ իմ, շունն իմ, կատու իմ... (Լաց լինելով:) Սիվցիլ էր իմ օրը ու էս տուն վուտս տուն չէի դրի: Ի՞նչ կոնիմ էս փառքը, էս պատիւը, էս շուրիրը, էս ակնեղէնիրը. թող էլի իմ տանը ննգած էի էլի՝ քաղցած, ծարաւ, հացի հասրաթ ու էս օրը չէի տեսի 'ես...

Լաց է լինում:

ԱՐՈՒԹԻՆ

Լաւ է, լաւ, Փէփէլ Ջան. (Լացի ձայնով:) սիրաս մի պատրատի... 'ես էլ լաւ գիդիմ ինչ պտուղնիր ին. ամա ասում էի, միթամ խալխի խօսելու չդառնանք:

ԷՓԷՄԻԱՅ

Խալխն ինչ գուզէ ասէ. նրա խօսելու հիդ վուր մարթ ննգնի, ուր կէհայ. խալխն էն էլ է. ասում, վուր հաշաքար իս միթամ, շատ օքմնու իս զրնի միթամ. արա էս աւտալու է...

ԱՐՈՒԹԻՆ

Զրէս շառիր ին մօգօնում...

ԷՓԷՄԻԱՅ, շարունակելով:

Վուր միթամ պառաւ իս դուն...

ԱՐՈՒԹԻՆ, նեղանում է եւ հազում:

Հո՜ւ...

ԷՓԷՄԻԱՅ, շարունակելով:

Միթամ մազիրդ ներկում իս...

ԱՐՈՒԹԻՆ, կրկին հազում է:

Հո՜ւ, հո՜ւ...

ԷՓԷՄԻԱՅ, շարունակելով:

Միթամ ինձ խափում իս: Ո՞վ կու աւտայ. թող խալխն ինչ գուզէ ասէ:

ԱՐՈՒԹԻՆ, հազից խեղդուելով:

Խալխը տուտուց է, Փէփէլ. դուն չիս գիդի՞ վուր ջէհէլ իմ. վուր ջէհէլը կուլի ինձ վրայ 'զօչաղ:

ԷՓԷՄԻԱՅ

Աբա՛, վուր մէկին հասկացնիմ:

ԱՐՈՒԹԻՆ

Տօ՛, դուն էն սարսաղներուն ասա՛, վուր պառաւ 'զօչաղը լաւ է, կանց ջէհէլ դամբլէն: (Իր մազերը բռնելով եւ գլուխը մօտ տանելով:) Աբա՛, էս ներկած է:

ԷՓԷՄԻԱՅ, ԱրուԹինի գլուխը բռնելով եւ ժպտալով:

Դուշմանը շատ բան կօսէ, Արտուշկա Ջան: (Համբուրելով գլուխը:) Մանուշակի հուտ է գալի՞:

ԱՐՈՒԹԻՆ, փաթաթուելով:

Ա՜յ, կուդիան, քու մէ պաշը մէ թաքաւորութին աժէ: (Փաղաքշելով:) Ղուրթ վուր խիլքէմէս հանում իս. ինչ ասիս վուր քու խօսկը չկատարիմ:

ԷՓԷՄԻԱՅ

Բաս չինք կանչում, էլի՞:

ԱՐՈՒԹԻՆ

Ո՞ւմը:

ԷՓԷՄԻԱՅ

Փեսիտ ու ախչկատ:

ԱՐՈՒԹԻՆ

Է՜...

ԷՓԷՄԻԱՑ, սուտ լաց լինելով։

Ա՛փսուս իմ գլուխ։

ԱՐՈՒԹԻՆ, քաղցր։

Լաւ է, լաւ, քու քէփն ըլի։

ԷՓԷՄԻԱՑ, փաթաթուելով։

Իմ սիրուն, իմ խօխոբ, իմ ջէյրան, իմ ակռաւ...

ԱՐՈՒԹԻՆ

Ակռա՛... վա՜հ, էտ լաւ էր։

ԷՓԷՄԻԱՑ, ծիծաղելով։

Վա՜յ, քոռանամ 'ես, ուզում էի ասի, իմ ա-ղունակ։

ԱՐՈՒԹԻՆ

Հա՛, աղունակը լաւ է։

ԷՓԷՄԻԱՑ, փաթաթուելով։

Բաս ի՞նչ իս, վուր աղունակ չիս։

ԱՐՈՒԹԻՆ

'Երբիշս էլ կուլի նման աղունակինը... Աղունակն էլ դուն իս, Փէփէլ, (Փաթաթուելով։) վարթն էլ ու մանուշակն էլ։

ԷՓԷՄԻԱՑ

'Ես վարթ իմ ու դուն էլ բըլբուլ, Ա՛ստուշկա Ջան։

ԱՐՈՒԹԻՆ

Հա՜, գթա՛ր. դուն վարթ իս ու 'ես էլ բըլբուլ. խիստ իմ սաղ գալի։ (Էփէմիայի թշին մատով խփում է եւ թիւ։) «Գոկօրօ վարդօ, ար դամագդօ, վար մօնա չէնի։»

ԷՓԷՄԻԱՑ, նոյնպէս թիւ։

«Պիրզէդ գաքվս խալի, շաւ շաւի թվալի, տուրփաթ մշվէնի չէն։»

ԱՐՈՒԹԻՆ

Վա՜հ, հէր օխնած, ասում իս, ասա՛, վուր Ջանումս նստի, է՞։

ԷՓԷՄԻԱՑ

Է՛հ, ըմ դրօս է, էրնէկ գիդենամ, աշխրքի բան ունիմ։

ԱՐՈՒԹԻՆ

Գէթա՛ղվա, Փէփէլ Ջան։

ԷՓԷՄԻԱՑ

Ո՛ւհ, քիմէն խօմ չիմ պրծնի ու, հրա՜։ (Երգում է Արութինին շողոքորթելով։)

«Գոկօրօ վարդօ, ար դամագդօ, վար մօնա չէնի,
Պիրզէդ գաքվս խալի, շաւ շաւի թվալի,
Նախվա մսուրս չէնի։»*) Եւ այլն։

ԱՐՈՒԹԻՆ

Օ՜հ, քու հո՞քուն մեռնիմ, Փէփէլ Ջան... (Գրկում համբուրում է։) Սաղ աշխարքը շուռ կու տաս դուն...

ԷՓԷՄԻԱՑ

Գիդիս ի՞նչ ասիմ, Արտուշկա Ջան... (Ձեռքը դնելով Արութինի ուսի վրայ։) Միր հալիլէքն էլ պէտք չէ, մոդէն անց է կացի. մէ տիղ տեսիլ իմ, Ջուխտը քառասուն ու հինգ թուման ին ասում... (Արութինը առան-

---

*) Վրացերեն է՝—

Գոկոն իմ վարդիկ, մի թողնիր ինձ, քո սարուկն եմ ես։
Երեսիդ ունիս՝ խալ, սև-սև աչեր, տեսիդ կարօտ եմ ես։

ծին դէմքը ծամածռում է։) Ուզում էի բէհը տա, ամա առանց քի հարցնելու գարէդվա չարի։

ԱՐՈՒԹԻՆ, Էփէմիայի թշին ձեռը տալով։

Ձա՞տ օյինբազն իս։

ԷՓԷՄԻԱՅ

Գէթա՛դվա, Արտուշկա ջան։

ԱՐՈՒԹԻՆ, մտածելով եւ բարձր։

Քառասուն ու հինգ թումա՞ն...

ԷՓԷՄԻԱՅ

Էն չէնքի էքմինը բաս պակաս կուլի՞, քա՛...

ԱՐՈՒԹԻՆ

Էնդու վրայ հիմի քիչ ցածրն ըլի, ինչ հաջաթ։

ԷՓԷՄԻԱՅ

Աբա՛, վի՞ս էկաղբէրա. էնդու վրայ ցածրը խօմ միրիրն է... ամա վուր պէտկը չէ... Խաչը գիդենայ, ամանչում իմ, վուր էրեսս մէչը տիսնում իմ։

ԱՐՈՒԹԻՆ

Տօ, հոքիս հանեցիր խօմ... դիպ տակն ու վրայ արիր էս՝ զանցօրէն։ Ախար՝ էս զալէն պէտկը չէ... էս մէրիլը պէտկը չէ... էս զանավէսկէքն էսէնց չէ... էս գդակդ փոխէ... էս դիմիկիտօնի մագիէր պլատնո հաքի...

ԷՓԷՄԻԱՅ, փաթաթուելով։

Թէ ինձ կու սիրիս, Ա՛ռտուշկա ջան։

ԱՐՈՒԹԻՆ

Քիզ վուր չիմ սիրի, բաս ո՞ւմն իմ սիրում. ամա դուն էլ զուրթ խիստ իս սիրում ինձ, Փէփէլ։

ԷՓԷՄԻԱՅ

Զարթնի քիզ ո՞վ ունիմ աշխրքումը. իմ հոքին

ու մարմինը դուն իս, իմ շունչն ու կենթանութինը դուն իս։

ԱՐՈՒԹԻՆ

Օչով աչկումդ չէ գալի։

ԷՓԷՄԻԱՅ

Աբա՛, միխկ չէ՞, Արտուշկա ջան, ինչս ասում. ախչիկը քի պէս մարթ ունենայ ու նրա աչկումն էլի օքմին գու քայ աշխրքումը՞։

ԱՐՈՒԹԻՆ

Բերիլ տու, բերիլ տու հալիլէքը, (Համբուրելով։) գէնացվալէ սուլչի։

ԷՓԷՄԻԱՅ, փաթաթուելով։

Աբա՛, ո՞վ կանայ ասի, վուր դուն գռփող ու գՁլող իս։

ԱրուԹինի փողպատը եւ շապիկը ուղղում է։

ԱՐՈՒԹԻՆ

Խիստ իս ֆրանտացնում, ամա քու կարմիր բանտի պէս չի ըլի, Փէփէլ։

ԷՓԷՄԻԱՅ, շարունակելով։

Մ՛ուլափ։ (Աւարտելով փոքր ինչ հեռանում է։) Աբա՛, վո՞ւր ֆրանտը կուլի քի պէս։

ՏԵՍԻԼ Ը

ՆՐԱՆՔ, ԳԻԳՕԼԻ

ԳԻԳՕԼԻ, ներս մտնելով միջի դռնից՝ մէկ ձեռքին փոքրիկ զամբիւղով ելակ, կանաչ տերեւներով ծածկած, միւս ձեռքին թղթով շաքարէ հաց։

Ա՛յ, ճարեցի, ախչիկ պարուն. ամա էլի կակլի

տոլ չէ կլուբնիկէն։ Թէգուզ սպանէ, էլ էստու վրայ մինձ չի ըլի, կոսէ։

ԷՓԷՄԻԱՑ, տնտղելով ելակը։

Ա՛յ, հէնց էս էի ասում։

ԳԻԳՈԼԻ, ուրախ։

Հէնց էն է դրօշկէն ուզում էի բռնի, տեսնիմ մէ կինտօ վուրդիոը ճարիլ էր։ Ախար առուտեհան էլ օշով չթողի, դիփունանցն ասի։

ԷՓԷՄԻԱՑ, չարանալով։

Ա՜խ, Գիգոլի, քու բէդասլութինը խօմ ինձ իստակ սպանում է. արա վուր օրն իմ 'ես կինտօիմէն իքմին առի, վուր հիմի էս էլ իս մօգոնի. չէիր կանա դուն ինքդ գնա բաղը՞։

ԳԻԳՈԼԻ, շփոթուած։

Ախչի՜կ... պարուն...

ԱՐՈՒԹԻՆ, էփէմիային։

Վա՛, հէր օխնած, էլի բաղի կուլի. ախար կինտօն ինքը խօ չէ շինում։

ԷՓԷՄԻԱՑ

Աբա, վո՞ս էկադրէբա. նրանց կիխտուտ ձեռնիրը, (Զզուանքով։) թը՛, թը՛, թը՛, թը՛... Վա՜յ, վուր 'դոնաղնիրը պիտի գան յօրէս, թէ չէ էս սհաթիս ակօշկէն կօծէի դիփ մէտի... (Դիմելով Գիգոլուն։) Ուրի՞շ, էտ ինչ է։

ԳԻԳՈԼԻ

Էս էլ պիրօժնիքն է, փոխեցի։

ԷՓԷՄԻԱՑ

Հա՛։ (Տնտղելով շաքարէ հացը, կանչում է։) Սամսօն, Սամսօն։

ԱՐՈՒԹԻՆ, Գիգոլու ձեռքում ելակը տնտղելով։

Գնա՛ ու գնա, Փէփէլ, խիստ թազէն է, կոսիս ձեռով չէ քաղած։ (Մէկ հատ ելակ բերանն է դցում եւ ծամելով։) Լաւն է. իմ մամա Կիրակուսն էլ առանց էս եօլա չէր գնում։

ԳԻԳՈԼԻ

Էլ խօ բան չունիք, ախչիկ պարուն։

Աջ դռնից մտնում է Սամսօնը արխալուխի կոճակները դարձեալ բաց, ինչպէս առաջ։

ՏԵՍԻԼ Թ

ՆՐԱՆՔ, սկզբում նաեւ ՍԱՄՍՕՆ

ԷՓԷՄԻԱՑ, Գիգոլուն։

Բաս բան չունի՞մ... Մուլափ էստի։ (Սամսօնին։) Էս կլուբնիկը տար սարդափն ու էս պիրօժնին էլ վաղերումը լաւ բարաթ շինէ։ (Սամսօնը վերցնում է։) Էլի դօշիտ կոճկնիրը բաց տուն էկար ինձ մօդ։ Աստուձ գիդենայ, վիրշի դամն իմ ասում, թէ մէկ էլ տեսիլ իմ քիզ էտէնց, էլ մէ սահաթ չիմ պահի քիզ։

ԳԻԳՈԼԻ, առանձին գլուխը շարժելով։

Օ՛հ, օհ, օհ, կրակի կաուր է՞։

ՍԱՄՍՕՆ

Բանումն էի, ախչիկ պարուն։

ԷՓԷՄԻԱՑ, բարկանալով։

Ջուղաբ էլ է տալի։ (ԱրուԹինին։) Աբա՛, պահելու է՞։

Գիգոլին առանձին Թափ է տալիս օձիքը։

ԱՐՈՒԹԻՆ, Սամսոնին սպառնալով։

Հրա՜, մու՛ղայիթ կաց... Դէ՛, գնա՛ բանիդ, էլ ինչ իս էտի կանգնի։ (Սամսոնը գլուխը շարժելով դուրս է գնում աջ դռնից, զամբիւղը եւ շաքարէ հացը ձեռքին։ Ցետոյ Էփէմիային, ցածր։) Ախար ձեռին բան ունէ խիղճը, տեսնում իս քրտնքումը ծլծլում է, բա՛ս էմարթլէբի։

ԷՓԷՄԻԱՅ, շարունակելով։

Չէ՛, խիստ է խարաբ ըլում ախար, է՜։ Էսօր դօշը բաց տուն էկաւ, էքուց առանց ախալուխ կու տուն գայ։ ԲՀի համարցակուլթինը վո՛ւս էկաղրէբա։ Մէ-մէ ախչիկ պարուն էլ կայ, իրանց բՀի հիդ մասլահաթ-նիր ին անում. խօ գիդիս՝ 'ես էս հանգի բանիր չիմ սիրի։ Լաքիէն պիտի լաքիա ըլի։

ԱՐՈՒԹԻՆ

Լա՛ւ է, լաւ, էս մէկը բախչէ. 'ես կու խրատիմ իրան։ (Գնալով ձեռքերը ետեւը դարսած եւ համրիչը ձեռքին, կէս ճանապարհից կիսաձայն երգում է։)

«Պիրզէդ գաքվս խալի, շաւ շաւի թվալի,
նախվա մսուրս չէնի։»

Դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ Ժ

ԷՓԷՄԻԱՅ, ԳԻԳՕԼԻ

ԷՓԷՄԻԱՅ

Չէ՛, մէ հէնց ապրիս, Գիգօլի, հասկացրու էն լպստածին, վուր քաղաքավարի կենայ. իմանում իս, ինչ իմ ասում։

ԳԻԳՕԼԻ

Իմանում իմ, իմանում, ախչիկ պարուն, բաս չիմ իմանո՜ւմ. ուրիշ ինչ էիր հրամաւում։

ԷՓԷՄԻԱՅ

Ա՛յ, Գիգօլի, էս սհաթիս գնա, Թաղլիթինց մաղազինումը հալիլէք իմ տեսի, Ջուխտը քառսուն ու հինգ թուման ին ասում, էս սհաթիս էվէտ վաղեցնիլ տու. թէզուզ չուրս մշակ բռնէ, էգէբա ինչրու 'ղոնաղներու գալը վրայ հասցնինք։

ԳԻԳՕԼԻ

Էս սհաթիս, ախչիկ պարուն. ամա աղէն ասիլ է։

ԷՓԷՄԻԱՅ, բարկացած։

Հիմի դո՜ւն. աղէն 'ես իմ, հրամաւում իմ, էլի՜։

Դրսից աղմուկ է լսվում։

ԳԻԳՕԼԻ

Է՛ս սհաթիս, էս սհաթիս, ախչիկ պարուն։

Միջի դռան մօտ դրսից լսվում է ՍԱՄՍՕՆԻ ձայնը՝ Կացի, գնամ ասիմ, է՜... ՊԷՊՕԻ ձայնը՝ Կացի-մացի չիմ գիդի, թող թէ չէ, էս սահաթիս...

ՏԵՍԻԼ ԺԱ

ՆՐԱՆՔ, ՊԷՊՕ

ՊԷՊՕ, ներս մտնելով միջի դռնից, գլխարկը ծածկած եւ զարդի հագուստով։

Փիէ՜...

Գլուխ է տալիս։

ԷՓԷՄԻԱՅ

Ի՞նչ իս ուզում, ո՞վ իս։

ՊԷՊՕ

Ով ի՞մ, 'զօնաղ իմ, վա՛։

ԷՓԷՄԻԱՅ

Դուն՝ միր 'զօնա՞ղ։

ՊԷՊՕ

Հէնց 'ես։

ԷՓԷՄԻԱՅ, ծիկայ տալով։

Օտկեցէք, օտկեցէք, ո՞վ է քրիստոնայ։

Դուրս է վազում ծախ դռնից։

ՏԵՍԻԼ ԺԲ

ՊԷՊՕ, ԳԻԳՕԼԻ

ՊԷՊՕ, առաջ գալով, առանձին։

Ա՛յ, քնթէմէն դուս գայ էն հացը, ի՞նչ մարթ ձիր հացն ուտէ, հրա՛։

ԳԻԳՕԼԻ

Ի՞նչ իս ուզում, ախպէր, ի՞նչ բան ունիս։

ՊԷՊՕ

Հալբաթ բան ունիմ, վուր էկիլ իմ, էլի՞, վա՛։

ԳԻԳՕԼԻ

Չի ըլի՞, վուր մինք էլ իմանանք։

ՊԷՊՕ

Ի՞նչ կու աւելնայ քիզ. դուն գնա՛ աղա Արութի-նին ի՛մաց արա, վուր 'ես էստի իմ։

ԳԻԳՕԼԻ

Ախար դուն ո՞վ իս։

ՊԷՊՕ

'Ե՞ս... (Նստելով կուշէտկայի վրայ։) 'ես իմ։

ԳԻԳՕԼԻ

Վա՛...

ՏԵՍԻԼ ԺԳ

ՆՐԱՆՔ, ԱՐՈՒԹԻՆ

ԱՐՈՒԹԻՆ, ներս վազելով ծախ կողմից։

Ի՞նչ խարար է, ի՞նչ խարար։

Տեսնելով Պէպօին, մնում է սառած։

ՊԷՊՕ, վեր կենալով տեղից, գլխարկը վեր է առնում եւ գլուխ տալիս։

Բարի աչողում, աղա Արութին։

ԱՐՈՒԹԻՆ, Գիգօլուն ցուցը։

Դուն գնա բանդ տիս։

ԳԻԳՕԼԻ, առանձին։

Ղուրթ, հալիլէքը։

Դուրս է վազում միջի դռնից։

ՏԵՍԻԼ ԺԴ

ՊԷՊՕ, ԱՐՈՒԹԻՆ

ԱՐՈՒԹԻՆ

Հը՞, ո՞ւր իս էկի, ախպէր։

ՊԷՊՕ

Ա՜յ, համեցէք նստի։

Ինքը մօտ քաշելով մի աթոռ, նստում է։

ԱՐՈՒԹԻՆ, նստելով կուշէտկայի վրայ, առանձին։

Իմ տանը սա է մօհրաթ անում ինձ։ (Պէպօին։) Ախար էս չախն ուր իս էկի։

ՊԷՊՕ

Կուշտը քաղցածին ինչ է հարցնում... Բօղազս մի դուս կտրի, աղա ԱրուԹին. Թէ էս սահաթիս չիս տա, վարցկ կօնիս, վուր ինձ սպանիս էստի էվէտ։

ԱՐՈՒԹԻՆ

Թէ իմքին պարտ իմ, ախպէր, ըմս գէմարթլէբի։ Ո՞ւմ փուղն իմ կերի, վուր քու փուղն ուտիմ։ Ինչոր բարաթ էիր ասում... ԳԹամ, բերիլ իս։

ՊԷՊՕ, առանձին, կրծքին խփելով։

Ը՜մ... (Բարձր։) Բարաթը չկայ, իսօ գիդիս. դուն քու դաւԹրներումը գԹամ Թէ չէ։

ԱՐՈՒԹԻՆ

Իմ դաւԹրներումը շատ պտռտեցի, հախ Աստաձու, ամա մէ ասօ էլ չգԹայ ձիզ համա։

ՊԷՊՕ

Բաս ինչ անինք հիմի։

ԱՐՈՒԹԻՆ

Ի՞նչ պիտի անինք. դուն քիզ համա, 'ես ինձ համա։

Գրպանից հանում է սաթէ համրիչը եւ զցում։

ՊԷՊՕ

Վունց Թէ դուն քիզ համա, 'ես ինձ համա։ Բաս քու մտկումը պարտ չիս ինձ։

ԱՐՈՒԹԻՆ

Ախպէր, ինչ պիտի պարտենամ. բարաթ դուն չունիս, դաւԹրումս 'ես վունչիչ չունիմ գրած, ինչ պիտի պարտենամ քիզ։

ՊԷՊՕ

Բաս քու սրտի դաւԹրումն էլ վունչիչ չկայ գրած։

ԱՐՈՒԹԻՆ

Սրտի դաւԹարը վուրն է։

ՊԷՊՕ

Բաս քու խնպտանքը վունչիչ չէ ասում քիզ, էլի. խօ գիդիս, վուր պարտ իս։

ԱՐՈՒԹԻՆ

Վուր գիդենամ խօ կու տամ, էլի. էլ ուր իմ խօսեցնում։

ՊԷՊՕ

Բաս Գիքօն ուր է ասում։

ԱՐՈՒԹԻՆ

Մէլամ, ասում է, Թավիսի կուդի մօի'ղվանա մօծամէԹ։*)

ՊԷՊՕ

Աղա ԱրուԹին, վերիւը խօ Աստուձ կայ ու քու սիրտն էլ է կարԹում, իմ սիրտն էլ, ամի Աստձէմէն ձեռը մի վիկալնի։

ԱՐՈՒԹԻՆ

Ի՞նչ շառիր իս մօգնում գլխիս, ախպէր. օքմին լսէ, հէնց կու գիդենայ զուրԹ իս ասում։

---

*) Վրացերեն է։—Աղուէսն իր պոչը վկայ բերեց։

ՊԷՊՕ

Դուն գիդիս վուր դուրթ իմ ասում։ Քու վուրթ-կերանց արիւ սադաղա, խղճա միզ։ Էտ փուղը 'ես ինձ համա չիմ ուզում...

ԱՐՈՒԹԻՆ, խօսքը կտրելով։

Տէր օղորմած Աստուձ։

ՊԷՊՕ, շարունակելով։

Մուլափ, մուլափ, ինչրու վիրշն անդամ դի. էտ փուղով իմ քուրը նշնած է, խոստացիլ ինք, պիտինք տա, ու թէ էս սահաթիս չտվինք, քվիրս թողնում ին, ուրիշ ախչիկ ին ուզում էս գիշիր։ Ախար մէ Աստձու այեաղ դադաստանը միտդ բի, է... խօ քիզ էլ կու խօսեցնին էնդի, ինձ էլ. ինչ ջուղաբ կու տաս, վուր չիս տալի։

ԱՐՈՒԹԻՆ

Փիէ... (Մտածմունքի մէջ է ընկնում։) Այեաղ դադաստանը գիդենայ, վուր դրուսա միտս չէ էտ պարտկը։

ՊԷՊՕ

'Ես ասում իմ դրուստն, էլի. ինձ չիս աւտում։

ԱՐՈՒԹԻՆ

Վա՜, էտ վունց կուլի, Պէպան. ամեն մարթ վուր գայ ու էտէնց խօսի, տասը միլիօն էլ վուր ունենամ, մէ օրումը կու հատնի։ Զէ՜, ախպէր, միր առուտրի հէսաբը էտէնց չէ։

ՊԷՊՕ, վեր կենալով տեղից եւ գլխարկը ծածկելով։

Բաս չիս տալի, էլի։

ԱՐՈՒԹԻՆ

Պարտկով կի վունչիչ տալացու չիմ, ախպէր. ամա

քուր իս մարթու տալի՞, ջուխտ ամկիս։ (Ծոցից հանում է պօրտմօնէն։) Ըհա՜հա, (Թղթադրամ տալով։) վարցկ բան է, բռնէ, ախպէր։

ՊԷՊՕ, գլխարկը վեր առնելով գլուխ է տալիս։

Ա՛յ, Աստուձ վուրթիքդ զօրացնէ։

Առնում է փողը եւ գլխարկը ծածկում։

ԱՐՈՒԹԻՆ

Է՛տ հինգ թուման, համբրէ, (Պէպօն գունատվում է։) դրուստ հինգ թուման է. հինգ թուման էլ, դուքնօքս ամնց կացի, էնդի կու տան, էս սահաթիս օքմին կու ղրգիմ։ Դնա՛, ախպէր, Աստուձ բարի վայելումը տայ։

ՊԷՊՕ, փողին նայելով եւ շփոթուած։

Հինգ թուման ու հինգ թումամն... (Լռութիւն։) Մնաքցածը... Ախար իմ քվիր համա հարուր թուման ինք խոստացի։

ԱՐՈՒԹԻՆ

'Ես ինչ անիմ, վուր խոստացիլ իք. բէհէսաբ նամաղուլ իք արի, վուր խոստացիլ իք. ում փուղն էիք խոստանում, վուր խոստացիլ իք։ Մարթ իր լհէբի գօրա կու ձրէ վունը թէ չէ։ Դուք էլ վուր հարուր-հարուր թումնիր իք խոստանում, էլ ուրիշն ինչ անէ։ Էս ինչ խարաբ էլաւ աշխարքն, ախպէր. էլ օչովու համա չափս ու ձիւ չկայ։

ՊԷՊՕ

Միր բանը մինք գիդինք, պարուն, ձիր բանը դուք. խոստացիլ ինք, միր փուղն ինք խոստացի, քիզ ինչ դաւի։

ԱՐՈՒԹԻՆ

Խոստացիլ իս ու տար իրան տու, էլի՜. էլ ի՞նչ իս ուզում։

ՊԷՊՕ

Ի՛ս տու, վուր տամ, է՜. ախար էս վուր տալիս իս, մասխարա իս գցում, թէ ի՞նչ խաբար է։

ԱՐՈՒԹԻՆ

Ա՛բի ու սրապէներուն վարցկ արա։ Տօ, ինչով չիս իմանում, վուր վունչիչ պարտ չիմ 'ես ձիզ ու էտ էլ ինչոր տալիս իմ, հոքուս համա բախշում իմ։

ՊԷՊՕ

Բախշում ի՞ս... Գանա 'ես ախկատ իմ, էկիլ իմ օղորմութին իմ ուզում քիմէն. 'ես իմ հախն իմ ուզում, իմ հա՞խը. ի՞նչ կօնիմ 'ես քու բախշիչը։

ԱՐՈՒԹԻՆ

Չիս ուզի ու էստի տու, ինձ պէտկը գու քայ։ Ախկատ ու հմպարտ, վուր կօսին, էս է, ա՜յ։ Բի՛, էլի՜, բի՛. ի՞նչ իս թամաշա անում։

ՊԷՊՕ

Բաս թամամ չիս տալի, էլի՞։

ԱՐՈՒԹԻՆ

Տօ, գժվիլ ի՞ս, թէ ի՞նչ խաբար է. ի՞նչ իս ուզում ինձմէն։ Զօռով պմրտկ կուլի աշխրքումը՝ չլինքս իս գցո՞ւմ։

ՊԷՊՕ, առաջ գնալով։

Ա՛բա օրթում կի թէ պարտ չիս, օրթում կի, էլի՜. մարթ կուլիս՝ օրթում կուտիս։

ԱՐՈՒԹԻՆ

Օ՛րթում, հաւատ, Ա՛ստուձ, (Պէպօն զարհուրում

է։) 'Երգինք, իմ վուրթկերանց արիւը գիդենայ, վուր վունչիչ պարտ չիմ...

ՊԷՊՕ, զայրացած։

Ա՞յ, Աստուձ ու 'Երգինք խռով կենայ գլխիտ։ (Խփելով փողը Արուեթինի երեսին։) Հը՛, բռնէ, ա՛ճկդ դի, կնգատ համա իմքին կունենաս առնելու։

ԱՐՈՒԹԻՆ, աղաղակելով եւ տեղից վեր թռչելով։

Օտկեցէք, 'զարաուլ, սպանեցին, մորթեցին... Ո՞վ կաք էտի...

Ներս են թափվում՝ ձախ դռնից Էփէմիան, աջ դռնից Սամսօնը, հագնուած եւ զարդարուած, ինչպէս պատուիրել էր Էփէմիան երրորդ տեսիլում. իսկ միջի դռնից երկու այլ ծառայ ֆրակով եւ սպիտակ ձեռնոցներով։ Տեսարան։

ՏԵՍԻԼ ԺԵ

ՆՐԱՆՔ, ԷՓԷՄԻԱՑ, ՍԱՄՍՕՆ, ԵՐԿՈՒ ԱՅԼ ԾԱՌԱՅ

ՊԷՊՕ, ձախ ձեռքով ցոյց տալով ծառաների վրայ։

Է՛ս է քու մարթութինն, էլի՜... (Երկար լռութիւն։) Ա՛յ, հաւատամ ըլի քիզ քու հարստութինը։

ԱՐՈՒԹԻՆ, սաստիկ շփոթուած, ծառաներին։

Տօ, օտկեցէք է՞, ի՞նչ իք թամաշա անում, տեսնում իք՝ ուզում է սպանի ինձ։

Սամսօնը եւ ծառաները մօտենում են Պէպօին։

ՊԷՊՕ, ծառաներին մղելով։

Մ՞ուլափ, դէ՞նը... (Արուեթինին։) Էս օսկէ պատիրը, վուր սարքիլ իս, ո՞ւմ փուղով... հազար ինձ պէսնե-

բուն թանկիլ իս, գանա, քար ու կիրը միր արնով իս շաղըդի, գանա. դիփունանց ամկիրը արլանդվա իս արի ու հիմի ծանդը ու բարակ քիզ համա նստած քէփ իս անում, էլի։

ԷՓԷՄԻԱՑ

Դուս արէք, դուս արէք։

ԱՐՈՒԹԻՆ

Դուս, դուս, ասում իմ։ (Ծառաներին։) Դուս արէք, չիք իմանում։

Ծառաները յարձակվում են Պէպոի վրայ։

ՊԷՊՕ

Դո՞ւս... (Ծառաներին նորից մղելով։) Դէ՞նը, դէ՞նը։ (Ծառաները փոքր ինչ հեռանալով կանգնում են միջի դռան առաջ։ Արութինին։) Փուղիրս հաշա իս ուտում, ու դուս էլ իս անում, էլի՞... Դո՞ւս կէհամ, դո՞ւս կէհամ, չարէս ի՞նչ է, զօռը քունն է. ամա լաւ գիդացի, պարուն Արութին, էս արարմունքը քիզ չի մնա... վերիւրն Աստուձ կայ, քնթէմէտ կու հանէ քու անօրէնութինը։ (Ծառաներին հրելով։) Դէ՞նը, դէ՞նը...

Դուրս է գնում միջի դռնից։

ԱՐՈՒԹԻՆ, Պէպոի ետեւից, ծառաներին։

Գնացէք, գնացէք հիդը, վունչիչ չտանէ, վունչիչ չփախցնէ։ (Ծառաները դուրս են վազում Պէպոի ետեւից։) Էսէնց էլ լպստած։

Կռանում է եւ փողերը հաւաքում։

—oo—

ՏԵՍԻԼ ԺԶ

ԱՐՈՒԹԻՆ, ԷՓԷՄԻԱՑ

ԷՓԷՄԻԱՑ

Գլի՞ժ է էն մարթը, թէ էս ի՞նչ խաբար է։

ԱՐՈՒԹԻՆ, փողերը ծոցը դնելով։

Ա՛րի ու սրապէսներուն վարցկ արա հիմի։

ԷՓԷՄԻԱՑ

Էս ի՞նչ բան է ախար, չիս ասի՞։

ԱՐՈՒԹԻՆ

Աստուձ վուչ գիդէ նրա գլուխը. քուր իմ մարթու տալի, կօսէ. 'ես ի՞նչ անիմ վուր մարթու է տալի։

ԷՓԷՄԻԱՑ

Բաս էն ի՞նչ էր ասում, թէ փուղիրս հաշա իս ուտում, կօսէ։

ԱՐՈՒԹԻՆ

Արա, քիմէն չիմ արմնո՞ւմ, Էփէմիայ. փուղ հաշա ուտիմ ու էն էլ նրա պէս մարթունը՞, չիս ճանչնում ի՞նձ։

ԷՓԷՄԻԱՑ

Էտ փուղիրը վուր ծուցդ դրիր, նրանը չէր բաս։

ԱՐՈՒԹԻՆ

Նրա հօրն օղորմի. վուխչ իմ կայինքն էլ նրանը կուլի, բաս։ Էկաւ, թէ խիղճ մարթ իմ, կօսէ, քվիրս համա բաժինք չունիմ, կօսէ, քու վուրթկերանց արիւ սաղաղա, օտկէ միզ, կօսէ. 'ես էլ ախմախ-ախմախ հա-

նեցի ու բախշեցի։ (Նեղանալով։) Ընորհակալութեան մագիէրն էր, վիկալաւ ու ճակտիս խփից. քիչ է, կոսէ։

ԷՓԷՄԻԱՑ, Թուշը վէր բերելով։

Վա՜յ, քոռանամ 'ես, դուրթ իս ասում, Արութին ջան։

ԱՐՈՒԹԻՆ

Բաս սուտ իմ ասո՞ւմ։

ԷՓԷՄԻԱՑ, չարացած։

Քու հա՞խն է, խիստ լաւ էլ է արի. էտ էն գիդենայ, վուր ժամէմէն դուս գալիս, հարուր ախկատ էլ վուր ըլի դռանը, դիփունանց ձեռին՝ (Գործողութիւնը ցոյց տալով։) «բռնէ, բռնէ, բռնէ»... Իժում էտէնց կու թողնի՞ս էտ անպատուութինը։

ԱՐՈՒԹԻՆ

Ի՞նչ պիտի անիմ։

ԷՓԷՄԻԱՑ

Աշխրքի լափը գլուխտ ածաւ...

ԱՐՈՒԹԻՆ

Ի՞նչ անիմ։

ԷՓԷՄԻԱՑ

Վա՜յ, քոռանամ 'ես. էլ բան չմնաց, վուր քիզ չասաւ, ու էն'զադա բէարուութինը դուն կուտի՞ս։ Ի՞նչ կոսին խալխը։

ԱՐՈՒԹԻՆ

Խալխն ի՞նչ գիդէ, գլուխը քարը տայ. թող, խիղճ մարթ է։

ԷՓԷՄԻԱՑ

Վո՞ւնց թէ խալխն ինչ գիդէ. էն'զադա բէերանց մոդ չէ՞ր, վուր վրէտ բղաւեցաւ ու ճ'զաւեցա՜։ Աշ-

խարք ու 'երգիր իս թալնի, կոսէ, քսան ու հինգ հազար խղճի տուն իս քանդի, կոսէ, էս արարմունքնիրը քիզ չի մնա, կոսէ. ու էստունք պիտի մարսիս դո՞ւն։ Բէերանց բերնումը իքմին կու կանգնի՞. չիս գիդի, վուր էքուց ինչկլի էս վախտը վուխչ քաղաքը կու իմանա՜յ։ Մարթ ըլիմ, գլխիս գդակ ունենամ ու 'դաբուլ անիմ, վուր էս հանգի պաժարնին իմ տանը ինձ անպատիւ անէ՞. ասէ վուր նրա փուղիրը հաշա իմ ուտո՞ւմ. թաւաթ ինչ ասիս ասում ին քիզ վրայ ու հիմի պակասը թամամ ըլի՞...

ՏԵՍԻԼ ԺԷ

ՆՐԱՆՔ, ԳԻԳՕԼԻ

ԳԻԳՕԼԻ, ներս մտնելով։

Հալիլէքը բերի, ախչիկ պարուն։

ԷՓԷՄԻԱՑ, յանկարծ փոխուելով եւ ուրախ։

Հալիլէքը՞... (Շտապով գնում է. կէս ճանապարհից Արութինին, յափշտակուած։) Մէ ա՜բի, մէ ա՜բի, Արտուշկա ջան, տի՛ս թէ ինչ հալիլէք է, ի՞նչ հալիլէք... (Կանչելով։) Սամսօն, Սամսօն...

Շտապով դուրս է գնում միջի դռնից։ Գիգօլին ու Սամսօնը, որ դուրս է վազում աջ դռնից, հետեւում են նրան։

—∞—

ՏԵՍԻԼ ԺԸ

ԱՐՈՒԹԻՆ, մենակ։

Տօ, ղուրթ, ինչ օյին էկաւ գլխիս էն լօթի պաժարնին... էլ մինձ ու պստիկ չկայ աշխրքումը... էն հանգի ախկատ ղազօն վրէս էնէնց բղաւի, (Ման գալով։) էն հանգի խօսկիր ասէ... (Հայելումը ուղղվում է։) Բօշացաւ, բօշացաւ աշխրքի բանը... (Հեռանում է հայելիից։) Պարտ իս, կօսէ... Գժվիլ է... Ինչ պարտք, ինչ վլաւ, ինչ փստան... Ո՞վ ասաւ, վուր պարտ իմ... ով գիդէ, վուր պարտ իմ... Թէ պարտ իմ, ինչի՞ ինչկլի էսօր յիդ չիմ տվի... Եա նրան վուր տամ, մէկէնները՞ն ինչ ասիմ... Նրանք ինչ գէթ ին արի... Չէ, (Նստում է։) վունչիչ պարտ չիմ... սուտ շառիր ին մօգօնում... Թէ պարտ իմ, ինչի՞ բարաթ չունէ... Վուրդի է... ով ունէ... ինչ բարաթ... Բարաթ չկայ... գնացիլ է... Ջնջվիլ է... Թէ չէ էլ ինչ օրութին է... Ամա էն լօթի պաժարնին պիտի ամեն տիղ բղաւի, վուր փուղ իմ պարտ ու յիդ չիմ տալի՞... (Վեր է թռչում տեղից։) Չէ, չէ, էփէմիէն դրուստ է ասում... Պիտի 'ես բղաւիմ, 'ես պիտի հարայի տամ, աշխարք ու 'երգիր դարթեցնիմ, վուր ինձ, ինձ պէս ադա մարթուն էսէնց անպատիւ արին, էսէնց շառիր ին գցում վրէս... Մ՞ուլափ, 'ես քիզ կու չանց տամ, լօթի պաժարնի...

Դուրս է գնում ձախ դռնից։

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾԻ

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

Առաջին արարուածի սենեակը, միևնոյն ձևով կարգաւորած և դամբը թոկի վրայ փռած։ Առաւօտ է։

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԿԷԿԷԼ, մենակ տախտի վրայ նստած, մի փոքր ժամանակ լուռ կարում է, յետոյ սկսում է երգել։

«Սիրելիդ, ինձ ատել ես,
Ատել ես, նախատել ես,
Ջիգարըս կտրատել ես,
Արնաշաղաղ ես արել։»
(Աչքերը սրբում է։)
«Ինձ տեսնելիս տուր բարով,
Խորհուրդդ ասա գրով։»
(Լացի ձայնով։)
«Ինձ իսօ մորթել չես սրով՝
Անսուր մատաղ ես արել։»
(Լաց է լինում։)

Ա՛խ, Աստուա՛ձ, 'ես էլ կօսիմ թէ ամ՞մորթի իմ... Ինչի՞ ստիղծեցիր ինձ, ինչցու իմ աշխրքումը. անմիղ գեղնի էրեսին տիղ իմ բռնում... Էն ուփրօ լաւ չի ըլի՞, վուր գեղնի տակն ըլիմ ու գերեզմանս վուտի տակը կոխշրտում ըլի՞ն... Ինչի՞ չիս սպանում ինձ,

Աստուած... Դուն իսօ լաւ գիդիս, վուր մահն ուփրօ հիշտ է ինձ համա, կանց չունչ քաշիլը... (Լռութիւն։) Ջուրը ննգնիմ, թոկով խիխտվիմ, դանակ ցցիմ սըրտումս. ինչ ջուղաբ տամ Քիզ... (Լաց է լինում։) Ա՛ստուած, Ա՛ստուած, եա կէծակ վէր գցէ գլխիս, եա կարմնջի վրայ անց կենալիս կարմունջը փուլ ածա վուտիս տակը, եա գեղնին ման գալիս, գեղինը պատռէ ու ինձ դէվէր տար...

Լաց է լինում։

ՏԵՍԻԼ Բ

ՆԱ, ՇՈՒՇԱՆ

ՇՈՒՇԱՆ, ներս մտնելով ձախ դռնից։

Էլի լաց իս ըլում, Կէկէլ։

ԿԷԿԷԼ, աչքերը սրբելով։

Զարթնի լացը՝ ինչ է մնացի ինձ, դէդի... էս արտըսունքն էլ վուր չըլի տվի Աստուած, սիրտս ինչով հովցնիմ։

ՇՈՒՇԱՆ

Ախար էտ՚ղադա արտըսունք կուլի, վուրթի. իսօ քամվեցար խտակ։

ԿԷԿԷԼ

Բաս ինչ անիմ. դօշիս հէնց գիդիմ աղաքար է պառկած... էս արտըսունքն է ինձ օտկում մէ քիչ, թէ չէ դարդու խիխտվում իմ։

ՇՈՒՇԱՆ

Դարդ ցաւի դայ ու Աստուու պատիժի էն սիւ-

սրտովը։ Ամէ՚, վուր էտ՚ղադա դարդ իս անում նրա համա՞։

ԿԷԿԷԼ

Աշխըքումը բէդնամ էլայ, գլուխս դուս կտրվեցաւ, էլ տալի ու սծօրի էրեսին չիմ կանացի մտիկ տա. էս ապրիլ է։

ՇՈՒՇԱՆ

Մի դարդ անի, Կէկէլ ջան, մի դարդ անի. Աստուա օղորմած է, կուլի նրա վրայ լաւ մարթու է ռաստ բերում քիզ։

ԿԷԿԷԼ

Մարթու աճկն էլ կարիմ. նրանք խճպտանք ունին, նրանք հոքի ունին... Ինձ պաչ արաւ ու իմ պաչը տարաւ ուրիշին էրիտ... (Գլխին խփելով։) Գեղինը պատռէ ու ինձ դէվէր տանէ։ Էլ 'ես 'Երգնքի էրեսը վունց պիտի տեսնիմ։

ՇՈՒՇԱՆ

Աբա՛, դուն վուր էտունք իս անում, Կէկէլ, 'ես ինչ անիմ... (Լաց լինելով։) Մինկը չիմ. բաս 'ես վունց դիմնամ՝ իմ սիւ ու մութ օրին մէ կուռը, քիզ մէկէլին... Էտ հանգի օրինակնիր շատ է էլի, վուրթի, մենակ միզ համա իսօ չէ ստիղծած աշխարքը։ Քանի միզպէսնիրը կան, քանի միզ վրայ վատթարն ասա, հացի հասրաթ ածած ին, մէ թիքայ հացին էրնէկ ին տալի, դռնէ դուռը ախկտուլթին ին անում ու էն թիքայ հացը, թէ հազրէնը մէկը տալիս է, մնացածնիրը կինծումը խփելով դուս ին անում... Միզ իսօ Աստուա մէ թիքայ տվիլ է. փառք Իրան, ինչ անիս, հալրաթ միր ճակտին էս էր գրած։ Էլի փառք տանք

Իրան, աղանչաք անինք, վուր էստու վրայ վատթար օրին չռաստ բերէ միզ. իմ Պէպօին Ջան տայ, վուր ինչ թիւքայ միզ տալիս է նրա ձեռով, էն թիքէմէն էլ չզրգէ միզ։

ԿԷԿԷԼ

Էրնէկ Աստուձ ինձ մահ տայ, ուրիշ վունչիչ չիմ ուզում։

ՁՈՒՁԱՆ

Մի ասի, մի ասի, Կէկէլ Ջան. (Գրկելով Կէկէլին։) միխկ է Աստձու մոդ, զէնացվալօս ղէդէն։

ԿԷԿԷԼ, Շուշանի գրկում։

Ա՛խ, դէդի Ջան...

Լուռ լաց են լինում։ Տեսարան։

ՏԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ, ԳԻՔՕ

ԳԻՔՕ, ներս մտնելով միջի դռնից գլխարկով եւ ծեռնափայտով։

Վա՜, օխնած հոքիք, զարթնի էտ՝ բան ու գուրձ չունի՞ք։

ՁՈՒՁԱՆ, Թողնելով Կէկէլին։

Ուրիշ ի՞նչ բան ու գուրձ պիտի ունենանք. թէ գուդիս՝ դուն ծ՚ափ տու, մինք խաղանք։

ԿԷԿԷԼ, վերցնելով կարը։

Ա՜խ...

Շտապով եւ աչքերը սրբելով դուրս է գնում ծախ դռնից։

ՏԵՍԻԼ Դ

ՇՈՒՇԱՆ, ԳԻՔՕ

ԳԻՔՕ

Է՜, լաւ է, ձիր հօրն օղորմի. աթմորթին էլ մէ քիչ համփիրութին պիտի ունենայ։ Ախար մէ գլուխ դիվ լաց իք ըլում, խան մէկն ու խան մէկէլը. էտէնց վո՞ւնց կուլի։

ՁՈՒՁԱՆ, Նստելով տախտի վրայ։

Ի՞նչ անիս, ի՞նչ միր գլխին բան էկաւ, Աստուձ միր դուշմնին էլ չտայ։

ԳԻՔՕ

Աստձու բանը դուն չիս գիդի, Ջուշան, ուրիշ հանգն է սարքի աշխարքը. ուրախութենի հիդ դարդ է տալի մարթու ու դարդի էդնէն՝ ուրախութին... (Նստելով աջ կողմը սեղանի մօտ, քթախոտ է քաշում։) Հը՜մ, է՜... (Երկու ծեռքի ցուցամատները միմեանց կըպցնելով։) Էսէնց է, ա՛յ. քուր ու ախպէր։ Վունցոր քուր ու ախպէր մէկսմէկէմէն չին բաժնվի, էնէնց էլ ուրախութինն ու տխրութինը։

ՁՈՒՁԱՆ, առանձին։

Քո՛ւ աճկն էլ։

ԳԻՔՕ

Ձատ լաւ է չինի, է՜... Ասում է մարթուն՝ էս քիզ ուրախութին, գնա՛, քէփ արա, ասում է. իժում էն քէփումը մէկ էլ տեսնիս մէ դարդ է լուս գցում միզ

համա, վուր ինչ է՝ հըը՞... Իրան չմտէն գցինք... Գոհանամ Քիզ, Աստուած։

ՁՈՒՉԱՆ

Էրնէկ գիդենամ՝ ըն դրօս քարոզի վուխտ է։

ԳԻՔՕ

Մուլափ, Ձուշան, մուլափ. ախար դուն չիս գիդի թէ խօսկս վուրդի է գալի, է՞։ Ինձի ինձ էրվում իմ, խորվվում իմ, ամա էլ ինչ կանամ օտկի։ Մէկ փիքը իմ անում, վուր կուլի դժուխկը գնամ. ամա մէկէլ ասում իմ, վուր հալբաթ էս Աստձու բան էր։ Հիմի գուզիք ինձ սպանեցէք, գուզիք Աստձուն փառք տվէք, վուր հոքիս բերնումս է ու խօսում իմ։

ՁՈՒՉԱՆ

Վախտ իս գթի դուն էլ, Գիքօ. առանց էն էլ դարդու տրաքվում իմ։

ԳԻՔՕ

Ես էլ էտ իմ ասում, Ձուշան, է՞։ Տիս հիմի, էտ դարդի հիդ ինչ ուրախութին է գալի։ (Ձուշանը զարմացած նայում է։) Արմնում իս, գանա, Ձուշան։ Վուրն էն չախը թամաշա արա, 'եվոր դիփ կօսիմ։ (Գրպանից ծալած թուղթ հանելով եւ աջ ձեռքով բարձրացնելով։) Ա՞յ։

ՁՈՒՉԱՆ

Էտ ինչ է։

ԳԻՔՕ

Ի՞նչ է՞... էն է, էն, Ձուշան։

ՁՈՒՉԱՆ

Վուր չիմ իմանում։

ԳԻՔՕ

Ա՛յ, կու իմանաս. համփիրութինը բաժնելիս Աստուած քիչ փային կնիկարմատին էրիտ։ Հիմի ինչ համփիրութին տվիլ է քիզ Աստուած, դիփ մէտի մօդ արա ու ծանդը ու բարակ ինձ անգամ դի, վուր լիզուս չխառնվի։

ՁՈՒՉԱՆ, առանձին։

Եարաբ էս հանգի էլ մարդ կուլի՞։

ԳԻՔՕ, շարունակելով։

Գիդիս ինչ է, Ձուշան։ Օղորմած հոգի քու մարթը...

ՁՈՒՉԱՆ, երկար ոգոց հանելով։

Ը՞հը՞հը՞հը՞...

ԳԻՔՕ, գրպանից թաշկինակը հանում է եւ աչքերը սրբում։ Լացի ձայնով։

Աստուած ողորմի, Աստուած հոքին լուսաւուրէ. լաւ մարթ էր, անուշով մարթ էր խիղճը։ Քանի ջէր է ձիով Գանջա գնացի ու էկի օղորմած հոքին։

ՁՈՒՉԱՆ, ոգոց հանելով։

Ա՛խ, ախ, ախ...

ԳԻՔՕ

Է՛հ, փոչ աշխար, Ձուշան։

ՁՈՒՉԱՆ

Իժում։

ԳԻՔՕ

Հա... (Դադար։) Մահէմէն մէ քանի օր առաչ, 'ես խօմ դիփ կշտին էի, գիդիս, օթախի դռնիրը կոխվիլ էրիտ, մնացինք 'ես ու օղորմած հոքին...

Աչքերը սրբում է։

ՁՈՒՉԱՆ, տխուր։

Մրտաս է։

ԳԻՔՕ, ձեռքով իր բերանը ծածկելով։

Մուլափ... Ջիբէմէն բալնքնիրը հանից ու էն ձիր սիւ պատի 'ղութինն ուզից, 'ես էլ մոդ տարայ. սա բաց արաւ, էս թուխտը հանից ու ինձ էրիտ։ Անդէրձ արաւ, վուր ինչրու վիրչի ժամանակը վունց քիզ իմաց անիմ, վունց Պէպօին։ Պէպօս, ասում է, ջէհէլ է, կօսէ, վայ թէ փչացնէ, կօսէ, ու իմ Զուշանը կնիկարմատ է, կօսէ, վայ թէ Պէպօի ճանգը գցէ, կօսէ։ Ինչրու վուխտը չգայ, կօսէ, վունց մէկին մի ասի, թէ դուն ունիս, կօսէ։ (Խփելով Թղթին, լացի ձայնով եւ բարձր։) Իմ Կէկէլի բաժինքը էստումն է, կօսէ...

ԶՈՒԶԱՆ, վեր թռչելով։

Էտ ինչ թուխտ է, դանա։

ԳԻՔՕ

Ի՞նչ թուխտ... Արութինի բարաթը։

ԶՈՒԶԱՆ, մօտ վազելով։

Ի՞նչս ասում, Գիքօ... (Խլելով թուղթը ձեռքից։) Ուզում իս հոքիս հանի։ (Բաց է անում թուղթը եւ ճանաչում Արութինի պարտամուրհակը։) Է՛ս է... օտկեցէք... սիրտս գնաց... (Գնում է, իր տեղը վայր ընկնում։ Զարմացած նայում են միմեանց. երկար լռութիւն։) Կինաղամ մեռայ... Իժում, անաստուած, ինչրու հիմի ո՞ւր էիր պահում. Կէկէլիս սպանեցիր ու հիմի՞...

ԳԻՔՕ

'Ես միզ չունիմ, Զուշան, գիդէ Աստուած, վուր միզ չունիմ։

ԶՈՒԶԱՆ, շտապով։

Ա՛յ, Աստուած անէ քու դիվանն ու դաղաստանը։ Էտէնց կատարեցիր անդէրձը՞։

ԳԻՔՕ

Ախար մէ անգամ դի, է՞...

ԶՈՒԶԱՆ, խօսքը կտրելով։

Անգամ ցաւի գաս ու Աստծու պատիժի. էս օրէնք է, վուր դուն արի՞ր։

ԳԻՔՕ

Ախա՜ր, Զուշան...

ԶՈՒԶԱՆ, անդադար Գիքօի խօսքը կտրում է մինչեւ նրա վեր կենալը։

Ախար քիզ ու... (Առանձին։) չօռ ու ցաւ։ (Գիքօին։) Լ՞ռի։

ԳԻՔՕ

Փիէ՞...

ԶՈՒԶԱՆ

Ախար, ինչի՞ պահեցիր, ինչի՞ ինչրի էսօր։ Քու Աստուն ի՞նչ իս ասում, քու հոքուն ի՞նչ ջուղար կու տաս։

ԳԻՔՕ

Տօ, մէ անգամ դի, է՞...

ԶՈՒԶԱՆ

Աբա՛, ասա, էլի։

ԳԻՔՕ

Ա՞յ, Զուշան...

ԶՈՒԶԱՆ, շարունակելով։

Ա՛սա, ասա։

ԳԻՔՕ

Օ՜վէ...

ԶՈՒԶԱՆ

Տեսնիմ ի՞նչ իս ասում։

ԳԻՔՕ

Ախար...

ՀՈՒՀԱՆ

Մէ տուտուց բան պիտի ասիս, էլի՞։

ԳԻՔՕ

Տօ, խօսքս բերնէմէս մի խլի, Է՞...

ՀՈՒՀԱՆ

ԱստՃու 'ղաղաբի գաս, հը՞։

ԳԻՔՕ, վեր կենալով եւ գլխարկը Ցափ տալով։

Էլ վունչիչ չիմ գիդի... (Գնալով։) Կնիկարմատի պէս էլ անդնջո՞ւմ։

ՀՈՒՀԱՆ, բարձր։

Մուլափ, մուլափ, Գիքօ։

ԳԻՔՕ, յետ դառնալով։

Ախար, օխնած հոքի, մէ քիչ համփիրութին ունեցի, ասում իմ, Է՞։ 'Ես խիստ ուրախ իմ, վուր էսէնց էլաւ բանը՞. ամա ԱստՃու դարսողութենին վունց հակառակվի մարթ... (Նստում է միեւնոյն տեղը եւ քթախոտ քաշում։) Հը՞մ...

ՀՈՒՀԱՆ, առանձին։

Կրիմ քու գլուխն, ըահա՞։

ԳԻՔՕ, քիթը սրբում է։

Չիս գիդի, թէ ինչ օյին էկաւ գլուխս։

ՀՈՒՀԱՆ

Էլ մի ծըռծըռեցնի, թէ քու ԱստուՃը կու սիրիս։

Մուրհակը գցում է տախտի վրայ։

ԳԻՔՕ

Չէ, ա՛յ, էս սահաթիս, քիչ է մնացի... Էտ բարթը վուր տալիս էր օղորմած հոքին, շատ ասի,

թէ իմ բան չէ. էտ հանգի ծանդը բիռն, ասի, վրէս մի՛ շալկի, ասի, էլ դնջուրթին չիմ կանա ունենա, ասի. ամա չարաւ։ Հալալ մարթ իս, Գիքօ, կօսէ, (Լացի ձայնով։) զարթնի քիզ ճար չունիմ, կօսէ։ Է՛հ, չարէս ինչ էր, դուն ինձ ասա՛. վիկալայ բարաթին ու մէ 'երիք-չուրս օրվան էդնէն հոքին էրիտ խիղճը. ԱստուՃ հոքին լուսաւուրէ։ (Աչքերը սրբելով եւ լաց լինելով։) բարեխօս ըլի իր Կէկէլի համա։

ՀՈՒՀԱՆ, աչքերը սրբելով երկար ոգոց է հանում։

Ը՞հ, հը՞, հը՞, հը՞...

ԳԻՔՕ

Է՞հ, մախլաս. դիվ մահի վուրթիք ինք... Վուրդի էլի։

ՀՈՒՀԱՆ

Վուր բարաթին էրիտ ջրատարը։

ԳԻՔՕ

Հա՛, էրիտ... Առայ, տարայ տուն, պահեցի... Մէ-մէ մարթ կայ խաղինա է պահում. եարաբ նրա քունը վունց է տանում գիշիրով... Պահեցի... Հին սիգէլնիր ունէի Էրէկլէ պարնի վախտվան։ 'Ես խօ զարթնի մէ քօխին ուրիշ վունչիչ չունիմ. ամա էնէնց պահում էի էն սիգէլնիրը, մարթու խանդիխան կարթացնիլ էի տալի, դուր էր գալի խօսկիրը։ Դուն չիս տեսի, Հուշան։ Ջե՞ր ԱստՃու անումն է գլխին գրած, իժում Քրիստուսինը, իժում Հոքի սուրբը. գալիս է, ադա ջան, իժում աւետարանիչնիրը, սրբիրը, դի՞փ մէ-մէկ, մէ-մէկ, Էն'ղադա օրհնանք, Էն'ղադա բանիր... Է՛հ, գնա՞ց դիվ մէտի. հա՛յիվ, հա՛յիվ միր ժամանակ։

ԶՈՒԶԱՆ

Էտ խիստ հիռու գնացիր, Գիքո։

ԳԻՔՈ

Հիռու կի չէ, խիստ մոգկացայ։ Ախար հէնց էն սիգէլներումը պահեցի էտ բարաթն, է։ Կապեցի, դրի զանդկիս քունջը, բալնիքն էլ ջիրէմէս չէի հիռացնում։ Ամիս չէր անց կենայ, վուր մէ էրկու ջէր զանդուկս չէի բաց արի ու կապուցքս չէի անդրի։ Ամանաթի պէս դժար վունչիչ չկայ աշխրքումը։ Աստուձ, Աստուձ էի անում, վուր Կէկէլի բախտը մէ վախտի բաց ըլի, ու բաց էլ արաւ խօմ Աստուձ... Մէ օր էլ բաց անիմ զանդուկս, տեսնիմ սաղ կապուցքը չկայ։ Հա՜յ դէս, հա՜յ դէն, չկայ, չկայ, չկա՜յ... Զարթնի էս՝ մէ քանի հատ էլ հնուց, շատ հնուց, ա՜յ, սի փուղ ունէի, էն սի փուղն էլ հիդը գում ու կլան է էլի՜. մէկ էլ բանիրը կի զանդկումը իր տիղը անշարժ, սաղ-սալամաթ դարսած է... Ախպէր, թէ գուղ էկաւ, կանց հին գրօշնիրն էր տանում, թաղա փուղն էր տարի՜, էրկու թուման աւել դիփ թաղա Նիկալաի ղըդղըդան մանէթնիր ունէի. թէ սատանայ մտաւ զանդուկս, էն վունց տուն գնաց ու դուս էկաւ, վուր մէ տիղ ծակ չէթող զանդկումը. թէ չէ՝ զանդուկը կոխպած, բալնիքը ջիրումս, վունց հանդաւ էնդունք... Ի՜նչ իմ հալն էր, Զուշան, էն Աստուձ գիդէ, մէ օր հոքի ունիմ տալու... Գարի ասիս, 'ես իմ գցիլ տվի, էփէմէրդի ասիս, 'ես իմ բաց անիլ տվի, շոքած էգեղեցու բոլորքն ասիս, 'ես իմ աղօթկ արի... Իշտահս կապվեցաւ, քունս կոտրվեցաւ, ջում-ջումի դառայ... Էսաի խօ՝ քանի ձիզ տեսնում էի, քանի ձիր լացն

ու սուքը իմանում էի, սիրտս կրակ էր ննդնում... Քանի ջէր ուզում էի բաց անիմ էս բանը, ամա իմ ահու վունչիչ չէի կանացի ասի, լիզուս չէր զօրում, ինչ անիս... Ամա չասիս, Զուշան, թէ ձիր միխկը կու տանէի. իմ աղանչաքը դիփ էն էր, վուր ինչրու էս պարտքը չպրծնիմ, Աստուձ հոքիս չհանէ... Պարծանքսով չիմ ասում, Զուշան, Աստուձ գիդենայ, քոխիս գրաւ դրի ձիզ համա ու փուղիրը էս էրկու օրումը պիտի տան. ամա ինչ փայիդա վուր իր վուխտը չվրայ հասաւ... հալբաթ էսէնց պիտէր... Փառք Քիզ, Ա՛ստուձ, փառք, մեռնիմ Քու ամենակարող զօրութենին։

ԶՈՒԶԱՆ

Իժում վունց գթար ախար էս բարաթը։

ԳԻՔՈ

Վունց գթա՜յ... 'Ես խօ չգթայ, Զուշան, իրան իրան էկաւ... Հիմի ասա՜ թէ վունց։

ԶՈՒԶԱՆ, առանձին։

Հալից ու մաշից։

ԳԻՔՈ, շարունակելով։

Էս իմ սատանի սրուց քվիր տղէն...

ԶՈՒԶԱՆ

Հիմի վուր Ռուսէթ է։

ԳԻՔՈ

Հա՜, հէնց էն աղա-զադէս։ Մէ օր, քանի ջեր էսաի էր, շատ աղանչաք արաւ, վուր էտ սիգէլնիրն, ասում է, ինձ տու, կօսէ, իմ ուսումին պէտկը գու քայ, կօսէ, չունքի հին բանիր է, կօսէ։ Քիզ դրուստն ասիմ, չտվի. ասի չպատուտէ, դէն չածէ, ասի։ Ախար,

թէ թաղա ուսում ին ստանում, հին բանիրը ինչին է պէտք։ Անց կացաւ, գնա՛ց։ Գնալու վուխտը՞...

ՁՈՒՉԱՆ

Նրա գնալը մէ 'երիք ամիս կուլի, գա՛նա։

ԳԻՔՕ

Հա՛, էտէնց է։ Սա, մի՛ ասի, բալնիքս ջիբէմէս կու հանէ, 'ես ով գիդէ՝ ինչ էրազումն էի էն չախը, աղավարի զանդուկս բաց կանէ, կապուցքն ու հին փուղիրը կու ծալըպէ, զանդուկը յիդ կու կոխպէ, բալնիքը ջիբս կու դնէ ու հայդէ։ Ա՛յի ու հիմի դուն ինձ լօրի ասա, տեսնիմ թէ ինձ վրայ 'դօշաղի ձեռնէմէն ինչ կու դուս գէր... Ախար մարթու խօսկը կու իմանան ջեր, Ձուչան, իժում 'ղնամիշ կանին, թէ 'ղնամիշ անելու է. թէ չէ լօրին ինչ անէ, վուր ինձ լօրի իս ասում, Ձուչան։

ՁՈՒՉԱՆ

Իժում։

ԳԻՔՕ

Իժում էլ էն, վուր էս բարաթը էս օր փօշտով ղրգիլ է ու մէ կարարադին էլ մասխարութիննիր է գրի վրէս։ Քու սիգէլնիրը, կօսէ, Փռանգստուն ղրգեցի, կօսէ, ու սի փուղերու համա, ասում է, թէ գուղիս՝ մէ մէնդալ կու ղրգին քիզ համա, կօսէ, ու էս բարաթն էլ, ասում է, յիդ քիզ փէշքաշ, ասում է։

ՁՈՒՉԱՆ

Գեղինը պատռվի ու նրա սատանին դէվէը տանէ, ըհը՞։

ԳԻՔՕ

Սրա՛, Ձուչան, 'ես ինչ միզ ունիմ։

ՁՈՒՉԱՆ

Կէկէլս կի մեռնում է ու ինչ անիմ թէ միզ չունիս։

ԳԻՔՕ

Ասուած օղորմած է, Ձուչան, Ասուած օղորմած է։

ՁՈՒՉԱՆ

Ասուած միր աճկը հանից ու պրծաւ, էլ ինչ օղորմած է։

ԳԻՔՕ

Մի՛ ասի, Ձուչան, մի՛ ասի. Նրա դարսողութինը օչով չի կանա իմանա։ Հալբաթ Նրա կամքն էսէնց էր։

ՁՈՒՉԱՆ

Փառք Իրան, ինչ անինք։

ԳԻՔՕ

Լաւ մարթ վուր էլիլ էր, խօ փուղի համա չէր թողնի Կէկէլին։

ՁՈՒՉԱՆ

'Ես էլ միթամ էտ իմ ասում դիփ, ամա էլ ինչ փայիդա. նամուսներուս կտրվեցաւ, սիրաթներուս գնաց, աշխրքի համա 'ղէնօ ու մասխարա ինք դառի։ Էլ ով գուղէ իմ Կէկէլին... Խիղճ իմ Կէկէլ... (Լաց լինելով։) Նորչի արիւը փչանում է...

ԳԻՔՕ

Է՞, հէրիք արա, քու հօրն օղորմի, Ձուչան։

ՁՈՒՉԱՆ, լացով։

Ա՛խ, Կէկէլ ջան, Կէկէլ...

ԳԻՔՕ, աչքերը սրբելով եւ լացի ձայնով։

Օ՛հ, օհ, օհ, օհ...

ՏԵՍԻԼ Ե

ՆՐԱՆՔ, ԿԱԿՈՒԼԻ

ԿԱԿՈՒԼԻ, ներս մտնելով միջի դռնից։

Է՛ստի մտիկ. քու պտռտելէմէն ջանս գնաց, դուն կի էստի ծանդը ու բարակ նստած իս։

ԳԻՔՕ

Հը՞, ինչ խաբար է։

ԿԱԿՈՒԼԻ, Գիքօի կուռը բռնելով։

Վիկաց, վիկաց, չուստ արա։

ՁՈՒՁԱՆ

Ի՞նչ է պատահի։

ԿԱԿՈՒԼԻ

Ասուռ վուչ գիդէ խիղճ մարթու գլուխը։

ՁՈՒՁԱՆ, վախեցած։

Ի՞նչ է։

ԿԱԿՈՒԼԻ

Պէպօին տարան էս օր առուտեհան։

ՁՈՒՁԱՆ

Ո՞ւր տարան, ինչ իս ասում։

ԿԱԿՈՒԼԻ

Ա՛յ, էն դժուխկի մաշխալէն ինչոր գանգատ է տուն տարի։

ՁՈՒՁԱՆ

Ո՞վ, ինչ գանգատ։

ԿԱԿՈՒԼԻ

Ա՛յ, էն չէյթան Արութինը, ձիզ վուր փուղ պարտ

է. (Կրծքին խփելով։) թէ մէ ճանգս կու ննգնի՞, 'ես գիդիմ նրանը։

ՁՈՒՁԱՆ

Վա՞յ, քոռանամ ու կուրանամ իս. իժում ինչ կոնին Պէպօիս։

ԿԱԿՈՒԼԻ

Ո՞վ գիդէ, դէդի, ինչոր չանին միդ, արմնելուն էն է։ (Գիքօին։) Դէ, մի ուշացնի, Գիքօ, է՞, առուտվան դէսն է քիզ իմ պտռտում. աստաս չվրայ հասնինք էլ։

ՁՈՒՁԱՆ

Փուղը նա՞ է պարտ ու էլի նա՞ է գանգատ անում։ Ա՛յ, Հախմիան Տէրն անէ քու դադաստանը, Ա՛ռութինն։ (Գիքօին։) Վիկաց, էլի՞, ա՛ մարթ, չիս իմանում։ Տար, տար էս բարաթը, սիւցրու նրա էրեսը։

Գիքօն առնում է մուրհակը եւ դրպանը դնում։

ԿԱԿՈՒԼԻ

Ի՞նչ բարաթ։

ՁՈՒՁԱՆ

Էն սիւէրես ու սիւսրտով Արութինի բարաթը։

ԿԱԿՈՒԼԻ, ուրախ։

Ղուրթ... Գթա՛ք... (Վեր թռչելով։) Վա՛, 'ես ձիր հոքուն մեռնիմ... Իժում էտ վունց էլաւ, վունց գթնվեցաւ։

ՁՈՒՁԱՆ

Ա՛յ, ճամփին կոսէ։

ԿԱԿՈՒԼԻ

Սա գթա՛ւ, սա՛...

ՁՈՒՁԱՆ

Հա՛, հա՛...

ԿԱԿՈՒԼԻ, փաթաթուելով Գիքօին։

Չարդ տանիմ 'ես, Գիքօ Ջան, արա լօթին դուն իս հիմի, ա՛յ. հոքումս կու նստեցնիմ քիզ յօրէսի դէնը, իմ հէրն իս դուն հիմի... Դէ, վի՛կաց, էլ մի՛ ուշացնի... Հ՞ըմ, Արուլթին, (Կրծքին խփելով։) տեսնինք հիմի՝ ի՞նչ իս ասում, ի՞նչ իս էլի մօգօնում... (Գիքօի թեւից բռնելով) Արա՛, Գիքօ Ջան, հրա՛...

ՁՈՒՉԱՆ

Ա՛խ, Ա՛ստուա՛, Ա՛ստուա՛։

ԿԱԿՈՒԼԻ, Շուշանին։

Դարդ մի՛ անի, դէդի Ջան, Աստուա՛ օղորմած է։

ՁՈՒՉԱՆ

Գնա՛ցէք, շտապեցէք, վունչիչ չանին Պէպօիս։

ԿԱԿՈՒԼԻ, վեր քաշելով Գիքօին։

Վա՛, հէր օխնած, միխած իս էտի՞։

ԳԻՔՕ, վեր կենալով։

Ա՛յ, գնա՛նք, գնա՛նք... (Պատրաստվում է քթախոտ քաշելու։) Տեսնիմ թէ վո՞ւնց է հաշա ուտում հիմի։

ԿԱԿՈՒԼԻ, ձեռքից խլելով քթախոտի տուփը։

Տօ, արի ճամփին քաշէ, էլի, վա՛։

Թեւից բռնած շտապով տանում է։

ԳԻՔՕ, գնալով։

Ո՞ւհ, ո՞ւհ, ո՞ւհ...

ԿԱԿՈՒԼԻ, փաթաթուելով։

Էլ զահրու'ղըթի չիմ ասի, քի մատաղ, Գիքօ Ջան։

Դուրս են գնում միջի դռնից։

—o—

ՏԵՍԻԼ Զ

ՁՈՒՉԱՆ, մենակ, կանգնած։

Եարաբ ի՞նչ իս ուզում միզմէն, Աստուա՛, ի՞նչ գէթ ունիմ քի մօդ։ Ջեր ա՛ճկս հանեցիր, մարթուս խլեցիր, իժում ախչկաս բախտը քար ու քանդ արիր, հիմի էլ ի՞նչ իս պատրաստում իմ սիւ ու մուլթ օրի համա։ Խղճա՛, Ա՛ստուա՛, խղճա՛. վունչիչ չիմ ուզում քիմէն՝ վո՛ւնց փառք, վո՛ւնց գօվլաթ, վո՛ւնց պատիւ, օղօնդ էս դառն օրվան վրայ ուիրօ դառն օր չչանց տաս միզ։ Դուն փրկէ ու ազատէ իմ Պէպօին։ (Նահալու տակից հանում է դաթիբան եւ բաց անելով մօտենում է ծախ դռանն ու կանչում։) Կէկէլ...

Շտապով դուրս է գնում։

ՏԵՍԻԼ Է

ՊԷՊՕ, մենակ։ Ներս է մտնում միջի դռնից գլխարկով եւ զարդի հագուստով։

Էսէնց էլ աչխա՛ըք... (Գլխարկը վերցնում է, աջ ձեռքի ցուցամատով ճակատի քրտինքը սրբում եւ գլխարկը կրկին ծածկում։) Մարթ գլխէմէն ինչրու վուտը ղուրթ ըլի ու էլի ինքը սուտ դուս գա՛յ... Պատժելու մագիէր ինքը պատժվի՞... Գնա՛, գնա՛ հիմի, Պէպօ, նստի՛ բիրթումն ու լաւ բարաթ փիքը արա աչխրքի բանիրը... Դուն հալալութենի էդնէն մանարի, տեսնիմ ի՞նչ է տալի քիզ քու հալալութինը... Մտիկ իս անում՝ սաղ քաղաքը գիլաներով լցվիլ է.

ով է ասում քիզ, վուր օխչրի 'երիչով ման գաս... Չիս գիդի, վուր բուրթա կու գդի՞ն...Քիզ ով էր ասում ձէնդ բացրացնիս. ում վրայ իս ձէնդ բացրացնում, ինչով... ի՞նչ կայ ձեռիդ... Փուղ ունիս ջիբումը՞դ, խիլք ունիս գլխումը՞դ, 'զալամ ունիս ձեռումը՞դ. ի՞նչ ունիս, ի՞նչ, ա՛ռ, օղորմելի, վուր գառնի պէս բռնչում իս... Չիս գիդի, վուր գառնի վիրչը 'զասաբխանէն է... Է՛ն է քու բինէն, Պէպո, էն... Գնա պառկի, վուր բօղազդ դուս կտրին... Մի վախենա, մէ դանկի մագիէր տասը դանակ կու լուս ննդնի քիզ համա։

Նստում է սեղանի մօտ աթոռի վրայ եւ մտածում։

ՏԵՍԻԼ Ը

ՆԱ, ԿԷԿԷԼ

ԿԷԿԷԼ, ներս գալով ծախ դռնից։

Էկա՞ր, Պէպո։

ՊԷՊՕ

Էկայ ու գնում իմ. մէ քանի վուխտ մնա՛ս բարով։

ԿԷԿԷԼ

Ո՞ւր իս գնում, ի՞նչս ասում։

ՊԷՊՕ, հեգնօրէն եւ ժպիտն երեսին։

Տաք տիզ, մայինց մինք փէտ չունինք ո՞ւ...

ԿԷԿԷԼ

Չիմ իմանում՝ ի՞նչս ասում։

ՊԷՊՕ, վեր կենալով։

Բիրթն ի՞ն տանում ինձ, Կէկէլ։

ԿԷԿԷԼ, վախեցած։

Ինչի՞։

ՊԷՊՕ

Է՛նէնց, խաթրիչուն։

ԿԷԿԷԼ

Վա՛, Պէպո ջան, ի՞նչ իս ասում։

ՊԷՊՕ

Հանաք չիմ անում, Կէկէլ. մի՛ վախենա, վունցոր ըլի եօլա կէհաք։ Ո՞ւր է դէդէն, տանը չէ։

ԿԷԿԷԼ

Էս սահաթիս գու քայ. համբուրելու գնաց էստի մօտիկ։

ՊԷՊՕ

Խիղճ դէդա...

ԿԷԿԷԼ

Ախար մէ դրուստ խօսի, Պէպո, է՞. բիրթումն ի՞նչ բան ունիս։

ՊԷՊՕ

Վունչիչ... (Դառը ժպիտով։) Շատ դամբ գցելէն կուռդ դաթրեցաւ, կօսէ, գնա՛ հիմի մէ քիչ դնջացի, կօսէ։

ԿԷԿԷԼ

Ա՛խ, Պէպո ջան, ջիգարս մի՛ պատռտի, թաւաթ էրած իմ ու խորված։

ՊԷՊՕ

Հինգ հազար էլ էրվիս ու խորվվիս, ով է հարցնում։ Վճռած բան է, պիտի գնամ բիրթը։

ԿԷԿԷԼ

Ինչի՞, ում խաթիր. ի՞նչ իս արի։

ՊԷՊՕ, դառնօրէն:

Գուղուլթին:

ԿԷԿԷԼ

Դուն, գուղուլթի՞ն: Հէ, չէ, Պէպօ, ասա՝ ի՞նչ բան է, խօ հոքիս դուս էկաւ:

ՊԷՊՕ

Թող դուս գայ, իմն էլ հիդը, ումն ի՞նչ կու պակսի. շատ հարկաւուր է խալխին քու հոքին, եա իմը՞:

ԿԷԿԷԼ, աչքերը սրբելով եւ լացի ձայնով:

Ա՛խ, Պէպօ Ջան, խօ սպանեցիր ինձ:

ՊԷՊՕ

Սպանողը սպանից, 'ես ի՞նչ անիմ:

ԿԷԿԷԼ

Ո՞վ, ախար:

ՊԷՊՕ

Ո՞վ... Ա՛դա Արութինը... (Դառը ծիծաղում է:) Հը՞, հը՞, հը՞...

ԿԷԿԷԼ

Ինչի՞:

ՊԷՊՕ

Աստուած վուչ գիդէ նրա գլուխը... Իմ տանն ինձ անպատիւ արաւ, կօսէ. փուղ բախշեցի ու էրեսիս խփից, կօսէ: Պստի բան չգիդենամ, ԿԷԿԷԼ, մինձ մարթու գլխին դիբչիլը: Ինձ պէս խիղճ օղորմելին համարցակվի էն հանգի աղա մարթու ճակտին իմքին խփէ՞... Հանաք բան է՞... (Դառը ծիծաղով:) Հը՞, հը՞, հը՞... (Ձեռքերը բարձրացնելով:) Ա՛ստուած, Ա՛ստուած...

ԿԷԿԷԼ, մօտենալով եւ փաթաթուելով:

Էտ խօ իմ խաթիր, իմ խաթիր, Պէպօ Ջան. սիւ-

ցիլ էր իմ օրն ու ինձ պէս բայի՛ղուչ քուր չէիր ունեցի: Ի՞նչ էիր ուզում ինձմէն. քիզ ո՞վ էր ասում, վուր էնէնց մինձ մարթուն բէդամաղ անիս: Մայինց էսէնց էր ու էսէնց իմ բանը, էլ ցաւիս վրայ ցաւ ո՞ւր էիր աւելցնում: Ի՞նչ անինք հիմի... դէդէն վուր իմանայ, ի՞նչ կօնէ. դամբլա կու ննգնի խօմ:

Լաց է լինում:

ՊԷՊՕ

Դէդէն շատ ցաւի է դիմցի, էստուրն էլ կու դիմնայ:

ԿԷԿԷԼ, լալով:

Ա՜խ, Ա՛ստուած, ինչի՞ բան-հոքի չիս անում ինձ էստի էւէտ:

Լաց է լինում:

ՊԷՊՕ

Հէրիք է, թէ քու Աստուածը կու սիրիս: Խօ տեսար, վուր լացն էլ վունչիչ չօտկից... (Աղաղակելով:) Է՛ս է Քու դադաստանն, էլի՞, Աստուած... Արութինը թալնէ, Արութինը զրնէ, Արութինը հաչա ուտէ ու մինք տանջվինք... նա խրխնջայ ու մինք ախ քաշինք... նա քէփ անէ ու զոզ անէ ու մինք դառը-դառը լաց ըլինք...

Դուրս է գնում աջ դռնից:

ԿԷԿԷԼ, լաց լինելով:

Պէպօ Ջան, Պէպօ Ջան...

Դուրս է գնում Պէպօի ետեւից:

—∞—

ՏԵՍԻԼ Թ

ԱՐՈՒԹԻՆ, ԳԻՔՕ, երկուսն էլ զվարկով։

ԳԻՔՕ, ներս գալով միջի դռնից։

Ա՛յ, թէ սուտ իմ ասում։

ԱՐՈՒԹԻՆ, հետեւելով։

Աբա՛, աբա՛։

ԳԻՔՕ, առաջ գալով։

Մուլապ, համեցէք նստի, մէ տէրն էլ գայ։

ԱՐՈՒԹԻՆ

Դիպ մէկ է, Գիքօ, մէ տեսնիմ թէ էտ ինչ թուխտ է։

ԳԻՔՕ

Ա՛յ, ինչ թուխտ է, աղա Արութին։ (Ձեռքը գըրպանն է տանում եւ հանում քթախոտի տուփը։) Չէ, էս չէր. ամա դիպ մէկ է. (Քաշում է։) հը՞մ... Ա՞յ, (Պահում է քթախոտի տուփը եւ մուրհակը հանում։) դուն մէ քիչ հիռու կանգնի, աղա Արութին։

Ինքը հեռանում է դէպի տախտը։

ԱՐՈՒԹԻՆ

Վա՛, վախենում իս, վուր չխլիմ. աշխարքն ալան թալան իսօ չէ։

ԳԻՔՕ

Չէ, չէ, աղա Արութին, էտ վունց կօնիս, գանա դուն էտ հանգի մարթ իս. ամա էս թուխտը խիստ փաթէրակաւուր իմքին է։ Ասում իմ ձեռդ չդիբչի։ (Բաց անելով մուրհակը։) Ա՞յ, տիս։ (Հեռուից ցոյց տալով։) Էս է։

ԱՐՈՒԹԻՆ, գլուխը մօտեցնելով։

Աբա՛, աբա՛։

ԳԻՔՕ, մատնացոյց անելով։

Վա՜, այ. չեմի վալիա,*) Արութին Զիմզիմովի։

Զարմանք։ Տեսարան։

ԱՐՈՒԹԻՆ, շփոթուելով եւ կակազելով։

Է՛տ... էտ... (Ձեռքը մեկնելով։) իմ... իմ... ձեռքն է։

ԳԻՔՕ, մօտեցնելով մուրհակը։

Բաս իմն է։

ԱՐՈՒԹԻՆ, ճանաչելով մուրհակը, առանձին։

Էս ինչ 'Երգնուց պատիժ էր... (Ձեռքերը առաջ տանելով։) Մէ լաւ տեսնիմ...

ԳԻՔՕ, մուրհակը հեռացնելով։

Մուլապ, աղա ջան, է։ Ախար էն'դադա վուր ասում էի թէ 'ես վկայ իմ, վուր պարտ իս, սուտ էի ասում. ամա վուր քու օխտէմէն չէկայ, 'ես ինչ անիմ։ (Աղաղակելով։) Գոհանամ Քու դադաստանին, Ա՛ստուած։

ԱՐՈՒԹԻՆ, կամենալով մուրհակը խլել։

Մէ տեսնիմ, ասում իմ...

ԳԻՔՕ, գրպանը դնելով մուրհակը։

Է՞, աղա Արութին, ձեռը վի կալ, քու հօրն օղորմի։ Ասում իմ վուր փաթէրակի թուխտ է, է։ Էս սահաթիս գու քայ Պէպօն, Կակուլին մէ նմուտումը կու գթնէ նրան։ Դուն էստի մուլապ տու, մէ գնամ Ղուշանին իմաց անիմ։

Ճանապարհից յետ նայելով Արութինին, դուրս է գնում ծախ դռնից։

---

*) Վրացերեն է՝ — Իմ պարտքն է։

ՏԵՍԻԼ Ժ

ԱՐՈՒԹԻՆ, մենակ, երկար ժամանակ սառած կանգնած է, յետոյ ուշքի գալով։

Էս հանգի էլ օյի՞ն... Շատ բան է էկի գլուխս, ամա էս թահաբը չէ էլի... Վո՞ւր'ղանց լուս ննգաւ էս անիծած բարաթը... վո՞ւնց լուս ննգաւ... Էրազ է՞... Չէ, վո՞ւր'ղանցի էրազ է... Թէ էրազ է, (Շուրջը նայելով։) էստի ի՞նչ իմ չինում... Էս... Պէպօի տունը ու 'ե՞ս... (Շօշափում է իրան։) ԱրուԹին Զիմզիմովս էստի՞... Չէ, դրուստ ԱստՀու պատիժ է... Չէլաւ, էլի՞... Էն'ղադա բանիրը մարսեցի ու կուժը էս մէկի վրայ է կոտրվում, էլի՞. Էս էր վիրշն, էլի՞... Խալխը վուր իմանայ, ի՞նչ կօսին... էլ ո՞վ կու աւտայ ինձ... ԱգահուԹինը աճկիրս կապից, էլ սիւ ու սիպտակ չը ջոգեցի... Հէնց էս սահաթիս էլ էն'ղադա խալխումն ասի... վուր 'ես վունչիչ պարտ չիմ, ասի... Հիմի գնա՛, սիւցաւ էրեսդ... Ա՛մուԹ քիզ, ԱրուԹին, ա՛մուԹ քիզ. էս վո՞ւնց բերիր բանդ, վո՞ւնց... (Երկար լռուԹիւն։) Չէ, ուրիշ չարա չկայ, վունցոր ըլի պիտի էստի էւէտ ազատիմ բարաթս... Թէգուզ տաս Թուման էլ գլուխ գնամ... Թէգուզ քսան, Թէգուզ հարսուն, Թէգուզ մէկն էրկու... Իմ հա՛խն է, Թո՛ղ ջանս դուս գայ։

Վայր է ընկնում աջ կողմը սեղանի մօտ աԹոռի վրայ։

ՏԵՍԻԼ ԺԱ

ՆԱ, ՊԷՊՕ

ՊԷՊՕ, ներս է գալիս աջ դռնից, առաջին արարուածի հասարակ հագուստով եւ գլխարկը ծածկած։ Տեսնելով ԱրուԹինին, զարմանում է։

Վա՛, դուն էստի՞։

ԱՐՈՒԹԻՆ, գլխարկը վերցնելով դնում է սեղանի վրայ։

Հա՛, հէնց 'ես, ի՞նչ իս արմնում։

ՊԷՊՕ

Գանա դուն ինքդ չիս արմնում, վուր էստի ի՞ս, 'ես վո՞ւնց չարմնամ։ Մէ ասա՛, ի՞նչ քամին է բերի քիզ էսԹէնը, եա ի՞նչ բարի հրիշտակ է մտի սըրտումտ, եա ի՞նչ չար սատանայ բօԹի քիզ դէսը։

ԱՐՈՒԹԻՆ

'Ղօնաղի մօհրաթ չիս գիդացի, Պէպօ։

ՊԷՊՕ

Դուն՝ իմ 'ղօնաղ. էրեսդ խէչը հանէ։ Քիզ վրայ մինձ դուշման չունիմ 'ես աշխրքումը, ու դուն իմ 'ղօնաղ։

ԱՐՈՒԹԻՆ

Նստի՛, հալա հէնց ապրիս։

ՊԷՊՕ

Դուն նստած իս, էլի՞. 'ես էսէնց էլ լաւ իմ։ Մէ ասա՝ ի՞նչ իս ուզում... Թէ ձուզն առնելու իս էկի, եանղլիչ իս, (Դառը ժպիտով։) 'ղադաղա է։

ԱՐՈՒԹԻՆ

Պէպան... ա՛ղի, ախպէր, բարիշինք։

ՊԷՊՕ, ծաղրելով։

Օմքին խօ չէ՞ աղօթի քիզ, ա՛ղա Արութին։

ԱՐՈՒԹԻՆ

Աղօթիլ ին թէ չին աղօթի, 'ես քիզ ասում իմ, ա՛րի բարիշինք։

ՊԷՊՕ

Իմ բարիշիլը ինչի՞ է հարկաւուր, ա՛ղա Արութին. դուն մինձ մարթ, 'ես մէ խիղճ օղորմելի, դուն հարուստ, 'ես ախկատ... (Հեգնօրէն։) Վախենում իս, վուր իմ մագիէր քիզ չղրգին բիրթը՞, թէ՞ ճանիրդ դողում է ինձմէն։

ԱՐՈՒԹԻՆ

Տօ, 'ես ուզում իմ քիզ լաւութին անի։

ՊԷՊՕ

Ի՞նչ ձեռնէմէտ էկաւ, խօ ա՛րիր. փուղ էիր պարտ, հաշա կերար, էկայ տունդ՝ խնդրելու, տանէտ դուս արիր, վիրչը բիրթն էլ իս ղրգիլ տալի, ուրիշ ի՞նչ լաւութին պիտի դուս գայ ձեռնէմէտ, ա՛ղա Արութին։ Էկիլ իս վուր մասխարա գցիս ի՞նձ։ Հէրիք է, հէրիք, պարուն. գնա՛, գնա՛, Աստուն փանդ տու, վուր իմ տանն իս ու իմ օճրրքի տակն իս գթնվում, թէ չէ էս էրած սրտիս վրայ էլ սաղ չէիր պրծնի իմ ձեռնէմէն։ Միտտ է... խօ մի՞տտ է՝ ի՞նչ հանգի դուս արիր ինձ քու տանէմէն... էն արարմունքը քիզ կու սաղ գէր, քի՞զ, ա՛ղա Արութին։ 'Ես քիզ խընդրում իմ, համեցէք, գնա՛, ջա՛փա քաշէ, վի՞կաց, յօրէս կու տանին ինձ, էլ վուխտ չկայ, ուզում իմ մօրս ու քվիրս բարովիմ։

ԱՐՈՒԹԻՆ

Տօ, էտ բանը իմ ձեռին չէ՞։ Էլ չղրգիլ տամ քիզ բիրթը, ուրիշ ի՞նչ իս ուզում։

Պէպօն զարմացած նայում է. իսկ դրսից լսվում է ԿԱԿՈՒԼՈՒ ձայնը՝ էկա՛ւ։

ՏԵՍԻԼ ԺԲ

ՆԵՐԱՆՔ, ԳԻՔՕ, ԿԱԿՈՒԼԻ

ԳԻՔՕ, միջի դռանը, Կակուլուն։

Կորիլ ին, կորիլ. օչով չկան։

ԿԱԿՈՒԼԻ, ներս գալով, Գիքօին։

Տօ, ա՜յ Պէպօն, ի՞նչ իս ասում։

ԱՐՈՒԹԻՆ, տեսնելով Կակուլուն, առանձին։

Է՛լի էս պաժարնին։

ԳԻՔՕ, ներս գալով։

Էս վունց էկար, Պէպան, վուր չտեսայ։ (Արութինին։) Ա՛յ, ա՛ղա Արութին, հիմի կու տամ, (Մատնացոյց անելով Պէպօին։) թէ կօսէ։ Է՛տ դուն, էս սա։

ՊԷՊՕ

Էս ի՞նչ խարար է, չիմ իմանում։

ԿԱԿՈՒԼԻ

Վա՛, ա՛ղա Արութինի մօդ դուն իս խօսում ու միզ իս հարցնում։

ՊԷՊՕ

Սրա ասածը խօ ուրիշ չիմ իմանում։ (Հեգնօրէն։) Էկիլ է՝ բարիշինք, կօսէ։

ԿԱԿՈՒԼԻ, ծաղրելով։

Հա՜... (Գլուխ տալով Արութինին։) Բաս մէ լաւ շնորհակալութիւն անինք։

ԱՐՈՒԹԻՆ, առանձին, շփոթուած։

Մտիկ էս լրփին։

ԿԱԿՈՒԼԻ, Պէպոին։

Տօ, թէ՞ ասում էիր, թէ լաւ մարթ չէ, կօսէ, աղա Արութինը։

ԱՐՈՒԹԻՆ, առանձին։

Անսկա՜մ։

ՊԷՊՕ, ժպտալով։

Ի՞նչ գիդիմ, խճպտանքը զարթիլ է։

ԿԱԿՈՒԼԻ, Պէպոին։

Իժում վո՞ւնց է բարիշում. կէսը տալիս է։ (Մօտենալով Արութինին։) Ե՞ս քու մարթ ասողին... (Բռունցքը բարձրացնելով։) Դէ՛, հոքիտ պահ տու ու սէրթուկթ հանէ։

ՊԷՊՕ

Կակուլի, Կակուլի։

ԳԻՔՕ, Պէպոին։

Տօ, բան-հոքի չանէ։

ԿԱԿՈՒԼԻ, Արութինին, մէկ ձեռքով բռնելով նրա օձիքից։

Ը՜, քու... (Միւս ձեռքով բռունցքը ցոյց տալով։) Դէ՛, գնա հիմի գանգատ արա...

ԱՐՈՒԹԻՆ

Տօ, գժվիլ ես, էյ։

ՊԷՊՕ, հեռացնելով Կակուլուն Արութինից։

Մուլափ, Կակուլի, էտ մարթուութին չէ։

ԱՐՈՒԹԻՆ, շորերը ուղղելով։

Արի՛ ու ձիզպէսներուն լաւութին արա։

ԿԱԿՈՒԼԻ

Լաւութի՞ն... Ի՞նչ պտուղ է՛, դիփ հոքու էդնէն է ման գալի, ա՜յ. գանա չի՞մ գիդի։ Արա բարաթը չէր լուս ննգի, տեսնիմ թէ վո՞ւնց էր լաւութին անում։

ՊԷՊՕ

Ի՞նչ բարաթ։

ԿԱԿՈՒԼԻ

Վա՛, բաս ջեր չիս գիդի՞. ա՛յ, էս աղա պարնի բարաթը։ (Գիրօին։) Տօ, բի՛ է՛. (Պէպոին։) Էս սհաթիս ճամփին վուր իմացաւ, ռանգ ու ռունգը գնաց խղճինը... Ուզում էի էնդի էւէտ սրա ժամը դուս բերի, ամա վուխտը չէր. քիզ էի ուզում ուրախացնի ջեր... (Գիրօին։) Դէ, չուստ արա, Գիքօ ջան, է՛։

ԳԻՔՕ, գրպանից հանելով մուրճակը։

Մուլափ, մուլափ, տիրուչը տամ։

Մուրճակը մօտեցնում է Պէպոին։

ԿԱԿՈՒԼԻ, խլելով Գիքօի ձեռքից եւ տալով Պէպոին։

Վո՞ւնց է, վո՞ւնց, լօթին։

ՊԷՊՕ, տնտղելով մուրճակը, հետզհետէ զարմանում է։

Տեսարան։

Էս էրազ է՞...

ԿԱԿՈՒԼԻ

Էրազ ու կէս է։

ԳԻՔՕ

Ղուրթ վուր էրազ, Պէպօ ջան։ Չիս գիդի թէ...

ԱՐՈՒԹԻՆ, առանձին։

Էս՝ղադա էլ խայտառակութի՞ն։

ԿԱԿՈՒԼԻ, մատնացոյց անելով Գիքօին։

Սրան թէ խօսեցրիր, Պէպօ, օխտը դիվի հէքիաթի վրայ էրգար է էտ բարաթի առակը։

ՊԷՊՕ

Ախար էս վուր'զանց լուս ննգաւ։

ԳԻՔՕ, նստելով տախտի վրայ եւ պատրաստուելով պատմելու։

Ա՛յ, Պէպան Ջան, վունց էր...

ԿԱԿՈՒԼԻ, Գիքօի բերանը ձեռքով ծածկում է։

Սու, սու, դուն սուս, Գիքօ Ջան... (Պէպօին։) Էտ վունցոր լուս ննգաւ, իժում կօսինք, ամա դուն էտ անաստձուն թամաշա արա։

ՊԷՊՕ

Սիրաս իմանում էր ախար, Է՜...

Տնտղում է մուրհակը։

ԳԻՔՕ

Գիղէ Աստուձ, վուր 'ես միղ չունիմ, Պէպօ Ջան...

Կակուլին ձեռքով իր բերանը ծածկելով, յորդորում է Գիքօին լռել։

ՊԷՊՕ, նայում է ԱրուԹինին եւ մուրհակին, յետոյ գլխարկը վերցնում եւ աղաղակում։

Գոհանա՜մ Քի, Տէ՜ր. դիփունի դադաստանի վրայ Քու դադաստանն է էլի զուրԹ... (Գլխարկը ծածկում է եւ կրկին նայում ԱրուԹինին։ Երկար լռուԹիւն։ Տեսարան։ Ծանր մօտենում է ԱրուԹինին եւ մուրհակը ցոյց տալիս։) Էս կու ճանչնա՞ս, աղա ԱրուԹին... (Երկար եւ լուռ նայելով երեսին, գլուխը շարժում է։) Հիմի իմ իմանում քու էստի գալը... Լաիղ արիր, հա՜... Թէ՞ կօսէ վունչիչ պարտ չիմ, Թէ՞ վուր օրԹում հաւատ արիր, Թէ՞

վուր վուրԹկերանցով օրԹում կերար... Է՛տ է քու օրԹումն, էլի՜, էտէնց իս ամեն օր օրԹում ուտում, էլի՜. էտով իս աշխըքին խափում, էլի՜, էտ օրԹումներով իս մօդ արի էտ'զադա փուղն, էլի՜... Ա՛յ, խուռ՞վ կենայ քիզ քու օրԹումնիրը... Ամեն մէ քու օրԹումը օրԹունք կտրվի Ջանումտ ու Ջանդ ծակծըկվի, վուր հոքիտ էգէբա 'Երգնքի լուս տեսնէ... (Մօտենալով։) Զէ՛, չիս ամանչում. խճպտանքը խօ դարդակ քամի է քիզ համա. (Մուրհակը նորից ցոյց տալով։) էս ի՞նչ է, ի՞նչ, էստուրն ի՞նչ կօսիս։ Էստումէն էլ չիս ամանչում, էս քու կոտրած ձեռով չիս գրի՞։ Ասա՛ չէ, էլի՜, ասա՛. քիզ համա խօ հաշա ուտիլը հիշտ է... Ա՛յ, գեղի՞նը մանիս էտ քու պատվական շուրերով։

ԿԱԿՈՒԼԻ, գլխարկը վեր առնելով եւ բացականչելով։

Հա՜-Ջան, հա՜-Ջան, աղա ԱրուԹին... (Գլխարկը նորից ծածկելով եւ ձայնը փոխելով։) Թօբա՛, Թէ 'ես ուզենամ քու տիղն ըլիմ։

ԳԻՔՕ

Էս Ջուշանն ի՞նչ էլաւ։

Գլուխը շարժելով դուրս է գնում ձախ դռնից։

ՏԵՍԻԼ ԺԳ

ՆՐԱՆՔ, առանց ԳԻՔՕԻ

ԱՐՈՒԹԻՆ, սաստիկ շուարուած։

Տօ, ի՞նչ էք սարսաղ-սարսաղ դուս տալի, վուր միտս էր էլի, խօ կու տէի, էլի՜...

ԿԱԿՈՒԼԻ

Հը՜մ...

ՊԷՊՕ

Միտդ չէ՞ր... խի՜ղճ օղորմելի։ Եարաբ վո՞ւնց իս մէ թիքայ հաց ճարում ուտելու։ Ո՞ւմն իս խափում, ո՜ւմը... էս սահաթիս դատամէրի մօդ հաշա կերար, վուր քու օրումն էլ ինձ վունչիչ չիս պարտեցի, վուր սուտ շառիր իմ մօգոնում 'ես քիզ վրայ, էս սահաթիս ձեռք քաշեցիր էստու թխտիրը ու հիմի միտդ չէ՞ր... ու հիմի բարիշի՞նք... էս՝ղադա վուխտ չարչըրեցիր, էս՝ղադա գլուխտ անիծիլ տվիր ու հիմի լաւ մարթացար մէրա՜շ։ Վախենում իս, հա՜. վախենում իս վուր աշխարքը չիմանայ քու 'ղալթարանդուլթինը, հա՜. վախենում իս, վուր դատամէրի մօդ էրեսդ չսիւնայ, հա՜... Քու մակումը, թող միզ մօդ սիւնայ մենակ, ինչ հաջաթ, մինք անմիզ օմքնիր ինք, ով ինչ կու իմանայ. օղոնդ խալխը չիմանայ, օղոնդ քու ննդրաիքը չիմանան... (Ձայնը փոխելով։) Գնա՜, գնա՜, ասում իմ։

Կակուլին սպառնալի կերպով շարժում է գլուխը։

ԱՐՈՒԹԻՆ

Խօ պրծա՞ր, ախպէր, ինչ ասելու ունէիր, խօ ասիր, սիրտդ խօ յլի՞դ էկաւ։ Հիմի մէ ինձ լսէ. 'ես քիզ ասում իմ՝ փուղիրտ ա՜ռ, բարաթս իս տու ու քու բիրթը մօշլա անիմ էս սհաթիս։

ՊԷՊՕ

Կէհամ բիրթը, կէհամ, 'ես քու օղորմուլթինը չիմ ուզի ու էս փուղիրը առանց քու ասելու էլ կու առնիմ։

ԱՐՈՒԹԻՆ

Գժուլթին մի՛ անի, Պէպան։ (Ձեռքը ծոցը տանելով։) Ա՜ռ էս փուղիրտ, ասում իմ։ (Պէպօն գլուխը շարժում է։) Ա՜ռ, մէ իմքին էլ աւելցնիմ. հը՜, ինչ 'ղադա... մէ հինգ թուման աւելցնիմ... տա՜ս... քսա՜ն...

ՊԷՊՕ, որ արհամարհանքով նայում էր ԱրուԹինին, դիմում է Կակուլուն։

Մտիկ իս անո՜ւմ, Կակուլի, մտիկ իս անում սրա՜ն. ինչրու հիմի գլուխկն էլ չէր տալի ու հիմի աւելցնում էլ է... Է՛սէնց ին, ա՛յ, ղրի՜փ էսէնց ին. քանի օչով չի գիդի, հախն էլ ին կտրում ու 'եփոր վախենում ին՝ բանն աշքարանայ, էսէնց ին ժաժ գալի, ա՛յ, էսէնց, վուր անուններուն չկոտրվի միթամ։

ԿԱԿՈՒԼԻ, ցածր, Պէպօին։

Տօ՛, ա՜ռ, ա՜ճկը հանէ, ու դրա ջիգրը (Բռունցքը ցույց տալով։) 'ես գիդիմ։

ՊԷՊՕ, շարունակելով, ԱրուԹինին։

'Ես քու բախչիչը չիմ ուզում, ա՜ղա ԱրուԹին, տար ա՜ճկդ դի. ամա ա՜ճկդ կու հանիմ ու գլուխկը, վուրդիոր ինձ էս սահաթիս ստեցիր, էնդի կու առնիմ, էնդի. Թող դիփունքը ճանչնենան՝ ինչ մարթ էլ իս, Թող դիփունքն իմանան քու արարմունքը։ Էստու համա բիրթը կի չէ, Թէգուզ հուրումը կու նստիմ, հուրումը։

ԿԱԿՈՒԼԻ, Պէպօին։

Ը՜, 'ես քու խիլքին ինչ ասիմ։

ԱՐՈՒԹԻՆ

Բռնէ՛, իսուն Թուման աւելցնիմ։

ԿԱԿՈՒԼԻ, մօտենալով ԱրուԹինին։

Բի՛, 'ես բարիշեցնիմ։

ՊԷՊՕ, Կակուլուն յետ մղելով։

Քու բան չէ, Կակուլի։

ԿԱԿՈՒԼԻ, յետ դնալով։

Ա՛յ, սարսաղ։

ՏԵՍԻԼ ԺԴ

ՆՐԱՆՔ, ՇՈՒՇԱՆ, ԳԻՔՕ

ԶՈՒԶԱՆ, դաթիքայով միջի դռան շեմքում, Գիքօին, որ հետեւում է նրան։

Վո՛յ, քոռանամ 'ես, դուրթ իս ասում, Գիքօ... (Առաջ դալով եւ դաթիքան վերցնելով։) Վո՛ւրդի է, վո՛ւրդի, միր հոքէհանը... Սա է՞...

ՊԷՊՕ

Սա՛, սա դէդի, ա՛յ, միր բախտաւորողը։

ԶՈՒԶԱՆ, ԱրուԹինին, շտապով։

Ա՛յ, գեղինը պատուվի ու քիզ դէվէր տանէ։ Ի՞նչ իս ուզում միզմէն, ի՞նչ... Փուղէներուս հաշա կերաբ, ախչկաս բօղաղը դուս կտրեցիր ու հիմի Պէպօիս էլ բիրթն իս ղրգիլ տալի՞. ջիգր իս մտի միզ հիդ, ուզում իս վիր ջնջի մի՞զ...

ԱՐՈՒԹԻՆ, առանձին։

Կարկուտ է անիծածը։

ԶՈՒԶԱՆ, շարունակելով։

Ա՛յ, վիր ջնջվի քու անումը, քանդվի ու բրիչակ բլի տուն ու տիղդ. քու անամուԹ կնդայ սրտումը ննդնի էն կրակը, ինչ կրակ միր սիրաը դցեցիր։

ԿԱԿՈՒԼԻ, առանձին եւ կիսաձայն։

Ամի՞ն։

ՊԷՊՕ

Դէդի, դէդի...

Կէկէլը ներս մտնելով աջ դռնից, անկիւնումը լուռ լաց է լինում։

ՏԵՍԻԼ ԺԵ

ՆՐԱՆՔ, ԿԷԿԷԼ

ԱՐՈՒԹԻՆ, Շուշանին։

Խ՛ելքի արի, խ՛ելքի, ինչ՞ր իս ասում, դէդի։

ԶՈՒԶԱՆ, շարունակելով։

Ո՞ւր է. սիւցրիք էրեսը՞. ո՞ւր է էն սիւ ու մուԹ բարաԹը։ Հիմի էլ կօսիս, վուր վունչիչ պարտ չիս միզ։

ԱՐՈՒԹԻՆ

Պարտ իմ, պարտ իմ ու տալիս իմ, ուրիշ ի՞նչ իք ուզում։

ԶՈՒԶԱՆ

Բաս բիրթն էլ ո՞ւր իս ղրգիլ տալի։

ԱՐՈՒԹԻՆ

Բիրթն էլ չղրգիլ տամ, փուղն էլ տամ, մէ իմքին էլ աւելցնիմ. ամա վուր չէ բարիշում, 'ես ի՞նչ անիմ։

Շուշանը զարմացած նայում է։

ՊԷՊՕ

Հիմի բարիշի՞նք, հիմի՞... (Մօտենալով Կէկէլին։)

Իժում սրան ինչ իս ասում... (Բռնում է Կէկէլի ձեռքը եւ առաջ բերում։) սրա մօդ վունց իս բարիշում։ Սաղ-սաղ գերեզմանը դրիր, օրն ու ումբրը խաւրեցրիր, կինքը հառամ արիր, վունց իս բարիշում սրա հիդ, վունց... Վունց իս յիդ տալի սրան, ինչոր խլեցիր սրամէն, վունց։ Քու վուխչ հարստութինն էլ չի կանա լաւցնի էն եարէն, ինչ եարա բաց արիր դուն սրա սրտումը... Գնա, գնա. էլ մինք բարիշելու վունչիչ չունինք։ Գնա, քանի սաղ իս աշխրքումը, սրա արտըսունքնիրը միտդ բի, վուր էգէբա էլ մէկէլներուն չանիս, ինչ սրան արիր։

ԿԷԿԷԼ, աշխատելով ազատել ձեռքը։

Թող, Պէպօ ջան, թող... ինրան սիւցու իր բարաթը։

Պէպօն Թողնում է նրան։

ԳԻՔՕ

Տօ, հադիր բարիշի՞ս։

ԿԱԿՈՒԼԻ, Շուշանին։

Ասա, դէդի, վուր բարիշի, հադիր աւել է տալի։

ՁՈՒՁԱՆ

Իր ամկը դնէ աւելին, թաք Պէպօիս ձեռը չտայ։

ԿԷԿԷԼ

Բարիշի, Պէպօ ջան, բարիշի։

ԱՐՈՒԹԻՆ

Ա՛րի կոտրվի, Պէպան, բարիշինք։

ՊԷՊՕ

Ա՛րի բարիշինք, արի. արի գնանք, վուրդիոր ինձ էս սահաթիս ստեցիր, արի մէկ էնդի էս բարաթը չանց տամ, մէ էրեայ վուր սուտը 'ես չիմ, թէ-

գուզ գլխկէմէն էլ մէ իմքին քիզ փէշքաշ։ Ա՛րի, էլի, արի։

ՁՈՒՁԱՆ

Գնա, գնա, վունցոր միր էրեսը սիւցրիլ իս, թող հիմի քու էրեսը սիւնայ։

ՊԷՊՕ

Ա՛րի, էլի։

ԱՐՈՒԹԻՆ

Էտ վուր ուզենամ, խօ էս'դադա էլ ադանչաք չիմ անի։

ՊԷՊՕ

Ը՞ը, գուզ աւաղակ։

ԿԱԿՈՒԼԻ, առանձին, կիսաձայն եւ կրծքին խփելով։

Վոյ մէ... (Միջի դուռը դրսից բաղխում են։ Լռութիւն։ Մօտենալով դռանը եւ փորը ինչ բաց անելով, որպէս թէ մէկի հետ խօսում է։) Հա, էստի է։ (Առաջ գալով, Պէպօին։) Տօ, գժվիլ ես, քուրթահ արա, պրիստավն է։

ԿԷԿԷԼ, ՊԷՊՕ, ՁՈՒՁԱՆ, միասին։

Պրիստավը՞։

ԳԻՔՕ

Պրիստավը՞։

Տեսարան։

ԱՐՈՒԹԻՆ

Ի՛ս տու բարաթս, Պէպան, թէ չէ բիրթն ին տանում։

ՊԷՊՕ

Հաջաթ չէ, կէհամ բիրթը, կու նստիմ. էնդի խօ չիմ մեռնի, մէ օր կու ազատվիմ ախաբ, էլի՞,

վաղէն հիռու չէ։ Շատին իս խափի էսէնց, շատի գլխին իս օյին էկի էսէնց, շատի բօղազն իս դուս կարի էսէնց, ու 'ես Պէպօն չիմ ըլի, թէ դիփունանց ջիգրը չիմ հանի։ Սաղ աշխրքումը էրեսդ մուր կու չինիմ։ Մնաս բարով, դէդի. մի լաց ըլի, Կէկէլ, Աստուած օղորմած է, խղճի ճակատին էսէնց է գրած։

ԱՐՈՒԹԻՆ, սաստիկ շփոթուած։

Ի՞նչ անիմ հիմի։

ԿԷԿԷԼ, փաթաթուելով Պէպօին։

Մի գնա, Պէպօ ջան, մի գնա։

ՁՈՒՉԱՆ, Պէպօին միւս կողմից։

Ի՞նչ իս անում, Պէպօ, ի՞րան սիւցրու էտ սիւ ու մութ բարաթը։

ՊԷՊՕ

Իրան տամ, վուր սրա մասխարէն դառնամ... վուր խալխի աճկումը սուտը 'ես էրևամ, զուրթը սա... բիրթի ահու գլուխս ծախիմ... Չէ, դէդի, էս բարաթը Աստուած թուր է դէվէր ղրգի ինձ համա... էստով պիտի կարիմ 'ես սրա գլուխը... Քանի քի պէսնիրն ին էրվում սրա ձեռնէմէն, քանի (Մատնացոյց անելով Կէկէլին։) սրա պէսնիրն ին լաց ըլում, քանի ինձ պէսնիրն ին տանջվում... Մէկն էլ է չիմաց անէ աշխրքին սրա արարմունքը՞, մէկն էլ է հարայի չկանենայ տա, վուր էս մարթը, վուրին դիփունքը գլուխ ին տալի, դիփունքը յարգում ին ու պատվում ին, դիփունքը մինձացնում ու 'Երգինք բացրացնում... սա էն մարթն է, վուրի համա վունչիչ բան սուրփ չկայ աշխրքումը... Հիմի լաց ըլէք, ինչ'ղադա գուզիք... Խղճի լացը հալրաթ էնդուր է ստիղծի Աստուած, վուր հարուստի արարմունքը լվացվի։ (Դուռը կրկին բաղխում են։) Մնաք բարով... (Գնալով, Գիրօին ու Կակուլուն։) Սրանցը մտիկ տուէք։

Դուրս է գնում միջի դռնից։

ՏԵՍԻԼ ԺԶ

ՆՐԱՆՔ, առանց ՊԷՊՕԻ

ՁՈՒՉԱՆ, լաց լինելով Պէպօի ետեւից։

Պէպօ, Պէ՞պօ...

ԿԷԿԷԼ, նոյնպէս եւ նոյն միջոցին։

Պէպօ Ջան, Պէպօ Ջա՞ն...

Վայր է ընկնում տախտի վրայ, գլուխը ժողովրդի կողմը, եւ երեսը ծածկելով մութաքայի մէջ, լաց է լինում. մնում է անշարժ մինչեւ վերջը։

ԱՐՈՒԹԻՆ, սեղանի մօտ կանգնած, երկու ձեռքով գլխին խփելով։

Էս ի՞նչ բան էկաւ գլխիս։

Նոյնպէս մնում է անշարժ։

ՁՈՒՉԱՆ, լալով, ԱրուԹինին։

'Երգնային Թաքաւուրն անէ քու դադաստանը...

Դուրս է վազում Պէպօի ետեւից։

—∞—

ՏԵՍԻԼ ԺԷ

ՆՐԱՆՔ, առանց ՇՈՒՇԱՆԻ

ԳԻՔՕ, Արութինին։

Էս էիր ուզում, էլի՜, հէր օխնած։ (Մօտենալով Կէկէլին։) Մի լաց ըլի, Կէկէլ ջան, մի լաց ըլի, Աստուած օղորմած է։

Գլուխը քարշ գցած դէպի Կէկէլը, նմանապէս մնում է անշարժ։

ԿԱԿՈՒԼԻ, մօտենալով Արութինին, ձախ ձեռքը կողքին դրած, իսկ աջը վայր Թողած։

Հիմի, աղա Արութին, մնացինք 'ես ու դո՞ւն...

Մնում են անշարժ։ Տեսարան։

ՎԵՐՋ

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ

[Նրէ՝ 34]

փուղի գլուխը, նրա մօգօնողին էլ ինչ ասիմ։

ԳԻՔՕ

Ա՛խ, Պէպօ, վուրթի, իմ դարդն էլ է ինձ հերիք. բարէմց սպանէ, պրծնիմ, դնչանամ։

ՊԷՊՕ

Աբա էտ խօսկ է վուր դուն իս ասում, Գիքո՜... Տեսնում իս սաղ օճոռքը գլխիս քանդվում է, էլ ինչ իս ցաւիս վրայ նուր ցաւ աւելցնում... Մէ իմ դարդն էլ իմացի, հէր օխնած, է։

ԳԻՔՕ, խորը յոգւոց հանելով։

Ը՜հմ... Ձեռքով սրբում է աչքերը։

ԿԱԿՈՒԼԻ

Մուլափ, մէ բան ասիմ, 'ես, Պէպօ. [Ե՝ այլ։]

[Նրէ՝ 37]

ՇՈՒՇԱՆ, ՊԷՊՕ

ՊԷՊՕ

Գիքօն ինչ էլաւ։

ՁՈՒՁԱՆ

Էստի է։

ՊԷՊՕ, զղջալով։

Բէդամաղ արի...

ՁՈՒՁԱՆ, առանձին։

Ի՛հ... (Պէպօին։) Տօ, ախար ջեր մէ թիքայ [Ե՝ այլ։]

[Նրէ՝ 43]

էս Դօնու զուրգիէլ. էս կարօբկումը ժիտկա, մէ

Ջուխտ վիկալայ, վունցոր ասիր. խիստ թաղէն է, նուր բաց արին. օրթում հաւատ արաւ, վուր էստու վրայ լաւը չի ըլի կոսէ. էս նէմէնցու [Ե- այլ։]

[Երէ» 45]

ԷՓԷՄԻԱՑ

Ու դուն էլ էնէնց հաքի, վուր դիփունանց աճկը վրէն մնայ. սօսանի ատլաս ախալուխը, սիպտա չէրքէզկէն, մաջէքը կարքով յիդ կու ծալիս, էրծըթէ քամարը...

ՍԱՄՍՕՆ, խօսքը կտրելով։

Խանջալն էլ կապիմ, ախչիկ պարուն... [Ե- այլ։]

[Երէ» 46]

ԷՓԷՄԻԱՑ

... Մէ խօսկով՝ խտակ, կարքի, քաղաքավարի տուն ու դուս կոնիս... (Առանձին, կիսածայն։) Թող տեսնին ու ճըխկըվին... (Սամսօնին։) Մէկէլ լաքիէրու աբով չթողնիս, փարվընի պէս ման դու քաս [Ե- այլ։]

[Երէ» 60]

ԱՐՈՒԹԻՆ

Լաւ է, լաւ, էս մէկը բախչէ, 'ես կու խրատիմ իրան։ (Առանձին։) Բախտաւուր մարթ իմ, 'ես ու իմ Աստուձը... (Գնալով ձեռքերը ետեւը դարսած եւ համրիչը ձեռքին, կէս ճանապարհից կիսածայն [Ե- այլ։]

[Երէ» 65]

ՊԷՊՕ

Բաս Գիքօն ուր է ասում. խօ գիդիս՝ հալալ մարթ է։

ԱՐՈՒԹԻՆ

Մէլամ, ասում է, թավիսի կուդի [Ե- այլ։]

[Երէ» 71]

ԷՓԷՄԻԱՑ

Գիժ է էն մարթը, թէ էս ինչ խաբար է... Էլախտ էլ էնէնց վախեցրուց։

ԱՐՈՒԹԻՆ, փողերը ծոցը դնելով։ [Ե- այլ։]

[Երէ» 73]

Մէ ուրի, մէ ուրի, Ա'ստուշկա ջան, տիս թէ՝ ինչ հալիլէք է, ինչ ամնտիկա, նէժնի հալիլէք... [Ե- այլ։]

[Երէ» 87]

ու սուքը իմանում էի, սիրտս կրակ էր ննգնում...

ՁՈՒՁԱՆ

Ախար էնդադա վուր հարց ու փուրց էլինք անում, մէ օր վունց չկոտրվեցար, օխնած հոքի... Փարազի ասինք՝ անդէրձը կապում էր քիզ էն գլխէն, իժում էլ է մէ խօսկ մայինց կոսէիր, է։

ԳԻՔՕ

Է՜, Ձուշան... Քանի ջէր ուզում էի բաց անիմ էս բանը, ամա իմ ահու վունչիչ չէի [Ե- այլ։]

[Երէ» 92]

հոքումս կու նստեցնիմ քիզ յօրէսի դէնը, իմ հէրն իս դուն հիմի...

ԳԻՔՕ

Իմ տարսը դառնաս, վուրթի։

ԿԱԿՈՒԼԻ

Դէ, վիկաց, էլ մի ուշացնի... [Ե- այլ։]

[Երէ» 93]

... Դուն փրկէ ու ազատէ իմ Պէպօին։ (Նահալու տակից շտապով հանում է դաթիքան եւ բաց անելով գնում է ու կանչում։) Կէկէլ... (Կէկէլը, կարը ձեռքին, ներս է

2337

մտնում աջ դռնից։) Մէ արի, հէնց ապրիս, էսթի դռնիրը կոխպէ, համբուրելու իմ գնում էստի դէ-մուդէմը. չուստ գու քամ...

Շտապով դուրս է գնում ձախ դռնից. Կէկէլը մի վայրկեան կանգ առնելով, հետեւում է Շուշանին։ ՏԵՍԻԼ Է [Ե- ոյնն։]

[Երէս 105]

... Ուզում էի էնդի էւէտ սրա ժամը դուս բերի, ամա վուխտը չէր. քու կուռն էին շտապում... (Դիքօին։) Դէ, չուստ արա, Դիքօ Ջան, է։ [Ե- ոյնն։]

[Երէս 106]

ԴԻՔՕ

Դիդէ Աստուձ, վուր 'ես միդ չունիմ, Պէպօ Ջան...

Կակուլին ձեռքով իր բերանը ծածկելով յորդորում է Դիքօին լռել։

ՊԷՊՕ

Իմ բարի հրիշտաքն իս դուն էս սահաթիս, Դիքօ Ջան, ինչ ասում...

Նայում է Արութինին, որ գտնվում է սարսափելի դրութեան մէջ։

ԴԻՔՕ, նոյն միջոցին, ցածր ձայնով։

Բարի հրիշտաքն ըլի քու քամագը, վուրթի։

ՊԷՊՕ, հայեացքը դարձնելով Արութինից մուրհակի վրայ, վերցնում է գլխարկը եւ դէպի Երկինք աղաղակում։

Գոհանամ Քի, ՏԷՐ. դիփունի դաղաստանի վրայ Քու դաղաստանն է էլի դուրթ... [Ե- ոյնն։]

[Երէս 114]

դիփունքը մինձացնում, փառաւորում ու 'Երգինք բացրացնում... սա էն մարթն է, վուրի [Ե- ոյնն։]

ՆԿԱՏՈՒԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երէս։	Տող։	Տպուած է։	Պէտք է։
III	7 վերեւից	անուանում՝ են	անուանում են՝
3	2 «	Էս օր	Էսօր
7	11 ներքեւից	ըա, հրա՜...	ըա հրա՜...
8	7 վերեւից	Տնդղելով	Տնտղելով
«	16 «	«	«
11	6 ներքեւից	«	«
12	« «	«	«
13	7 վերեւից	(Դցում է	(Հեռուից գցում է
20	2 «	Էս օր	Էսօր
25	6 «	բաղլիան»	բաղլիան
27	« ներքեւից	քի՞գ	քի՞գ
28	3 վերեւից	զուշը	'զուշը
30	9 «	յե-	ե-
31	6 «	կանանչի	կանաչի
«	9 «	տնդղելով	տնտղելով
34	4 ներքեւից	սիւ սրտովն	սիւսրտովն
39	5 վերեւից	արասունք	արտրսունք
«	6 «	«	«
40	1 ներքեւից	զամբիւղը	զամբիւղը,
«	9 «	ՏԵՍԻԼ Ա	ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ
41	« «	Տնդղելով	Տնտղելով
43	4 վերեւից	կարօրկերումը	կարօրկումը
«	6 «	երկու	էրկու

Եր է ս։	Տող։	Տպրուած է։	Պէտք է։
56	16 վերեւից	տխնում	տեսնում
59	7 ներքեւից	առանձին	առանձին,
60	12 վերեւից	էս	էտ
77	3 ներքեւից	կինծումը	կինծումը
78	2 «	ծախ	աչ
81	6 վերեւից	մարդ	մարթ
«	11 «	Ը՛հը՛հը՛հը՛...	Ը՛հ...
86	14 «	սի փուղ	սիփուղ
«	15 «	սի փուղն	սիփուղն
88	8 ներքեւից	սի փուղերու	սիփուղերու
94	4 վերեւից	ձեռիդ	ձեռիտ
95	12 «	մոտիկ	մոդիկ
105	11 ներքեւից	խլելով	մուրհակը խլելով
108	3 «	էս	էտ

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱԽՍՀ — СССР
им. А. Мисинкиева
Ա. ՄԻՍԻՆԿԻԵՎԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԱԾՆԵՐԸ

	Ռ.	Կ.
ԳԻՇԻՐՎԱՆ ՍԱԲԸԸ ԽԷՐ Է, կատակերգութիւն մէկ արարուածով, երկրորդ տպագրութիւն, ուղղած .	—	30
ԽԱԹԱԲԱԼԱ, կոմեդիա չորս արարուածով	—	50
ՕՄԿԱՆ ՊԵՏՐՈՎԻՉՆ ԷՆ ԿԻՆԲՈՒՄԸ, կատակերգութիւն մէկ արարուածով	—	30
ԷԼԻ ՄԷԿ ԶՈՀ, կոմեդիա հինգ արարուածով . . .	1	—
ՊԷՊՕ, կոմեդիա երեք արարուածով, երկրորդ տպագրութիւն, ուղղած	—	50
ՔԱՆԴԱԾ ՕՋԱԽ, կոմեդիա երեք արարուածով . . .	—	50
ԱՄՈՒՍԻՆՆԵՐ, կոմեդիա հինգ արարուածով, երկրորդ տպագրութիւն, ուղղած	1	—

Վաճառվում են Թիֆլիզում՝ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ եւ ԿՈՎԿԱՍԵԱՆ գրավաճառանոցներում։

«Ազգային գրադարան»
NL0362968

56308